



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4986 4987
4988

2
L-85

FB 2001

ԱՐՀԵՍ

ՔԱՂՅՐԱԿԻԵՒԻՔ ՇԻՆԵԼՈՅ

Ա. ՀԱՏՈՐ

j o r k a b u g

ՅՈՒԱՆԵՍ ՅԱԿՈԲ ՐԱՄԻՐՈՅԵԱՆ
ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ



1861

ԹԻՖԼԻԶ

Ի ՀԱՅ ՏՊԱՐԱՆԻ Գ. ՄԵԼքՈՒՄԵԱՆՑ
ԵԽ Հ. ԵՆՁԻԱՃԵԱՆՑ:



669. 68

- 1

ԱՐՀԵՍՏ

ՔՈՂՅԲԱԿԻԵՆԻՔ ՇԻՆԵԼՈՅ

Ա. ՀԱՅՈՐ

ՅՈՒԽՆԵԱՅ

ՅՈՒԽՆԵԱՅ ՅՈՒԿՈՅ ԱՄԵՐՈՅԵԱՅ

ՄԱՄԻԿՈՆԵԱՅ

1861

ԹԻՖԼԻՑ

53436-шк

НЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ.
Тифлисъ 1го Июля, 1861 года.

Цензоръ И. Кайтмазовъ.



10945-57
q.

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հասարակաբար, գրեթէ, ամենայն մարդիկ հետաքրքրացրութիւն կամ բաղձանք ունին սովորելու կամ գիտենալու ևս առաւել այն բաննը, որոնք որ կենաւական օգուտ և զուարձութիւն են պատճառում, զօր օրինակ, բժշկութիւն կամ գեղորայք գիտենալ երաժշտութիւն կամ երգեցողութիւն, երկրագործութիւն կամ գննէ ծաղիկներ հասցնել կամ պահել մանաւանդ անտեսական շատ հարկաւոր ամէն աեսակ բաներն զիտենալ և այլն : Այս վերջինն ևս շատ ճիւղերու է բաժանուում : Այս մարդկային ընկերութեանց աւելի հարկաւոր բաղձանքներիցն է յառաջ եկած, թէ հիմ աղգաց և թէ ներկայիս Եւրոպացւոց քաղաքականութիւններն և այլ յառաջադիմութիւններն կենաց դիւրութեան մասին :

Մենք տեսնելով ազգիս այժմեան տնտեսական դրութեան դեռ ևս պակասութիւնները, սլարտ համարեցինք ըստ կարողութեան այս անգամ հրատարակել այս Քաղցրեղինեաց կամ անուշեղիներու (մուրապաներ) օրինաւոր կարգով բաղադրութիւններ ձևացնող գըքոյկը, ցոյց տալով միանգամ այն, թէ ի՞նչ բաղադրութիւն յարմար է ծաղիկներու, արմատներու և առաւելապէս մըրգնեղիններու, շաքարի և մեղսի հետ, յուսալով՝ որ անտեսաւթիւն սիրող անձանց համար մի հաճոյական

գործ կլինի այս մեր աշխատանքը : Մանաւանդ զի քաղց
բեղններ եվելու և պահելու սովորութիւնը դրեթէ ա-
մենայն ազգաց և ամենայն կարգի անձանց մէջ շատ հին
ժամանակից է սկսած, որ այժմայս Եւրոպացիք այս ևս
կատարելագործել են : Այնք աւելի հետեւել ենք այս
առ ժամանակի դիւրին ձեռնարկութիւններին և խոս-
տանում չենք, որ եթէ այս մեր աշխատասիրութիւնն
գործադրութիւն ստանայ մեր ազգի մէջ, այնուհետեւ
կհրատարակենք և սրա երկրորդ հատորը, որ է առ հասա-
բակ քաղցրեղեն ըմուելեքների վերայ :

ԵՍ.Ք.Ս.Ր ՊԱ.ՐՁԵՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՄՍ.Ք.ԲԵԼՈՒ ԽԵՐՊԸ

Փաղցրաւենի (մուրասպայ) եփելու համար ամենից առաջ հարկաւոր է իմանալ շաքար պարզեցնելու կերպը, որ ուրիշ բառով ասուում է շաքար կորել: Եւ ահա այսպէս պէտք է կորել շաքարը :

Երեք կամ չորս գրուանքայ (մէկ հոլսա) շաքարի համար առ մի հատ նորոդ ձուի սպիտակուցը, զիր քաղցրաւենու պղնձի մէջ, լից նրա վերայ մի կամ մի և կէս շիշ (բութիլ, բուքալ) սառն և պարզ ջուր բարձր բանած և բարակութեամբ հոսեցնելով, միւս ձեռքովդ կամ մաքուր աւելով հարէ (զարկել) շուտ շուտ այդ սպիտակուցը մինչև փրփրի սասպնի նման, ապա առաջուց կոտրատծ ձեռնաչափ կամ աւելի մանր շաքարդ և կամ շաքարի փոշին լից այս հարած ձուիդ պղնձի մէջ, կրկին այնքան սառը ջուր լից վըե՞ն, մինչև շաքարի երեսը ծածկելուն մօտենայ, զի՞ր կրակին և բնաւ մի խառնիլ: Երբ որ սկսեց կողքերիցը եփը բարձրանալ և բլցիլ (աւելնալ), մի հատ լիմոնի չորրորդ մասի ջուրը քամէ՛ վըե՞ն, եթէ լիմոն չլինի, մի պտղունց լիմոնի աղ ևս կարելի է ցանել և սպասէ մինչև եփը լաւ բարձրանայ: Ապա կրկին մի և կէս շիշ ջուր առ և աջ ձեռոքդ ցնցղկէ (շաղ տուր, ցրցամ տուր) շաքարի վերայ մինչև եփի բարձրութիւնը բոլորովին նստի. այսպէս որքան անդամ բարձրանայ եփը, ջրով նստեցրու մինչև երեսի եղած քափը բոլորովին ուեանայ: Երբ որ եփուեցաւ, այն

սղնաձի կողքերին կպատ աղասոտ քափը կկարուի և բարակ ու սովորակ քափ կերևոյ : Այս ժամանակը վեր առ պղնձը կրակիցը, որ կէս ժամփու աւել անխնայ եփ տուած և ցնցղկած պէտք է լինիս և նոր ու թաց կտաւով առանց բոլորովին սղմելու քամի՛ այն շաբարը ուրիշ մաքուր ամանի մէջ *:

ՄԵՂԻ ՊԱՐՁԵՑՆԵԼՈՒ (ԿՈՐԵԼ) ԿԵՐՊԸ

Քաղցրաւենեաց տեսակների մէջ երբեմն մէզը ևս հարկաւորուումէ ի գործ դնել և ահա մեղք պարզացնելու կերպը :

Եթէ մեղքն անհալ և մաքուրէ, բաւական է միայն միջի մոմը հանել և լաւ քամել իսկ եթէ անմաքուրէ, լից պղնձի մէջ երկու բաժակաչափ (ստաքան) ջուր, այն հալուած ու կեղասոտ մեղքն ածա մէջը և զի՞ր կամաց կրակի վերայ : Բայց առաջուց մոխրաջուր պէտք է պատրաստած ունենաս այսպէս: Մէկ մեծ պղնձնած ջուր զի՞ր կրակին, երբ սկսեց լաւ եփ գալ, լից նորա մէջ ջրի երեք բաժինից մի բաժինի չափով մախիր (կրակած հող) և թող մինչեւ մի երկու անգամ լաւ եփ դայ, ապա վեր առ կրակիցը վէր զի՞ր, թող պարզի պարզելուց յետոյ երեսի մանր ածուխը քաշէ և բարակ կտաւով քամի՛, որ շատ մաքուր ջուր լինի : Երբ որ մեղքի եկին եկաւ, այս պարզ մոխրաջրիցն լից վըէն և երեսին բռնած

*) Եաքարու թէկ կարելի է ուկտոփ ածուխով ևս պարզեցնել և թաղիքով (քիչայ) քամել, բայց այս տեսակ պարզեցնելու կերպը քաղցրաւենու մէջ ի գործ չդրուելու համար յարմար չհամարուեցաւ դրել :

հաստ ու կեղառա քավը քաշէ, և որքան քաշես քա-
փը, այնքան ոյս մոխրաջրիցը սակաւ առ սակաւ լից վր-
բէն : Այսպէս կէս ժամից աւելի եփ տալից և լաւ պար-
զելից յետոյ, վեր առ կրակիցը և նոր ու թաց կտաւով
քամէ' :

ՄԵՊ.ԲԻ ՌԵՆԵՑԱՅ ՀԱՏԲ ԿՏՐԵԼՈՒ ԿԵՐՊԲ

ԱԵՂՔԻ հոտը եթէ լաւ կտրուի, թէե շաքարին չի
հասնիլ բայց նրանից ևս պակաս չի մնալ: Հետևեալ կեր-
պիւ որքան թթուած և հոտած մեղք լինի, կարելի է
հոտը կտրել:

Ա.ՅՍՊԻԱԲԻ վաս մեղքն առաջ մոխրաջրով մաքրէ՛ ու
կրակիցը վէր կալ, ինչպէս վերը գրած է, ասպա մի քանի
կտոր կրակի մէջ կարմրացրած պողպատ (չէլիկ) քցէ այդ
մոխրաջրով մաքրած մեղքի մէջ, թող մինչեւ եփը կտրի,
յետոյ համը տես : Եթէ այն հոտը և համը չէ կնա-
ցել կրկին պողպատը տաքացրու և քցէ մէջը, այս դոր-
ձողութիւնը կարող ես մի քանի անդամ կրկնել մինչեւ
հոտն ու թթուած թիւնը բոլորովին կորչի . ապա
քամէ' թաց կտաւով և ի գործ դի՛ր :

ԵԹԷ մեղքով եփած քաղցրաւենին թթուի, եփէ
առանց մոխրաջրի և կրակիցը վեր առնելով մի քանի
անդամ տաքացրած սլողպատներ ձգի՛ր մէջը, թթուու-
թիւնը կկորչի :

Քաղցրաւենի շինելու համար ընդհանրապէս պէտք է զիտենալ այս չորս գլխաւոր յառկութիւնն . Ա . թէ քաղցրաւենին ինչով կշինուի Բ . թէ քաղցրաւենին քանի կրթաժանուի Գ . թէ քաղցրաւենի եփելու աստիճանաներն , որ թանձրաչափ կամ տաճկերէն դվամէ ասուաւմ քանի տեսակ են . և Դ . թէ ի՞նչ յատկութիւն ունի քաղցրաւենին և ի՞նչպէս կարելի է ճանաչել լաւ և դիմացկուն քաղցրաւենին :

Ա . յատկութիւն , թէ քաղցրաւենին ինչով կշինուի :

Քաղցրաւենեաց տեսակները անչափ են և ամէն երկարում զանազան տեսակ քաղցրաւենիք շինելու յարմար մրդեր լինելու համար անկարելի է ամէն տեսակ քաղցրաւենիք շինելու կերպը գրել : Այս միայն պէտք է գիտենալ , որ ամեն սեսակ մրդերից կամ իրենց ջրերից , ամէն տեսակ անվեաս և հոտաւէտ ծաղիկներից , արմատից և պահարեղէններից (համեմներից) կարելի է յարմարեցնելով քաղցրաւենի շինել : Սակայն մեծ զդութիւն է հարկաւոր քաղցրաւենի եփողին լաւ ճանաչել և չխարուիլ այն անծանօթ հոտաւէտ ծաղիկների արմատներից և վայրենի չղործածած պտուղների հոտից և զոյնից , որ մի՛ գուցէ վնասակար լինին :

Բ . յատկութիւն , թէ քանի կբաժանուի քաղցրաւենին :

Քաղցրաւենին ընդհանրապէս կբաժանուի երկու քաղցր և թթու , որոց ամէն մէկը առանձին առանձին եփելու թանձրաչափ (դվամ) ունին :

Քաղցրն այն է, որ բոլորովին թթու չի մանիլ ինչ-
պէս, վարդով, մանուշակով, լիմոնի ծաղկով, մանր և
քաղցր խնձորով, ձմերուկի կեղևով, փորթոքալի (ապել-
սին) կեղևով, նարինջի կեղևով և այն ։ Իսկ թթուն
այն է, որ բնական թթութիւն կունենայ կամ նոր կը-
դրուի շինելու ժամանակը, ինչպէս ալուբալիով (Փիշ-
նայ) և այլն :

Քաղցրաւենին կարելի է նոյնպէս բաժանել երեք.
Ա. ինքն իրանով շինուած, ինչպէս վարդով, միխակի
ծաղկով, կիսորոնով (բալանկ, աղած զաւունի), մալինայով
(աղած չելէյի) սերկելիով (հայվայ, կոմշի,) հոնով և
այն : Բ. թթու մրգերի ջրով շինուածներն, որ ասուում
է լաղապ, ժիլէյ: Գ. հոտաւես կամ թթու ջրերով շին-
ուածներն, որ ասուումէ չէվիւրմէ, պօմառայ, սրանց ա-
մէնը իրանց կարգին կդրենք :

Գ. յատկութիւն, թէ քաղցրաւենի և իմելու թանձրաչափն
քանի տեսակ է :

Քաղցրաւենի եփելու գլխաւոր գիտելին այս թանձ-
րաչափն է, եթէ թանձրաչափը տեղը չլինի, քաղցրա-
ւենին երբեք լաւ չինիլ. որովհետեւ եթէ անդիտու-
թեամբ քիչ եփուի և աստիճանիցը մի ըոպէ առաջ վերց-
ուի, քաղցրաւենին մեծ պակասութիւնք կունենայ: Ա-
ռաջին պակասութիւնն այն կլինի, որ ամանի մէջը լրց-
նելուս միջի նիւթն երեսը կդայ և չի հաւասարուիլ օ-
շարակի (սերոպ) հետ. երկրորդ՝ քաղցրաւենին ջրալի
կլինի և անախորժ ուտելու համար և երրորդ՝ երկար չի
կարող դիմանալ շուտ կթթուի :

Ծախսելու համար շինող վարպետները յօդուտ իւրեանց քիչ և փելով օշարակի մածուցիչ և թանձր ոոյց կտան , մէջք զանազան մածուցիչ գեղեր խառնելով , որ կարելի է կերտծ ժամանակը նշանարել շատ քաղցր չիննելուցը , բայց այս տեսակ քաղցրաւնիքը երկար չեն կարող մնալ : Կան այնպիսիներն ես , որ շաքարի հետ երեք բաժնի մինն կամ ամելով կէսն մնող կխառնեն , որոց օշարակն թէն թանձր կլինի և բաւական ժամանակ կդիմանայ , բայց յարգի չի լինիլ . Այս տեսակը մի քանի քաղցրաւնենց համար մենք ևս գործ կածենք և իւր տեղը կդրենք :

Եթէ քաղցրաւենին շատ եփուի և թանձրաշափիցն անց կենայ , Ա . նրա միջինիւթը կփշանայ , Բ . քողցրաւենու զոյնը կըկորչի և Գ . թէն կարողէ երկար դիմանալ . բայց բոլոր քաղցրաւենին սառը շաքար (նեպէա) կդառնայ և իր բնական համն ու հոտը կկորցնի : Եթէ քաղցրաւենին լողալ կամ ճելէյ է , աւ ելի դդուշութիւն է հարկաւոր , որովհետեւ եթէ քիչ եփուի , ոչինչ բանի նման չի լինիլ և դրգալի վերայ չի կանգնիլ , իսկ եթէ շատ եփուի , քար կկորի (դառնալ) , հանելուս զրգալ չի դիմանալ և զոյնը կկորցնի : Եթէ պօմադ կամ քաղցրաւենի է , նոյնպէս զգուշութիւն է հարկաւոր թանձրաշափի մէջը , որովհետեւ եթէ թանձրաշափին պակաս լիւնի , չի միաւ որիլ և մածունի նման թանձրանալ , իսկ եթէ աւել լինի , քար կդառնայ և ուտելու անախորժ կըւլինի : Ուտոի թանձրաշափի համար երկար տեղեկութիւն և մեծ զգուշութիւն է հարկաւոր , որ մի առ մի կաեմնուի ահաւասիկ :

Տաքար եփելու թանձրաշափն վեց աստիճան է , բայց մեր զրելու քաղցրաւենիներին ո՞րն է հարկաւոր , այն կը զբենք :

ՆԱԳԱՐԻ ԹԱՆՉՐԱՋԱՓՆԵՐԻ ԵՂԱՆԱԿԸ

Ծաղկեղէն քաղցրաւենեաց թանձրաչափը, եթէ մէս
ջը բոլորովին թթուութիւն չկայ, ամէնը մէկ տեսակ
պէտք է լինի. իսկ եթէ բնական թթուութիւն ունի,
ինչպէս խնձորը և այլն, փոքր ինչ աւելի եփ կուզէ. բայց եւ-
թէ, քաղցրաւենին թթու է, թանձրաչափն շատ պէտք է
լինի, ապա եթէ պօմադայ (չէվիւրմէ) է, աւելի շատ պէտք
է լինի. ապա եթէ պումադայ (չէվիւրմէ) է, աւելի շատ
պէտք է լինի: Այժմ խօսինք մի առ մի իւրաքանչիւր
թանձրաչափի վերայ:

Ա. պարզեալ թանձրաչափ.

Ծաղկեղէն քաղցրաւենին ամենից սակաւ եփ կու-
շէ և այսպէս պէտք է ճանաչել:

Կրակի վերայ եփուելու ժամանակը, փոքր արծա-
թէ թէյի (չայ) դրգալով վեր առ օշարակիցը և կա-
թեցրու, կաթելը պէտք է այս գծի (—) չափ մազ ու-
նենայ. երբ որ միջի ծաղկին եփուելէ և ատամիդ տա-
կին ձայն չի հանում, վեր կան կրակիցը. եթէ ոչ կըր-
կին սառը ջուր լից վըն, թաղ եփի:

Այս առաջին թանձրաչափն կարելի է ճանաչել,
նոյնպէս բութ և ցուցամատերով այսպէս: Օշարակիցը
մի փոքր դրգալով առ, կաթեցրու ցուցամատերիդ վե-
րայ, բութ մատով շուտ շուտ սղմէ՛ և յետ քաշէ՛. եւ-
թէ մէկ մատիցդ միւս մատդ մի շատ փոքր թել ձը-
գուի, իմացիր որ շաքարդ պարզեալ թանձրաչափի մէս
ջըն է. իսկ եթէ այն թելը չի երևիլ իմացիր, որ շա-
քարը սակաւ ինչ պարզեալ թանձրաչափի մէջն է, որ

շատ անդամ ևս չե երեխը ուստի լաւ է առաջի օրինակին համեմատ՝ զրդալով փորձել թանձրաչափն:

Բ. Արդարտաճե թանձրաչափ:

Խնձորի, կիտրոնի, կեղևների, մալինայի, կանանչի և այլ այսպիսի տեսակների քաղցրաւենիքը վերոյագրեալ թանձրաչափիցը փոքր ինչ աւելի պէտք է եփ գան: Այս ևս նոյնպէս կրակի վերայ եփած ժամանակը փոքր արծաթի զրդալով երբ որ առնես կաթեցնես, կաթիլը պէտք է ունենայ այս գծի (—) երկայնութեամբ բարակ մազ: Այս երկրորդ թանձրաչափն կարելի է մատներով իմանալ ըստ վերոգրեալ փորձոյն: Եթէ մատով շուտ շուտ սղմելու ժամանակը միջի թելն աւելի երկարի, իմացի՛ր, որ մարդարտաճե թանձրաչափն է: Այս թանձրաչափներն եփելու ժամանակն ևս կը ճանաչուին իւրեանց ձևովն: այս երկրորդ թանձրաչափի ժամանակը կերեի մարդարտաճե բոլորակ պղպջակներ, (եփեր) իրար վերայ դառնալուու:

Դ. Քամու թանձրաչափ.

Երրորդ տեսակ թթու քաղցրաւենեաց թանձրաչափն այսպէս պէտք է ճանաչել: Քաղցրաւենու եփած ժամանակն օշարակիցը փոքր ինչ արծաթի զրդալով վեր առ և կաթեցրու մի խիստ չորացած մաքուր ափսէի (թէփշի) մէջ. եթէ այն կաթիլը բոլորաճե կը կանգնի և կը ցրուի, շուտով յետ առ:

Այս թանձրաչափն նոյնպէս կը ճանաչուի այսպէս: Զեռքիդ մաքուր քափիքիրը (քափիքաշ) թաթախի՛ր շու-

քարի մէջը, խփի՛ր (զարկէ) պղնձի շրթանը, ծակերին
փշէ' և կամաց կամաց քափերը շարժի՛ր, մէկ կողմից
միւս կողմը տանել բերելով. եթէ օշարակը շուշայի
նման ծակերիցը կախ կախ երեխ, իմացի՛ր որ քամիի
թանձրաչափն է: Այս փորձն ևս աւելի հեշտ կարելի
է դրդալով անել և ափսէի վերայ կաթեցնելով փորձել

Դ. ԳՐՉԻ ԹԱՆԶՐԱՉԱՓ.

Լողապ շինելու թանձրաչափն ևս պէտք է տեսնել
ըստ վերագրելոյն, սակայն երբ որ ափսէի վերայ կաթե-
ցրիր և ափսէն թեք (ծուռը) բռնեցիր, կաթիլն չը-
պէտք է ցրուի. բայց և այնպէս շատ պնդացած ևս չը-
լինի, որ այրելուն մօտենայ և գոյնն կորցնէ: Այս թան-
ձրաչափն այսպէս ևս կարելի է փորձել. երբ եփելու
ժամանակը շուշայ շուշայ և աչք աչք կըլինի և շու-
տով կըծածկուի, քափիրը մէջը թաթախէ' և հանէ'
սաստիկ երերացրու օդի մէջ. եթէ շաքարը կծիկի նը-
ման բոլորակ բոլորակ կըղառնայ, այն գրչե թանձրա-
չափն է:

Ե. ԿՈՏՈՐԱԾ ԹԱՆԶՐԱՉԱՓ.

Պոմադայի (չէվելրմէ) քաղցրաւենի շինելու թանձ-
րաչափն այսպէս պէտք է ճանաչել: Երբ որ շաքարն սկը-
սաւ ծակծկուելով եփել և մէծ մէծ պղպճակներ
(բուշոի) ցոյց տալ, առ մի սեղանի դրդալով սառն ջուր
և փոքր արծաթի դրդալի ծայրով ևս շաքարիցը վեր
կալ ու կաթեցրու. մէծ դրդալի ջրի մէջ. եթէ այն

կաթիլը չըի մէջ առանց ցրուելոյ կըմնայ և կաթիլի
գլխիցը մի բարակ մազ ջըի երեսին կերեկի, շուտով կա-
թիլը մատովդ դուրս հանի՛ր. եթէ մատիդ վերայ այնա-
պէս փափուկ և բոլորակ մնաց, հասել է իր ժամանա-
կին. բայց եթէ սիսեռի նման պնդացած մի բոլորակ
դարձաւ, շատ է եփուել. իսկ եթէ մատիդ վերայ ցըրուե-
ցաւ, փափուկ մնաց և չըոլորակացաւ, դեռ չի հասել
իւր թանձրաչափին: Այս եփը տեսած ժամանակը պէտք
է շուտ շուտ այս փորձն անել որ վեցերորդ թանձրա-
չափին չհասնի, որ այն ժամանակը երբ ատամիդ տակը
դնես, չի կոչել և շուտով կրկոտուի:

Այս թանձրաչափն այսպէս եւս կըճանաչուի: Ա՛ռ
մի փոքր ամանով սառը ջուր, մատդ միջին թաթախի՛ր
և դի՛ր շաքարի մէջը և կրկին շուտով դի՛ր սառը ջօի
մէջը. եթէ մատիդ փայի շաքարը սառչի և կարելի
լինի մասներով մի փափուկ բոլորակ շինել. իմացի՛ր որ
չէվիւրմէյի թանձրաչափն է. իսկ եթէ մատիդ կպոծ
շաքարը մատներդ իրար քսես և ձայն հանելով կոտրատ-
ուի, այն կոտրած անուանեալ թանձրաչափն է. այս
թանձրաչափս չէվիւրմէի համար պէտքչի գալ, որովհե-
տեւ շատ է եփէ եկած:

Ահա այս հինգ տեսակ թանձրաչափներն են, որով
քաղցրաւենին եփուումէ. և թէև իւրաքանչիւր տե-
սակի մէջ երկու կերպ փորձ ցոյց տուինք թանձրաչա-
փն ճանաչելու, բայց առաջին կերպովը հեշտ կարելի
է ճանաչել. քան թէ մատով և քափիրով, ըստ որում
այս կերպերը բաւական դժուար են և լաւ վարպետի կա-
րօս. իսկ փոքր դրդալով ամէն մարդ հեշտութեամբ կը-

Ճանաչելու կայ և վեցերորդ թանձրաչափ , որ քաջաւ-
սենեաց մէջ 'ի գործ շղրուելու համար զգրուեցաւ :

Այս թանձրաչափներն թէե բաժանեցինք հինգ ,
բայց պէտք է իմանալ , որ շատ անդամ դեռ առաջին
թանձրաչափին չառած՝ կըհարկաւորի կէս աստիճան
թանձրաչափին ևս հասցնել . ինչպէս , երբ վարդով քաղց-
րաւենին ու շաքարը կարատելով շննես , պէտք է կէս
թանձրաչափին հասցնես : Նոյնպէս երկրորդ թանձրաչա-
փին չառած , կըհարկաւորի մի և կէս աստիճանի հաս-
ցնել , նմանապէս երկու և կիսի , երեք և կիսի և այլն :
Մի տեսակ ջերմացով ևս կայ , որ թանձրաչափին նը-
րանով հեշտ կըճանաչուի . սակայն թանձրաչափին հա-
մար այսքանու բաւական է , յաճախ գործածութեան
փորձը ինքը կըսովոցնի : Նոյնպէս եռ գալու ժամանա-
կին պէտք է լու նկատել , որ ամէն թանձրաչափ իրեն
համար առանձին եփելու կերպ ունի . յաճախ գործա-
ծութեամբ , այս եփելիցն ևս կարելի է թանձրաչափը
ճանաչել :

ԳԵՆՈՒԹԻՒՆ ԵԲ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՇԱԳԱՐԻ ՎԵՐԱՅ :

Ա. Շաքարը , լաւ կըլինի , որ ամենելին կլայեկ ըս-
տեսած պղնձի մէջ եփուի և պղինձը եփելուց առաջ
աղով և քայախով լաւ շփուի , կարմրանայ և մաքուը
լուայուի . ապա թէ ոչ պղինձը պէտք է լաւ կլայե-
կած լինի և արծաթի բաղիայի ձեռվ և ոչ թէ ներ-
քե տափարակ , ինչպէս մի քանի սեղեր գիտեն : Այս
ձեի գործածութիւնը շաքարին վիաս է , ըստ որում
տարածութիւնը այն լինելով և հաւասար եփ չունե-

նալով շուտ կայրուի և թանձրաչափն ու եփն գժուար
կշճանաչուին:

Բ. Շաքարն սկզբումը ձուով կտրելու ժամանակը
ամենեին խառնել չե հարկաւոր մինչեւ ետ առնիլը :

Գ. Շաքարը մինչեւ առաջին թանձրաչափին հաս-
նիլը պէտք է անդադար երեսի եկած քափը քաշուի :

Դ. Երբ որ շաքարը մտաւ երկրորդ թանձրաչափն,
այնուհետեւ շերեփով կամ քափիրով չպէտք է խառ-
նել որովհետեւ կլալակասի:

Ե. Երբ որ շաքարն եկաւ հինգերորդ թանձրա-
չափն, և փոքր կրթարձրանայ մինչեւ պղնձի բերանը, ուստի
այն ժամանակը մեծ զգուշութիւն պէտք է, որ չը-
թափուի. այս զգուշութիւնն այն կլինի, որ կրակը փո-
քրը ինչ մեղմացրուի:

Զ. Եթէ շաքարի պղինձը շատ մեծ է, այնպէս որ
կարելի է մի քանի փութ շաքար առնի և անհնարի-
սպղինձը յետ առնել կամ կրակը մեղմացնել, հինգե-
րորդ թանձրաչափի բարձրացած ժամանակը, պէտք է
մի բարակ միլի հաստութեամբ (շիւղ Ճաւղք) շնել, մէկ
զլուիր թաթախել մաքուր իւղի մէջ և հանել այն իւ-
ղոտ զլուիր տալ շաքարի մէջն, իսկոյն եփը կրնստի:


Է. Երբ որ էլած (բարձրացած) շաքարը նստացը-
նես, թէ կրակը պակսեցնելով և թէ իւղով պէտք է ըզ
դցա լինիս, որ կրակի բոյը պղնձի շըջապատը չե կար-
մըրացնի. եթէ մի փոքր կարմրութիւն տեսնիս, իսկոյն
թաց կուտով կամ սպունգով (սունկեար, գուպկայ) սըր-
բի' մինչեւ կարմրութիւնը կորչի. վասն զի եթէ զանց
առնես այս բանը, կարմրութիւնը փոքր առ փոքր կը-

շատանայ և կըսեանայ և այն սեռութիւնը շուտով կը հասնի շաքարին, կը փչացնի թէ գոյնը և թէ համը:

բ. Եթէ փոշի շաքար պէտք է հալեցնես կամ կը տրես, անպատճառ պէտք է առաջ պղնձի մէջն ըստ բաւականին ջուր լցնես և յետոյ շաքարը ապա թէ ոչ ընդհակառակն առաջ շաքարը լցնես, յետոյ ջուրը, կամ ձուով հարած ջուրը, անպատճառ շաքարի տակը կառնի (կայրուի):

թ. Քաղցրաւենի եփողը պէտք է շատ մաքրութիւն ունենայ. թէ քաղցրաւենու պղնձը, թէ շաքարը մէջը քամելու ամաններն, թէ դրգալը, շերեփը, քամելու կտաւը և թէ այլ ամենայն ինչը իւղի, ձենածի կամ տխի հոտ չպէտք է ունենան: Մեծ զգուշութիւն հարկաւորէ նոյնպէս հացի փշանքից, ինչպէս անմաքրութիւնից. վասն զի եթէ հացի փշանքը մէջըն ընկնի կամ հացոտ դանակով և ձեռքով միրգ, ծաղիկ կամ ուրիշ եփելու բան ընտրուի, այնպիսի քաղցրաւենին դիմացկան չի լինի և շուտով կը թթուի:

ժ. Եթէ քաղցրաւենին շուշէ ամանի մէջ լորած լինի, թթուած ժամանակը շուտ կարելի է ճանաչել, որովհետեւ ամանի զրսի կողմիցը կսկսի քաղցրաւենին ծակոտիքներ ունենալ. խսկ եթէ խիստ թթու լինի, ՚ի հարկէ կսկսի ամանի բերանիցը, բարձրանալ և զուրս թափուիլ: Նոր թթուածը կարելի է չդատարկելով այս եղանակովն նորոգել: Առ մի խոր պղնձի աման, որ տափարակ և լայն լինի, լականի կամ նոր ափսէի նման, քաղցրաւենու ամանները շարէ մէջը և այն պղնձէ ամանի մէջը սառը ջուր լից այնքան, որ քաղցրաւենու ամանների կէսը չառի կամ մի փոքր բարձրանայ. յե-



առյ նայելով ամանների մեծութեանը , իւրաքանչեւրի
մէջ մի թէյի կամ սեղանի դրգալով սառը ջուր լից և
դի՞ր կրակի վիրայ . թող այն ջուրը երկար ժամանակ
եփուի , ապա փոքր դրգալով քաղցրաւենեաց թանձրա-
շափը տես . եթէ իւր աստիճանին հասել է , կրակից
վեր առ ու տաք ջրիցը հանի՞ր : Եթէ քաղցրաւենին շատ
չի թթուած լինի և այս կերպովս նորոգես , իւր գոյնը
չի կորցնել . իսկ եթէ շատ է թթուել հարկաւոր է լրց-
նել սղնաձի մէջ և նորոգել , միայն 'ի հարկէ գոյնն ան-
պատճառ կըկորցնի : Եթէ սխալմամբ քաղցրաւենեաց
թանձրաշափը պակաս վեր կալած և ամանները լցրած
լինիս բացի չէ վիւրմէն , կարողես առանց զատարկելոյ այս
վերագրեալ կերպիւն եփել , որ գոյնը չկորցնի . միայն այն
ժամանակը հարկաւորէ քաղցրաւենեաց վիրայ ջուր
ածել : Ընդ հակառակն եթէ շատ է եփուել և թան-
ձրաշափիլին անց է կացել , քաղցրաւենեաց ամանների
մէջ քիչ քիչ ջուր լցնելով՝ կարող ես այս եղանակաւն
եփելով թուլացնել . որ գոյնը չկորցնի : Լողապի հա-
մար այս եղանակն աւելի հեշտութեամբ կարելի է 'ի
գործ դնելու :

Թէ Ո՞Ր ՑԵՍԱԿ ՇԱՔԱՐՆ ԱԻԵԼԻ ՈՒԺՈՎ ԵՒ ՀԱ

ԿԲԼԻՆԻ .

Ամէնից գլխաւոր և առաջին տեղին ունի Անգ-
ղիայի շաքարն . Բ . Ռուսիայի . Գ . Գաղղիայի . Դ . Հոլ-
լանդիայի փոշե շաքարն և ամէնից ցածրագոյն եգիպ-
տոսի շաքարն :

Անգղիայի և Ռուսիայի շաքարն մեծ տարբերու-

թիւն չունին իրարից . միայն Անդղեայի շաքարն ուժով
է քան Ռուսիայինը : Հոլլանդիոյ լաւ փոշի շաքարն
շատ պակաս չի մնալ Գաղղիոյ շաքարիցը , բայց Եգիպտ-
առարի և միւս տեսակ շաքարներն մեծ տարբերութիւն
ունին վերոյգրեալներիցը : Եղիպտոսի շաքարը թէև կա-
րելի է ասել ամենիցը վեր է քաղցրութեամբ , բայց
գոյնի սեռութիւնովը և անախորժ հոտովը մեծ պակա-
սութիւն ունի : Անդղիոյ և Ռուսիոյ շաքարովն եթէ
չէվիւրմէ շինուեի , շատ գովելի և սպիտակ կըլինի : Վար-
դի , բալի , կիտրոնի և այլ այս տեսակ քաղցրաւենեաց
համար Գաղղիոյ շաքարն շատ լաւ է , թէ առանց կըտ-
րելու (պարզելու) ևս շինուեի : Հոլլանդիայի շաքարովն
ևս , բացի վարդի և չէվիւրմէի քաղցրաւենիքը , կարելի
է քաղցրաւենի շինել բայց առանց ձուով պարզացնե-
լու լաւ չի լինիլ : Եգիպտոսի շաքարով , եթէ կտրելով
ևս շինես . իւր բնական հոտը կըմնայ մեջը , ուստի լաւ
է այս շաքարն միայն 'ի գործ ածել մեղրախառն քաղց-
րաւենեաց մէջ :

Որ եիցէ շաքար եթէ բարակ ծեծուի և մաղուի,
անպատճառ իւր ոյժն և քաղցրութիւնն կըկորցնի , վասն-
որոյ միշտ պէտք է շաքարը մանր կոտրատելով գործ-
ածել և ո՞չ ծեծելով :

Դ . ՅՍ.ՏԿՈՒԹԻՒՆ , Թէ Ի՞՞ՆՉ ՅՍ.ՏԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՔԱՂՑ-
ՔԱԽԵՆԻՆ ԵՒ Ի՞՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՃԱՆԱՋԵԼ ՇԱՏ ԴԻՄԱՑ-
ԿԱՆ ԿԱՄ ԶԴԻՄԱՑՈՂ , ՔԱՂՑԲԱԽԵՆԻՆ .

Քաղցրաւենու դլսաւոր յատկութիւնն այս է , որ
ուրիշ հոտ և գոյն տալով չկորցնի իւր բնական հոտն

ու գոյնը . զորօրինակ . եթէ եփած քաղցրաւենիդ վարա
դովէ , ի՞նչ հարկաւոր է նրան մեխակ , դարչին և ու-
րիշ հոտաւէտ բաները , որոնցով իր բնական հոտ և հա-
մը կորցնելով՝ կրկարօտի տիրոջ բացատրութեանը . թէ
այս վարդով է շինուած : Նոյնպէս և լիմոնի կամ մա-
նուշակի ծաղկներից եփած քաղցրաւենիքը ի՞նչ յատ-
կութիւն կունենան , եթէ զանազան հօտերավ կորցնես
նրանց բնականը . վասնորոյ լաւ է , որ այսպիսի հազուա-
գիւտ և հոտաւէտ քաղցրաւենեացը օտար հոտ չի արօ-
ռիւ : բացի ընկուզի և մի երկու ուրիշ տեսակների , ու-
րոնց համար կրխօսենք իրենց աեղը : Ինչպէս զոյշ մը-
նալ հարկաւոր է հոտ տալուցը , նոյնպէս և զոյները
տալուցը , մանաւանդ այնպիսի քաղցրաւենեացը , որոնց
գոյն տալ ամենեին չէ հարկաւոր , զորօրինակ , վարդի
պատուական գոյնին էլ ի՞նչ գոյն կարող է գերազանցիլ .
թէև երեքն զածի իւղով և լիմոնի ջրով . վարդով քաղց-
րաւենուն կարելի է աւելի բաց գոյն տալ . այս ևս իւր
գոյնիցը դուրս չէ : Նոյնպէս մանուշակի և փորթոքալի
ջրով շինուած լողապին , հոնի , բալի և այլ այս տե-
սակներին հարկաւոր չէ գոյն տալ : Այն քաղցրաւենուն
կարելի է գոյն տալ , որ ինքնին գոյն չունի , ինչպէս լի-
մոնի ծաղկին փոքր ինչ քրքումով (զաֆուան) և խըն-
ձորին կարմիր և այլն :

Երբ որ եփած քաղցրաւենին լաւ սառեցաւ , պէտք
է ամանների բերանը թաց կտաւով ծածկել . թելով կա-
պել և հով տեղ պահել . որ բնաւ արև չի դիպչի . նոյն-
պէս ձմեռն պէտք է այնպէս տեղ պահել . որ չի սառչի
և ոչնչանայ :

Ամեն տեսակ քաղցրաւենիքը մանաւանդ ծաղկե-

զէնը եթէ մանր ամաններով պահուի շատ լաւ կրտիւնի . որովհետև եթէ ամանը մեծ լինի և պէտք եկած ժամանակը բերանը բացուի և պակասի , տասն և հինգ օրից աւել չե կարող դիմանալ , կամ կըթթուի , կամ կըշքարակալի սառը շաքարի նման :

Ասացինք . թէ ի՞նչպէս պէտք է ճանաչել լաւ եփուած , դիմոցիան և թանձրաչափը տեղը քաղցրաւենին : Սորա համար պէտք է այսպէս անել . եթէ քաղցրաւենին վարդից է կամ ուրիշ ծաղկից , եթէ թանձրաչափը պակաս լինի , ամանները լցնելուց փոքր ինչ յետոյ միջի եղած տերեները օշարակի երեսը կըքարձարանան ; Նոյնպէս եթէ տասը կամ տասնև հինգ օր մընալուց յետոյ սկսաւ երեսը բորբոսնիլ (կանանչ քուֆ կապել) լաւ է եփած , եթէ բորբոսի փոխանակ խիստ բարակ շաքար բռնի , նոյնպէս անվնաս է և երկարակեաց . իսկ եթէ հաստ շաքար կապէ և օրէց օր այն շաքարը հաստանայ , այն քաղցրաւենին շատ է եփել և շուտով սառը շաքար կըդառնայ , կըփչանայ . իսկ եթէ այս ծաղկեղին քաղցրաւենին **15—20** օրից յետոյ երեսին ոչ բորբոս ունեցաւ և ոչ բարակ շաքար , պէտք է իմանալ , որ շուտ կըթթուի և երկար չե մնալ :

Բալի , սմօրօգինի , հոնի և այլ այս տեսակ թթու քաղցրաւենեաց թանձրաչափն եթէ պակաս լինի , ամանումը միջի հատերը օշարակի երեսը կըքարձրանան և չեն դիմանալ , այլ կըթթուին . իսկ եթէ թանձրաչափը տեղը լինի , հատերն օշարակի հետ խառը կըմնան ամանի միջին և բաւական ժամանակ անցնելուց յետոյ բորբոս կամ բարակ շաքար կըկապեն : Վերջապէս ամէն տեսակ քաղցրաւենին , եթէ ամանի դրսի կողմիցը ներ-

սումը ծակոտիքներ երևացին. պէտք է իմանալ, որ սկըս-
սել են թթուիլ ինչպէս վերևը յիշեցինք:

ՎԱՐԴԻ ՎԵՐԱՑ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.

Դեռ վարդով քաղցրաւենի եփելու կերպը չիմացած՝
պէտք է գիտենալ ասած քաղցրաւենի շինելու վարդերի
աեսակները, որ ժամանակին և որպէս հաւաքելը, որպէս
զե քաղցրաւենին լաւ լինի:

Ամեն տեսակ վարդը քաղցրաւենի չե շինուիլ, այլ
միմիայն այն հոտաւէտ և գեղեցիկ վարդը, որ բացու-
ումէ Մայիսին և տեսումէ մինչև Յունիսի **10** կամ
ցուրտ տեղերումը մինչև **30**: Կ. Պօլիս այս վարդին
ասում են Օքիան Կիւլիի. իսկ Վրաստան խաս վարդ կամ
Մայիսի վարդ: Կ. Պօլսոյ վարդը թէ հոտով, թէ գոյ-
նով և թէ շուտ եփուելովը շատ գերայարգ է քան ըդ
Վրաստանինը, սակայն Հայաստանի վարդը կարելի է ա-
սել ամենիցը գերազանց է:

Վարդը ժողովելը պէտք է սկսել արշալուսին և
մինչև արևը ծագելը վերջացնել. որովհետեւ եթէ ա-
րելը դիպաւ վարդին, հան և գոյնը կըսպակասեցնի: Հա-
ւաքած վարդը ոչ նորափիթիթ կոկոմ պէտք է լինի,
որ տերեւների հաստութեամբը եփելուս չփափկանայ և
ոչ մի քանի աւուր բացուած լայնաբաց, հին, գոյն և
հոտը պակասած վարդը, այլ այս երկուսի միջին գե-
ղեցիկ, կարմիր և հոտաւէտը:

Վարդը պէտք է քաղել ոչ թէ կոթով, այլ իր ներ-
քեւի գնտակի տակիցը և կարգաւ շարել ամսնի մէջ,
որպէս զե վըայի տերեւները չթափին: Անձրեւի ժամա-
նակը եթէ շատ հարկաւոր չէ, լաւ է չհաւաքել որով-

հետեւ թաց վարդը լաւ չելինիլ և քաղցրաւենին պահասութիւն կունենայ:

ՔԱՂՑԲԱՒԵՆԻՔ

Գ. ՌԻՒ. Ա.

ՊԱՐՁԵԱԼ ԹԱՆՉՐԱՋԱՓԻ ՎԵՐԱՅ ՔԱՂՑԲԱՒԵՆԻՔ.

ՎԱՐԴՈՎ ՔԱՂՑԲԱՒԵՆԻՔ

1.

Վերեւ յիշած ընտիր վարդի տեսակներիցն հաւաքի՞ր, լից մի սպիտակ մաքուր պաստառի մէջտեղն և բեր այն տակի բոլորակ գնտակոմն և տերեւի սպիտակ տեղիցը կտրէ՛ և կարմիրն լից ուրիշ ամանի մէջ և մէկ կողմիցն ևս այն կտրածներն ընտրել տուր . միջին սպիտակ տամար ունեցողներն առանձին դի՞ր, իսկ մէջտեղի եղած մանր և շատ կարմիր հաստ տերեւները և շատ սպիտակացեալ վարդի տերեւներն ՚ի միասին . իսկ առանց տամարի և կարմիր անբիծ վարդի տերեւներն, որոնք պէտք է շաքարով եփուին առանձին: Այս եղանակովը, երբ որ բոլոր վարդը կտրեցիր և լինտրեցիր, առանձին առանձին մնձակծակ մաղով մաղէ՛, որ միջին ոչ դեղին սերմերիցը և ոչ տերեւների ծայրի սպիտակիցը մնայ. յետոյ լաւ վարդերը կշռէ՛ մէկ կողմը դի՞ր, իսկ հասարակ վարդերը, որ (ոռուպ) կտառին, միւս կողմը . այս երկու տեսակն ևս հաւասար չափով պէտք է լինին: Հասարակ (ոռուպ) վարդի համար պղնձի մէջը սառը ջուր լից, այնպէս որ մի զրուանքայի համար երկու և կէս բաժակ ջուր լինի.

Երբ որ ջուրն սկսի եփուել, իսկոյն այն հասարակ վարդը լից մէջն ու խառնէ՛, մինչեւ որ բոլոր ջուրը ծծէ. ըստ որում այնքան ջուր պէտք է լինի, որ ո՛չ պակասի որ վարդը ողջ մնայ և ո՛չ ծծելուց յետոյ աւելնայ: Երբ որ այս կերպով վարդը ջուրը ծծեց և փափկացաւ, խակոյն յետ առ կրակիցն և թաց կտաւով ծածկէ՛, մինչեւ որ լաւ սառչի + սառչելուց յետոյ մաքուր ձեռներով ճմիչն և մասն մասն անելով լաւ աղմէ՛ ու ջուրը քամէ՛. վեր առ ապա կրկին այն քամած վարդի վերայ փոքր ինչ սառը ջուր լից, կրկին խառնէ՛ և քամէ՛ ջուրը վեր առ և սղմածներդ թափէ՛. յետոյ այն դուս եկած ջրերը՝ ի միասին լաւ բարակ կտաւով քամէ՛ և բաժանէ՛ մանր ամառների մէջ, թող մի ժամաշափ, որ պարզի և տիրդը տակը նստի: Երբ որ լաւ պարզեց, զգուշութեամբ առանց կտաւի լից ուրիշ ամանների մէջ և տակի տիրդը թափէ՛. կէս ժամից յետոյ, երբ տեսնես, թէ կրկին տիրդ ունեցաւ, այնպիսի զգուշութեամբ բոլոր ամաններինը միաւորէ՛ մի մեծ ամանի մէջ և թող:

Ա՛ռ ապա լաւ ընտրած ու կշռած վարդի մէկ բաժանի համար վեց բաժին գալղղեայի զլիուս որ շաքար, այսինքն՝ մի զրվանքային վեց զրուանքայ (1): Այս շաքարը եթէ չպէտք է կտրես, այսպէս արած. շաքարը բթաշափ մեծութեամբ կոտորէ՛, քաղցրաւենու պղնձի մէջ մի կարգ շաքար և մի կարգ ընտրած վարդ գի՞ր, նուա վերայ ևս լից այն շինած վարդիդ կարմիր ջուրը, բայց մեծ զգուշութեամբ, որ եթէ տիրդ լինի, չգայ ջրի հետ: Սորայ վերայ աւելցրու սառն և պարզ ջուր:

(1) Թէս կարելի է մի բամնի համար հինգ բաժին շոքար ևս գնել, բայց լաւ չի լման

այնքան, որ եթէ պղնձը փոքր ծռես, միջի ջուրը շըր-
թունքիցն երեխ. ապա դի՞ր կրակին և շըթունքներին
կպած վարդի տերեւները մէջը լից. այսպէս մինչև եփը
գալը դու դրդալով վէր արա. երբ որ եփն եկաւ, միշտ
աչքդ ունեցիր վըէն, որ թանձրաշափիր շուտ շուտ տես-
նես և շթողես, որ պղնձի շաքարոտ կողքերը կարմրի.
եթէ փոքր ինչ կարմրութիւն տեսնես, իսկոյն թաց
կտաւով սրբէ'. այսպէս եփէ' մինչև առաջին թանձրա-
շափին հասնիլը: Այս ես պէտք է գիտենաս, որ ստէպ
ստէպ վարդիցը պէտք է ծառես. եթէ վարդը չի կաղել,
բայց թանձրաշափին հասնելու մօտեցելէ, երկու կամ ոչ
աւելի քան զերեք բաժակ ջուր աւելցրու վո՞ն ամէն ան-
գամին. երբ տեսնիս, թէ վարդը ատամիդ տակին էլ ձայն
չէ տալի, սառը ջուր ես մի՛ լցնիլ վըէն, թող գայ
հասնի առաջին թանձրաշափին (*).

Ինչպէս զրեցինք վարդի վերայ տեղեկութիւն տա-
լիս, թէ Հայաստանի և Կ.Պօլսոյ վարդերը շատ շուտ կեփ-
ուին և Վրաստանինն ուշ, ուստի վերջինի համար ան-
պատճառ հարկաւոր է մի քանի անգամ ջուր լցնել,
մինչև լաւ եփուիլը: Նա ես Վրաստանի վարդի համար
գոյնը պակաս լինելուն աւելի լաւ է փոքր լիմոնի ջուր
քամել, այնքան, որ գոյնը զեղեցկացնէ փոքր ինչ, և
ոչ թէ այնքան, որ թթութիւն զգացուի. այս լիմոնի
ջուրը գործածելու է այն ժամանակը, երբ որ իւր թանձ-
րաշափին կրմուենայ. թանձրաշափիր երբ որ գտնես, վեր
առ կրակիցը և մի՛ սպասիր այն բարակ եփը կտրուելցին,
այլ սկսի՛ր լցնել քաղցրաւենիի ամանների մէջ, այնպէս,

(1) Ա. Թանձրաշափի իդաւոը տես 11 երրորդ երես:

որ ոչ ջուրը աւելցնես և ոչ հատը այլ համահաւասար լինի: Այս տեսակ քաղցրաւենեաց ամանները չպէտք է մեծութեամբ մի գրուանքայից աւելի տանին, և պէտք է մաքուր լուացած և չորացրած լինին . որոց մէջը զդուշութեամբ պէտք է լցնել քաղցրաւենին չկոտրուելու համար, առաջ մի գրգալով առնելով և ամէն կողմը դարցնելով անմնաս, երբ կըտաքանայ ամանը բոլորը լցունելով: Կցնելուց յետոյ պէտք է բերանը մնայ բաց մինչև 12 ժամ՝ ապա թաց և բարակ կտաւով կապելու է:

Քաղցրաւենին աւելի պարզ և լաւ լինելու համար շաքարը պէտք է ձուռվ կտրել, այսպէս: Կշռելուց յետոյ պէտք է շաքարը պարզեցնել ձուի սպիտակուցով, ինչպէս վերեր յիշեցինք. ապա քամելուց յետոյ պէտք է դնել կրակի վերայ և եփել մինչեւ կէս թանձրաչափու հասնիլը . յետոյ պէտք է թողուլ, որ լաւ սառչի և վարդը լցնել վրան ու խառնել, լցնելով նոյնպէս նորա վերայ շինած և պատրաստած վարդի ջուրը, ապա դնել կրակի վերայ և առնել ըստ վերոգրելոյն:

ԱՅԼ ԻՄՆ ԵՂԱՆԱԿ ՇԱՏ ԲԱՑ ԳՈՅՆԱԽՈՐ ՎԱՐԴԻ

ՔԱՂՑԱԽԵՆԻՒ ՀԱՄԱՐ.

2-

Վարդերը ընտրէ՛, ինչպէս յիշուած է, և ըռուպ վարդի ջուրը վերոյգրեալ եղանակաւը խաշէ և պարզէ. ընտրուած վարդերդ կշռէ՛ և հինգ գրուանքայ վարդի համար առ երեք հատ լաւ լիմոնի ջուր կտաւով քաշմէ՛, ընտրած վարդ լից մէկ մաքուր ապակեոյ ամանի

մէջ լիմոնի ջուրը լից վսէն և ձեռքով ճմլէ՛, մինչեւ որ
լաւ փափկանայ և թող մնայ կէս ժամաշոփի. ապա կըշ-
ռէ՛ շաքարը մէկ բաժնի համար հինգ բաժին (1) և
լից վրան առած վարդերիդ կարմիր ջուրը և սառը ջուր
և ապա եփէ՛, ինչպէս միւս վարդը. սորա թանձրաչափն
կարելի է փոքր ինչ աւելի բերել մէջը թթու լինելու
համար : Այս տեսակ քաղցրաւենիի գոյնը շատ բաց
կարմիր կըլինի: Ոմանք վարդով քաղցրաւենին առանց
լիմոնի եփելու ժամանակը թանձրաչափին մօտենալուս
փոքր ինչ զածի իւղ (серная кислота) կըձգեն վըէն :
այնքան որ գոյնը իւր ուզած տեղը բերէ :

ՄԱՆՈՒՇԱԿԻ ԾԱՂԿՈՎ ՔԱՂՅՐՍԻԵՆԻ .

3-

Մանուշակը Մարտ ամսոյ մէջ կամ շատ անգամ
Փետրուարի կիսիցը կըքացուի և Ապրիլը չըքացած՝ կը-
վերջանայ:

Մանուշակի ծաղկներն մէկ քանի տեսակ են, բայց
քաղցրաւենիի մանուշակն այն է, որ ամէնից ուշ կըքա-
ցուի և շատ հոտաւէտ ու կապտագոյն է և ծաղկի տե-
րեները խիստ բարակ են, որ կոչուում է ծիրանի մա-
նուշակ. սորա գերազանց տեսակը Հայաստան կըդտնուի:

Այս տեսակ մանուշակի ծաղկելը ընտրէ՛, որ բնաւ
մէջը ուրիշ բան չգտնուի, մաղէ՛ լայն մաղով և կշռէ՛.
երկու բաժինն առանձին գի՞ր և կէս բաժինն առան-
ձին . այս կէս բաժնի ջուրը առ այնպէս, ինչպէս որ

(1) Այս տեսակին չորս բաժին ևս կարելի է դնել.

գրեցինք վարդի ջուրը առնելու համար, և բարակ կը տաւով քամէ՛, ապա երկու բաժնի համար շաքար կոտորէ՛ և կշռէ՛ վարդի նման մէկ բաժնին վեց բաժին, մնացածն եփէ՛ վարդի նման . բայց միայն սորա գոյնը աւելի գեղեցկացնելու համար, երբ եփը թանձրաչափին կը մօտենայ, անպատճառ պէտք է փոքր լիմոնի ջուր կամ աղ դնել, որ գոյնը գեղեցկանայ, բայց ոչ այնքան, որ թթուութեան համի նշոյլը առնուի, և մանր ամանների մէջ լցնելով պահէ՛: Այս քաղցրաւենին ևս կարելի է շենել շաքարը կտրելով, ինչպէս ասացինք վարդի քաղցրաւենիի համար:

ՎԱՐԴ ԵՒ ՄԱՆՈՒՇԱԿ Ի ՄԻԱՍԻՆ ԽԱՌՆ

ՔԱՂՅՐԱՒԵՆԻ.

A.

Ըստ որում մանուշակը երկու կամ մի և կէս ամիս առաջ կը բացուի քան զվարդը, ուստի մանուշակի քաղցրաւենին իւր ժամանակին եփէ՛ և պահէ՛. երբ որ վարդի ժամանակն գայ, վարդի քաղցրաւենին ևս եփէ՛, ինչպէս վերը ասացինք և երբ տեսար, թէ տերենները փափկացան և իւր թանձրաչափին մօտեցաւ, այն ժամանակը առանց կրակիցը յետ առնելու վարդի քաղցրաւենու չափովն ևս մանուշակի քաղցրաւենի լից, դիր վըան և մի քանի անգամ խառնելով, 'ի միասին եփէ՛ մինչեւ իւր առաջին թանձրաչափին հանիլը . ապա յետ ա՛ռ և մանր ամանների մէջ լցնելով՝ բերանը 12

Ժամ բաց թողարկուց յետոյ թաց կտաւով ծածկէ՛ և
պահէ՛ :

ՀԻՄՈՆԻ ՆԱՐՆՁԻ ԿԱՄ ԱՊԵԼՍԻՆԻ ԹԱՐՄ

ԾԱՂԿՈՎ ՔԱՂՅՐԱՒԵՆԻ .

5.

Այս ծաղկները թէ առանձին առանձին և թէ
խառն 'ի միասին առ և վրայի լաւ ու դալար ծաղ-
կները հատ հատ ընտրէ՛ ու մաղէ՛ այնպէս , որ մէջը
զեղին սերմերիցը չմնայ . բայց որովհետեւ այս ծաղկը-
ները շատ անգամ ցխոտ և հողոտ են լինում . կարող ես
մի անգամ լուանալ , ապա կշռել լցնել սառը ջրի մէջ
և խաշել մինչև բաւականին փափկանայ և ապա քամել
մէկ բաժնին հինգ բաժնին շաքար կշռել և ածել 'ի միա-
սին պղնձի մէջ և վըէն պարզ սառը ջուր լցնել : (Այս
ծաղկի ջուրը , ինչպէս և վարդինը ու մանուշակինը ,
հարկաւոր չէ իրան ջուրն առանձին առնել և մէջը լըց-
նել) : Սառը ջուրը այնքան լից , որ պղինձը ծռելուս
ջուրը երեխ , ապա դի՞ր կրակի վերայ ու եփէ՛ . երբ մօ-
տեցաւ առաջին թանձրաչափին , քրքումի (զափոան)
ջուր լից վըան գոյն տալոյ համար , այնքան , որ կարող
լինի գոյնը փոխել :

Փրքումի ջուրը այսպէս պէտք է պատրաստել . քըր-
քումը պէտք է լցնել փոքր ամանի մէջ և վըէն եփ ե-
կող ջուր ածել , թողուլ երեք ժամաշափ մինչև նիւ-
թը դուս տայ , ասպա այս ջրիցը պէտք է լցնել քաղց-

բաւենու վերայ (1): Գոյնը տալուց յետոյ այնքան պէտք է եփել, մինչև հասնի առաջին թանձրաշափին . բայց սորայ ծաղկներն ևս պէտք է շուտ շուտ ծամելով փորձել, որ պինդ եղած ժամանակը ջուր լցուի վրէն, ինչ պէս վարդինը:

Ա.յս քաղցրաւենին կարելի է երբեմն թթու ևս շննել: Սորա համար կարող ես լիմոնի ջուր կամ լիմոնի աղ ածել թթուութեան համին համեմատ. միայն այն ժամանակն պէտք է մարդարտաձեւ թանձրաշափին հասցնել. իսկ եթէ աւելի թթուաշ շննելու լինիս, պէտք է երրորդ թանձրաշափին հասցնես . սակայն ամենից լաւն այն է, որ թթու չինի, կամ թէ լինի, այն ևս շատ սակաւ, այնքան, մինչև հասնի երկրորդ թանձրաշափին, որովհետեւ թանձրաշափն աւելի եղած ժամանակը ծաղկեներն կըլինին իրքեւ կաշի:

Ա.յս քաղցրաւենին ևս կարելի է շաքարը կտրելով եփել ինչպէս վարդինը:

ՔԱՂՅՐ ՆՇԻ ԾԱՂԿՈՎ ՔԱՂՅՐԱՒԵՆԻ.

6.

Ա'ռ քաղցր նշի բացուած և թարմ ծաղկներն և ծաղկի տերեւներն հատ հատ ընտրէ'. ապա կշռէ' մէկ բաժնի համար հինգ կամ չորս բաժնին շաքար և 'ի միասին լից պղնձի մէջը, վրէն այնքան ջուր լից, որ շաքարը հալցնելոյ և ծաղկներն եփելու համար բաւա-

(1) Ա.յս գոյնը կըտան քաղցրաւենու գեղեցկութեան համար, իսկ չկամնեցողը կարող է չտուր:

կան լինի, յետոյ եփէ՛, մինչև առաջին թանձրաշափին
հասնիլը. և եթէ ծամելով տեսար, թէ ծաղկներն դեռ
հումեն. կրկին ջուր աւելացրու և եփէ՛ մինչև հասնի
առաջին թանձրաշափին և ապա լից ամանների մէջ:

Ա.Ի. ԾԻՐԱՆԻ (զայսի) ԾԱՂԿՈՎ.

7.

Լաւ ծիրանի ծաղկով եփելու կերպն այն է , ինչ
որ քաղցր նշինը , ուստի սորա համար բան գրելն աւ
ւելորդ է :

ՄԻԽԱԿԻ (զարանֆիլ) ԾԱՂԿՈՎ.

8.

Միխակի ծաղիկն երկու տեսակէ , մինն վայրի է հաւ
մարուում , որ միակարգ ծաղկներով է (եալնիսաթ) և հու-
տը խիստ նուրբ և սակաւ . իսկ միւսն ընտանի , որ բազ-
մաթերթ է և կոչումէ ՂԱԹՄԵՐ . սաստիկ հոտաւէտ
զանազան գոյներով:

Այս երկրորդ տեսակ մեխակի ծաղկիցն առ , (եթէ
ճարուի լաւ , է որ ամէնը միագոյն լինին , իսկ եթէ ոչ ,
գոնէ յարմարաւոր լինին մի մեանց) խառնէ իրար հետ
և ծաղկի տերեւներն հատ հատ ընտրէ՛ , մեծ մաղով մա-
ղէ՛ և խաշէ՛ մինչև լաւ փափկանան . ապա մի բաժնի
համար կշռէ՛ հինգ կամ չորս բաժին շաքար և խառ-
նէ՛ ծաղկի հետ , լից պղնձի մէջ , վրէն այնքան ջուր
լից , որ շաքարը հալեցնէ և եփէ . եթէ տեսար , որ մօ-
տեցաւ առաջին թանձրաշափին , բայց ծաղկներն ծա-
մելով փորձեցիր , որ չէ փափկացել . կրկին սառը ջուր
աւելցրու վրէն և եփէ՛ մինչև առաջին թանձրաշափին

Հասնիլը : Ապա յետ առ և պղնձի միջե բարակ եփը
կտրուելուց յետոյ մէջը մի քանի կաթիլ մեխակի իւղ
կաթեցրու և միւս քաղցրաւենեաց նման մանր ամանա-
ների մէջ լից : Այս քաղցրաւենին ևս կարելի է շաքա-
րը կտրելով շինել, ինչպէս և վարդը :

ՍՊԻՏԱԿ ԶԱՄԲԱԽԻ ԾԱՂԿՈՎ.

9.

Չամբախի ծաղկի սպիտակներն առ և մի անգամ
լուած, որ վրայի զեղնութիւնը երթայ, զգոյշ լինելով,
որ զեղին սերմերիցը չգնայ ծաղկի հետ, ապա կշռէ
մի բաժնին հինգ կամ չորս բաժին շաքար և եփէ՛ քաղց-
րը նշի եղանակաւ :

ՅԱ.ՍՄԻԿԻ (Եասաման) ԾԱՂԿՈՎ .

10.

Յասմէկի ծաղիկը մի քանի տեսակ է, և թէպէտ ա-
մենիցն ևս կարելի է քաղցրաւենի շինել բայց ամէնից
լւան այն բարձր ծառերի վերայ գանուածն է, որոյ
փայտիցը Պօլիս ծխամուրջ կըշինեն: Այս ծաղիկը առ
ընտրէ՛ և եփէ՛ նշի ձեռվլ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԾԱՂԿԵՂԵՆ ՔԱՂՑՐԱԿԵՆԵԱՅ ՎԵՐԱՅ .

Այսքան տեսակ ծաղկի քաղցրաւենիքը տեսնելով
ամէն մարդ կարող է հետեւեցնել և ճանաչացնել, թէ
ուրիշ ծաղկներից ո՞րն է անվաս և ո՞րպէս կարելի է ե-

փել միայն գիտել պէտք է : որ այն ծաղիկն , որոյ տեսրեւն մեխակի նման հաստ է , պէտք է տռաջ լոկ ջրով խաշել :

Յաէպէտ շաքարի որքանութիւնը մի բաժնին վեց կամ չինգ բաժին զբեցինք ինչպէս վարդի և մանուշակի համար , բայց լաւ է չինայել և միշտ վեց բաժին դնել , ըստ որում երկար ժամանակ պահելու . համար օշարակը կըծծէ , իսկ եթէ կարճ միջոցի համար եփուի , կարելի է չինգ բաժին դնելը : Այս ևս հարկաւոր է իմանալ , որ ընդհանրապէս ամէն աեսակ քաղցրաւենին ևս մինչեւ մի երկու շաբաթ չմնայ և շաքարը իւրեն մէջը չծծէ . մանաւանդ ծաղկով քաղցրաւենիքն , ուտաելու համար անախարժ կը ինի . իսկ վարդի քաղցրաւենին որքան հնանայ մինչեւ մի կամ երկու տարուանը , միայն եթէ սկզբումը լաւ եփած է , շատ գովելի և աղնիւ կը լինի :



ԳԼՈՒԽ Բ.

ՄԱՐԴԱՐՏԱԶԵՒ Բ. ԹԱՆՉՐԱԶԱՓԻ ՎԵՐԱՑ

ԳԱՂՅՐԱԿԵՆԻՔ .

ՄԱՆԻՆԱՑՈՎ , (աղամ վելիի) .

Ա.

Մէկ բաժին մալինայի համար կշռէ' երկու բաժին շաքար և կտրէ' ինչպէս զրուածէ (1) , քամէ' , զի՞ր

(1) Նաքար պարզելու խրառն տիս հինգերորդ երեսը :

Երակին . թող եփի մինչև երկրորդ աստիճան թանձրա-
շափին հասնիլը (2) , ապա յետ առ , վէր զիր , թող սառ-
չի , երբ որ սառեցաւ , մալինան լից մէջն , թող այնքան
եփի , մինչև իւր բնական ջուրն քաշուի . յետոյ կրկին
եղած ջուրն ևս քաշէ և հասցրու երկրորդ թանձրա-
շափին . ապա յետ առ և լից մանր ամանների մէջ :

ԵԼԱԿՈՎ . (ԶԻԼԵԿ , ԿԼՈՒՊՆԻԿ) .

12.

Ելակների ներքի կոթերը ընտրէ . լուա սառն ջը-
րով ապա վերյգրելոյ նման կշռէ և եփէ :

ՎԱՅՐԵՆԻ ԵԼԱԿՈՎ . (Եապան չելէկի) .

13.

Վայրենի ելակը համարեա ամէն տեղ կըգտնուի
և շատ երկարատեւ է , այնպէս որ շատ անդամ ձիւնի
տակին ևս կը մնայ : Այս պտուղն կշռէ և մալինայի կեր-
պով շինէ :

ԱՆԱՆԱՍ ԿՈՉԵՑԵԱԼ ՊՏՂՈՎ .

14.

Այս պտուղը շատ հաղուագիւտ է իրեն շատ տաք
տեղ սիրելու համար , այնպէս որ շատ տեղ սրան ա-

(2) Երկրորդ թանձրաշափի խրառը տնա տասն երկու երեսը :

ռանձին տաք սենեակում մշակումեն ջերմութեամբ .
ուստի եթէ քաղցրաւենի շնելու լինիս . մալինայի կեր-
պովն կարես եփել :

ՄԱՆՐ ԵՒ ԽԱԿ ՆՈՒՇԻՑ , ՈՐ ԱՍՈՒՌԻՄԵ (ցոկոլակ
Շակոլակ կամ չաղալապատէմ) .

15.

Ա'ռ մանր և թարմ նուշի ցոկոլակը (բայց առա-
ջուց պատրաստած ունեցի՛ր սորա համար մոխրաջուր) (1).
այս մոխրաջուրը դի՛ր կրակին , երբ եփն եկաւ , նուշը
կշռի՛ր լից մէջն ու խաչէ' . երբ բաւականին խաշուե-
ցաւ , հանէ' միջնեցն և սառը ջրի մէջ լից և երկու ե-
րեք սնդամ սառը ջուրը փոխէ՛ : Դեռ սառը ջրիցը չու-
հանած , պատրաստի՛ր լաւ քաղցր սառն ջրախսառն մեղք:
Նշերն երբ սառը ջրից հանեցիր , ուրիշ ջրով շփելով
լուա , որ վըէն մոխրաջուր չմնայ , ապա լից այն մեղքի
մէջը և դի՛ր կրակին , թող այնքան եփի , մինչև մեղքա-
ջուրը քաշուի և բաւակին թանձրանայ . ապա յետ առ
ու լից փլաւքամիչի մէջ թող միջի մեղքը քամուի . յե-
տոյ կշռէ' մէկ բաժին նշի համար մի և կէս բաժին
շաքար և կէս բաժին մեղք , այնպէս , որ մեղքն և շա-
քարն 'ի միասին նշի երկու բաժինն լինին . շաքարն և
մեղքն 'ի միասին խառնէ' և ձուով կտրէ' . թաց կտաւով
քամէ' , դի՛ր կրակի վերայ . թող եփուի մինչև գայ հաս-
նի առաջին թանձրաչափին , ապա յետ առ որ վէր դի՛ր .

(1) Մոխրաջրով եթէ խակ կանաչ լուրիա , բակլայ և այլ այսպիսիք
ես խաչես , իւր բնական դոյնն ես կըպահէ :

թող սառչե, երբ սառեցաւ, նշերդ լից մէջը և գի՞ր կը-
րակին մինչև հասնի երկրորդ թանձրաշափին կամ փո-
քը ինչ աւելի, որովհետեւ թէպէտ սորա մէջը թթու-
շկայ, բայց մեղը լինելու պատճառաւ երկրորդ թանձրաշա-
փին հասցնելը վնաս չունի և կամ նրանից փրքը ինչ
անցնելը, ապա յետ առ կրտակիցը, թող սաստիկ տաքու-
թիւնն երթայ և լից ամանների մէջը : Սորա ամանն
մեծ ևս լինի վնաս չունի:

ՍՊԻՏԱԿ ԿԵՌԱԾՈՎ.

16.

Ա. սպիտակ կեռասը (շատ հասած և ճիշտած
չենի), լուա, կոթերն և, կոթիշներն հանէ՛ և մէկ բաժնի
համար մի և, կէս բաժին շաքար կարէ՛, ձուով պարզէ՛,
կրկն եփէ՛ մինչև առաջին թանձրաշափիցն անցնի.
ապա թող սառչե, սառչելուց յետոյ կեռասը լից մէջը
և եփէ՛ մինչև հասնի երկրորդ թանձրաշափին, ապա
քաշիր սառելուց յետոյ ամանների մէջ: Սորա աման-
ներն ևս եթէ մեծ լինին վնաս չունին:

ԿԻՑՐՈՆՈՎ, (Աղած քառունու, Պալանկ)

17.

Ա. յս պտուղը կընմանի մի մեծ տեսակ լիմոնի, որ
կ. Պօլիս շատ կընարուի, և թէպէտ վրաստան ևս բե-
րումեն բաքուովն, բայց կ. Պօլսոյ գտնուածն թէ մե-
ծութեամբ, թէ պնդութեամբ, թէ քաղցրութեամբ և

թէ համովն շատ դերազանց է . իսկ բաքուովը բերածը
մանր է , փափուկ , անհամ և խիստ անհոտ

Առաջ կետրոնն և վրայի կեղեն բարակ կճպէ՛
և սրա համար յատուկ շինուած արիշտայաձև հանող
ռանտայով յդկէ՛ , եթէ յրկիչ և շլնի , գանակով բարակ
կոտորէ՛ արշտայի նման երկայն երկայն . ապա կշռէ՛ մէկ
բաժնի համար մի և կէս բաժին շաքար , ձուով կտրե-
լով քամէ՛ , եփէ՛ մինչև առաջին թանձրաչափին գալը¹
և թող սառչի : Այս միջոցումը մի մեծ աման ջուր ե-
ռացրու և կոտորած կետրոնդ բոլորն 'ի միասին լից մի
մաքուր կտաւի մէջ . չորս ծայրը թոյլ կապէ՛ , դի՛ք այդ
կրակի վրայի եփման ջրի մէջ . երբեմն երբեմն ևս զըռ-
դալով դէպի վայրը ճնշելով : Նրբ որ փոքր խաշուեցաւ
և դառնութիւնը դուս գնաց , հանի՛ր ու դի՛ք մէկ մեծ
աման սառը ջրի մէջ . ապա այն տեղից ևս հանի՛ր և
փոքր ժամանակ կախ տո՛ւր , որ ջուրը բոլորովին գնայ .
յետոյ կտաւիցը հանէ՛ . լից այն սառնացեալ շաքարի
մէջը , դի՛ք կրակին թող եփուի մինչև երկրորդ թանձ-
րաչափին հասնիլը :

Դառնութիւն ունելու ցանկացողը կարէ առանց
խաշելու շինել : Սորա համար մի ուրիշ եղանակ ևս կայ ,
որ թթու և հոտ կըդրուի մէջը և երրորդ թանձրաչա-
փովն կեփուի , որոյ համար կըտեսնուի երրորդ դլխու-
մնն , այն տեսակ քաղցրաւեսեաց կարդումը :

Այս քաղցրաւենու ամանների ևս մանրն է լաւա-
գոյն :

ՓՈՐԹՈՒԹՅԱԼԻ (ապելսինի) ԿՃԵՊՈՎ.

18.

**Փորթուքալի կեղեը կոտորէ' արիշտի նման երկար
երկար կամ այլ և այլ գեղեցիկ ձևերով, կշռէ' և խա-
շէ' մինչև լաւ փափկանայ . ապա մէկ բաժնի համար
մի և կէս բաժին շաքար առ, մանր կոտրատէ' և կեղեը
հետը 'ի միասին լից պղնձի մէջը, վրէն այնքան ջուր
լից . որ պղնձը ծռելուս փոքր ինչ ջուր երեխ, դի՛ք կը-
բակէն, թող եփի մինչև երկրորդ թանձրաչափին հաս-
նիլը , ապա լից ամանների մէջ , որ եթէ մեծ ևս լի-
նին վնաս չունին: Եթէ կամիս, կարող ես սորա համար
մէկ բաժին շաքար և կէս բաժին մեղը գնել և թանձ-
րաչափին փոքր ինչ աւելի բերել:**

ՆԱԲԻՆՁԻ ԿԵՂԵՒՈՎ.

19.

**Փորթուքալի կեղեի կերպն կարող ես սորա վերայ 'ի
գործ դնել և եփել:**

ՔԵՊԱԹ ԼԻՄՈՆՈՎ.

20.

**Քէպաթ կոչեցեալ լիմոնն կ. Պօլիս կըդտնուի, ին-
քը բոլորակ և բաւականին մեծ լիմոն է. մէջը ինձորի**

նման մսալի է և կորիզներու (կուտ), հետը փոքր ինչ թը-
թու անջուր միս ունի . չկարծեմ թէ Վրաստան այս
տեսակիցը գտնուի:

Ա. այս լիմոնը բարակ կճպէ՛, բոլորաձեւ կամ այլ
գեղեցիկ մանր մանր ձևերով կտրատէ՛, կշռէ՛ և խա-
շէ՛ . խաշելու ժամանակը ջօի մէջը կէս կտրած և չը-
կճպած լիմոնդ դի՛ր և մէկ բաժնի համար մի և կէս բա-
ժին շաքար կշռէ՛ և 'ի միասին գործածէ կիտրոնինը-
ման և եփէ մինչև երկրորդ թանձրաչափին գալը . ա-
պա երբ փոքր ինչ սաստիկ տաքութիւնը անց կենայ ,
լից մանր ամանների մէջ:

ՏԱՆՉԱՉԵՒ ԼԻՄՈՆ (արմուտ լիմոնի)

21

Ա. յս տեսակ լիմոնն ևս Կ. Պօլիս կրդտնուի . որ մի
և նոյն տանձի ձև ունի . քէպաթի նման մէջը մի քա-
նի կուտեր ունի խիստ փոքր և թթու մսով:

Ա. այս լիմոնները և իրանց գեղեցիկ ձևը չփչա-
ցնելու համար ողջ ողջ այսպէս ընտրէ: **Ա.** մի ձկութ
մատնաչափ բարակ թոնաքայի խողովակ երկու մատնա-
չափ երկայնութեամբ . այս խողովակովն զգուշութեամբ
ներքի կողմիցը ծակելով միջի կուտերն և թթու մի-
սըն հանէ՛, ապա իրան կճպէ՛, կշռէ՛ , խաշէ՛ և եփէ այն-
պէս, ինչպէս գրուած է քէպաթ լիմոնի և կետրոնի հա-
մար:

ՍԱՆԻ ԽՆՁՈՐՈՎ.

22.

Կ. Պօլսումը մի տեսակ մանր խնձոր կայ, որ շատ քաղցր և հոտաւէտ է, որ կոչուում է միսքէթ (1) : Այս խնձորիցը վրաստան չի ճարուում և թէպէտ կայ մանրը խնձոր, բայց քաղցր հոտ չունի. ուստի վրաստանի մէջ խնձորով քաղցրաւենի կարելի է շնոր Ախալցիոյ հոտաւէտ և քաղցր խնձորիցը, որ թէև մէծ է, բայց կարելի է եփելուց յետոյ գործածելուս երկու բաժնել :

Այս խնձորիցն այսպէս կըշինուի : Առ այս խնձորը, երկու գլուխը կտրէ և դանակով կամ բթաշափ լսյն խողակով, մէջի կուտերը և անսպիտան տեղերը հանէ, որ ամենելին չի մնայ. ապա կճպէ՛ և մէկ կողմիցը զի՛ր սառը ջրի մէջ, որպէս զի չսեանայ . երբ որ բոլորը կճպեցիր, կշռէ՛ ու լից կրակի վերայ ունեցած մաքուր և եփուող ջրի մէջը. հետո էլ ձգէ մի լիմոն իրան կըճպամին երկու բաժանած, թող այնքան խաշուի, մինչեւ փափկանայ, բայց մօտդ պէտք է ամանով սառն ջուր ունենաս, որպէս զի որը նրանցից տեսնի. թէ փափկելէ՛, հանես այն ջրի մէջը ձգես. խաշուելից յետոյ մէկ բաժանի համար մէկ բաժին շաքար և կէս բաժին մեզը կըշառէ՛ և կտրէ (եթէ լաւն շնոր լինիս մի և կէս բա-

Այս միսքէթ խնձորի տեսակը շատ քաղցր և հոտաւէտը գտնաւում է հայրաստան և կոչուում է շաքարկենի խնձոր:

Ժինն էլ շաքար լինի) մեղըն և շաքարն 'ի միասին կամ
թէ միայն շաքարն կտրելուց և քամելուց յետոյ կըր-
կին եփէ՛ մինչև երկրորդ թանձրաչափին դալը , ապա
թող որ սառչի՛: Շաքարը սառչելուց յետոյ խնձորները
հանէ սառը ջրիցը և մաքուր չոր կտաւով ցամաքա-
ցրու , դիր շաքարի մէջը և կրակին դի՛ր կրկին եփէ՛ .
երբեմն երբեմն ևս քափիքիրով ծանր ծանր խառնէ՛ , որ
միահաւասար եփին . երբ որ կըհասնի երկրորդ թանձ-
րաչափին , յետ առ ու թող մնայ պղնձումն երեք չորս
ժամաչափ կամ մէկ գիշեր , որ խնձորի միջի ջուրը դուս-
տայ , յետոյ դիր կրակին թող եփուի . մի քանի անգամ
եփը դալեց յետոյ կըհասնի երկրորդ թանձրաչափին .
ապա առ և պահէ ինչ տեսակ ամանի մէջ որ կուզես :

Այս տեսակ քաղցրաւենին աւելի ախորժելի և ան-
վընաս է հիւանդաց համար , եթէ առանց մեղըի շին-
ուի : **Այս** խնձորով քաղցրաւենին կարելի է կարմիր
ծաղկով ներկել , եթէ կարմիր դոյն տալը ախորժելի հա-
մարուի :

ՄԱՆՐ ԵՒ ԿԱՐՄԻՐ ԱՆԿՈՒՑ ԶԱՄՉՈՎ .

25.

Այս չամչի կոթերն ընտրէ , լուս , կշռէ և դի՛ր
քիչ դոլ ջրի մէջ , թող մնայ երեք ժամից աւելի . ապա
մէկ բաժնի համար կշռէ մի և կէս բաժին շաքար ,
կոտրատէ և լից պղնձի մէջ և չամիչն էլ ջրիցը հանէ
և լից վըէն . նորա վերայ այնքան ջուր ածա , որ պղին-
չը ծռելուս ջուրը երեխ ապա դիր կրակին եփէ և որ-

քան ու քափ բռնէ երեսին, քաշէ և թող այնքան եփաւի, մինչև հասնի երկրորդ կամփոքը ինչ աւելի թանձարացափի: Այս քաղցրաւենին աւելի լաւն կըլինի, եթէ գեղնագոյն շահնից շնորի որ առուռմէ սապայ:

ԾԻՐԱՆԻ ԼԱԻ ԶԲՈՎ. (Հոր Պայտի)

24.

Լաւ մեծ մեծ չերերը մէկ կողմիցը ճղելով միջի կուտերը հանէ, կշռէ, լուա և դիր սառը ջրի մէջ, թող մնայ վեց ժամաշափ, ապա մէկ քամար մի և կէս բաժին շաքար կոտրէ և երբ որ տեսնես, թէ չերը փափկել է, հանէ ջրիցը և լից շաքարի վերայ և այնքան ջուր լից վրան, որ կարողանայ շաքարը հալցնել, ապա զիր կրակին. (սորա կրակն շատ մարմանդ և քիչ պէտք է լինի, որ ծանր և կամաց կամաց հիդարով եփուի) և երեսին բռնած կեղտը անշատը առ և թող եփուի մինչև երկրորդ թանձրաչափին հասնիլը: Երբ որ կրտեսնես, թէ թանձրաչափին մօաեցելէ և չերը դեռ չէ եփուած ու մեծացած, փոքր ինչ սառը ջուր աւելցրու վերան և թող եփուի մինչև երկրորդ թանձրաչափին հասնիլը ապա լից մեծ ամանսների մէջ:

ՄԱՆԻ ԶԱՄԻՉԸ, ԶԻՐԸ ԵՒ ԴԱՄՍՎԿՈՍԻ ՓՍՏԱՑՆ (Համ-
ֆստիլը) ԻՐԱՐ ՀԵՏ ԽԱՌՆ ՔԱՂՅՐԱՒԵՆԻ.

25.

Չամչի և չրի քաղցրաւենիքը առանձին առանձին
եփէ, ինչպէս գրուածէ և երբ թանձրաչափին կրհաս-
նին, իրար խառնէ միաչափ քանակութեամբ, բայց ա-
ռաջուց դամակակոսի փառացն պատրաստէ այսպէս: Մի
ամսն ջուր տաքացրու, երբ ոկտաւ ջուրը կռալ փառան
լից մէջը և շուտ շուտ նայիր թէ կրզելը կրհանուի՞.
երբ հասաւ այն ժամանակը, ետ առ ու կճպէ, ցամաք
կուառով չորացրու և լից այն քաղցրաւենու մէջը, խառնէ
և թող մի երկու անդամ՝ իրար հետ եփ գան, ապա
յետ առ ու լից ամանների մէջը;

ԿՈՃՈՎ (տաք կոճ, զանձաքիլ.)

26.

Այս չոր կոճով շինած քաղցրաւենին չէ կարելի
համեմատել Պարսկաստանիցն եկած լսւ քաղցրաւենուն.
միայն եթէ նորանից չինի և պէտքը գայ, այսպէս կա-
րելի է շինել:

Առ չոր կոճի մեծ մեծ կտորները, ածա պղնձի մէջ
և մինչեւ բերաներ ջրովլից, թող մնայ 12 ժամ: Միւս
օրը ջուրը փոխէ և դիր հանդարս կրակին կամ սաս-
տիկ տաք տեղ, որ տաք մնայ առանց եռ դալու 12
ժամ: յեայ այդ ջուրն ևս փոխէ և դիր կրակին ե-

փելով խաշէ երկար ժամանակ մինչեւ լաւ փափկանայ .
ապա յետ առ ու վըայի բարակ կեղևներն հանէ և ընտա-
րածներդ մէկ կողմիցը լից ստոր ջրի մէջ . երբ որ պըրծ-
նիս , կշռէ ու պատրաստիր բաւականին քաղցր մեղրա-
ջուր , կոճը լից նրա մէջը և լաւ եփէ հանգարտ կրա-
կով ապա յետ առ , հանէ մեղրաջրիցը , լից պղնձի մէջ
և մէկ բաժնի համար մի և կէս բաժին շաքար կոտո-
րէ և կէս բաժին էլ լաւ մեղը լից վըան և այնքան ջուր
ածա , որ երեսն առնի և դիր հանգարտ կրակի վերայ .
թող այնքան եփուի , որ երկրորդ թանձրաչափիյն անց
կենայ . ապա յետ առ ու ամանների մէջ լից պահէ :

Կոճը այսպէս ևս կրփափկացրուի : **12** ժամ թըր-
չելուց յետոյ երկար ժամանակ հողի մէջ թաղէ մինչեւ
փափկանայ , ապա հանէ , խաշէ և կրակին եփէ : Կարե-
լի է նոյնպէս թըրչել , խաշել և կեղևահան անելուց
յետոյ մի դիշեր կրաջըի մէջ պահէել , ապա հանել .
լուանալ ծակծկել խաշել . ջուրը թափել և ապա միւս
գործողութիւնները կատարելով եփել :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ

ԵՐԿՐՈՐԴ ԹԱՆՉՐԱԶԱՓԻ ՎԵՐԱՅ ԿՐԱԶՐՈՎ ՔԱՂՅՐԱԿԵՆԻՔ

ՇԱՏ ՄԱՆՐ ԽՍ.Կ ԿԱՆԱԶ ԼԻՄՈՆՈՎ *

27.

Ճատ մանր ու կանանչ լիմոնը կշռէ . լից առաջուց
պատրաստած մի աման կրաջըի մէջ . թող մնայ վեց ժամ
ապա հանէ կրաջըիցը , մի քանի անգամ լուա , ասեղով

տեղ_տեղ_ ծակծկէ և խաշէ . խաշելուս մի մեծ լիմոն
մէջտեղեցը երկու ճեղքէ , առանց կճպելու ջուրը քամէ
մէջը և լիմոնի երկու կտորն մի շատ փոքր էլ պաղ-
լեղ (շիպ) էլ հետը նոյնպէս դիր մէջը . որ չեւ սեանայ:
Երբ որ տեսար , թէ ատամիդ տակին ծամուռմէ և փրշ-
րուռմէ , հանէ այն ջրիցը և լից սառը ջրի մէջ . ա-
պա պատրաստէ բաւականին մեղրաջուր , խաշէ լիմոնը
այն մեղրաջրովը և էնտեղից հանէ , ապա մէկ բաժնի
համար կշռէ մի և կէս բաժին շաքար , շաքարը կո-
տորէ , լիմոնի հետ լից պղնձի մէջ , դիր կրակին , վրան
բաւականին ջուր լից . թողեփուրի մինչեւ հասնի երկրորդ
թանձրաչափին , ապա դաստրկէ մանր ամանների մէջ :

ՄԱՆՐ ԵՒ ԽԱԿ ԹԶՈՎ .

28.

Մանր և կանանչ թզերը լուա , կշռէ , դիր կրաջրի
մէջ , թող մնայ վեց ժամ . ապա հանէ կրաջրիցը , մի
քանի անգամ լուա , տեղ_տեղ_ ասղով ծակծկէ և խաշէ .
խաշելուս մի լիմոն երկու ճեղկէ , յառաջ ջուրը քամէ
վրան , յետոյ մի քիչ շղի հետ նոյն լիմոնի կտորները ,
ապա մեղրաջրով լուա , եփէ , հանէ ու մի բաժնի հա-
մար մի և կէս բաժին շաքար և կէս բաժին էլ մեղր
՚ի միասին ձուռով կտորէ , քամէ և եփէ մինչեւ հասնի մի
և կէս թանձրաչափին և թող սառչեւ սառչելուց յե-
տոյ թուզը լից մէջը այնքան եփէ , մինչեւ հասնի երկ-
րորդ թանձրաչափին կամ փոքր ինչ աւելի . ապա լից
մեծ ամանների մէջ ու պահէ :

ԽԱԿ ԵՒ ՄԱՆՐ ԸՆԿՈՒԶՈՎ, (ՃԵՆԿՈ, ԿԱԼՎԱԼ.)

29.

Առ միջակ մեծութեամբ ընկոյզները ու բարակ կը ճշապէ. եթէ կամենաս գեղեցկութեան համար առու առու կտրէ (շեշխանայ), լից սառը ջրի մէջ թող մնայ վեց կամ եօթնօր, ամէն օր ջուրը փոխելով. առա կրաջուր շինէ, լից մէջը, թող մնայ 12 ժամ. կրաջրիցը հանելով մի քանի տեղ ծակծկոաէ և մի քանի անգամ լուս. ապա խաշէ մէջը ձգելով մի կտրը շիպ և մի լիմոն իր ջըռ-վըն. երբ որ խաչուեցաւ, հանէ և մեղրաջուվ եփեւ լուց յետոյ առ 100 հատ ընկուզի համար չորս գրուանաքայ շաքար, շաքարի վրէն ջուր լից ու եփ տուր. սառ-չելուց յետոյ ընկոյզը լից մէջը և կրկնն եփէ մինչեւ հասնի երկրորդ թանձրաչափին:

Հատ ախորժելի կրւինի, եթէ սկզբումը մի քանի հատ միխակ ծեծես, կտաւի մէջ կապես և ձգես շաքարի մէջը, որ հետն եփուի և մինչեւ ընկոյզի եփին ել մէջը մնայ հոտ տալու համար. կամ թէ մեխակը երակու կտրէ երկայնութիւնիցը ու կոխէ ընկոյզի մէջ, մի ընկոյզին երկու հատեւ թող հետն եփուի: Երկրորդ թանձրաչափին երբ որ հասաւ, յետ զիր, մեխակը հանէ և քաղցրաւենին լից մեծ ամանների մէջ: Եթէ շաքարի չորս բաժնի համար կէս բաժին ևս լաւ պարզած և մաքրած մելը դրուի, կարող է առանց փշանալու երակար ժամանակ մնալ:

ԶՄԵՐՈՒԿԻՆ ԿԵՎԵՒՈՎ.

50.

Հաստակեղեւ ճմերուկի կեւեն ու վրայի կանանցը
բարակ կճպէ, նոյնպէս միջի կօղմի փափռւիներն ևս կըտա-
րէ, ապա քառանկիւնի, կամ բոլորակ կամ որդիսի և
իցէ գեղեցիկ ձևերով կտրատէ, կշռէ և լից կրածրի մէջ,
թող մնայ 12 ժամ + յետոյ հանէ, մի քանի անդամ
լուա ու խաշէ, մէջն մի կտրած լիման դնելով: Խաշուե-
լից յետոյ կրածրիցը հանէ, մեղքածրով եփէ և ապա մի
բաժնի համար մի և կէս բաժնն շաքար դիր պղնձի
մէջ, կիզեները լից մէջը, վերան չափաւոր ջուր լից,
թող այնքան եփուի, մինչև հաննի երկրորդ թանձրա-
չափին: ապա յետ առ ու լից մեծ ամանների մէջ:

Դ Դ Ո Ւ Ծ Ո Վ.

51.

Մէկ տեսակ սպիտակ, բոլորակ և քաղցր դդում՝
կայոր կ+Պօլիս կասեն հելուաճը խապաղը : Առ այդ դդումը,
կճպէ, կոտորէ ինչ յարմար ձևով որ կամենաս, լից կը-
րածրի մէջ, թող մնայ 12 ժամ: Կրածրիցը որ հանեցիր,
մի քանի անդամ լուա, խաշէ ու առ մի բաժնի հա-
մար մի բաժնն շաքար և կէս բաժնն մեղք, ի միասին
լից պղնձի մէջը, վրէն չափաւոր ջուր լից, թող եփուի,
մինչև երկրորդ թանձրաչափը կամ փոքր ինչ աւելի,
ապա լից մեծ ամանների մէջ:

ՄԱՆԻ ՊՈՐԻՆՃԱՆՈՎ, (պատրճան)։

52.

Մանր պորինճանների անկորիդ կողմի գլուխը կըտարէ՛ ու կձափէ, եթէ կամիս, մանր բոլորակներ շննէ, կամ թէ իւր կոթը վրայն թողնելով մի սիրուն ձեւի բեր և կամ բոլորն ՚ի միասին արիշտայի նման բարակ կոտորէ՛: Այսպիսի որ ձեռքն կամիս կատորէ, կշռէ, լից կրածըի մէջ, թող մնայ երեք կամ չորս ժամ՝ ապա հանէ՛ մի քանի անգամ լուա և մէջը մի կտրած լիման գնելով խաշէ՛. խաշուելուց յետոյ կրկին մեղքածըով խաշէ և յետոյ մի բաժնի համար մի և կէս բաժին շաքար և չորս բաժնի մինն մեղը ՚ի միասին ձուով պարզեցրու, քամէ և սառչելուց յետոյ լից պորինճանը մէջը, գիր կրակին թող եփի մինչեւ երկրորդ թանձրաչափն, ապա լից միջակ ամանների մէջ:

ՄԱՆԻ ԽԻԱԲՈՎ։

55.

Ա՛ռ Ճկութ մատի մեծութեամբ խիարը, որ դեռ մէջը բնաւ կորիդ չունենայ, շորով լաւ շփէ ու լուա, լից կրածըի մէջն, թող մնայ տասն ժամաչափ . ապա հանէ մի երկու անգամ սառը ջրով լուա և խաշէ, մէջը փոքր ինչ շիպ ձգելով, այնքան խաշէ, որ ծամեւ լուա տառամիդ տակին փշուի . ապա կրկին լից սառը ջուրը և մէկ բաժնին մի և կէս բաժին շաքար

կշռէ ու մանը կոտորէ և 'ի միասին խիարի հետ լից պղինձը և վրան բաւականին ջուր ածելով եփէ մինչեւ հասնի երկրորդ թանձրաչափին , ապա լից ամանների մէջ :

ԶՆԾԱՂԿՈՎ. (լոլովուղ.)

54.

Այս ձնծաղին այն է , որ ֆետրուար ամսոյ վերջեւ ըին կամ Մարտի մէջ կըքայուի զեռ ձիւնը նոր վերա կացած ժամանակը , ինքն է կապտագոյն և հատ հատ բուսած : Այս ծաղկներու արմատը հանէ , վրայի սեաւ կեղեք հանիր , մնացած ապիտակ սխտորի պՃեղի նման միսը մի քանի անգամ լաւ սառը ջրովլուա , ածա կըք րաջըի մէջը . թաղ մնայ 12 ժամ . ապա կրաջրիցն հանէ , մի քանի անգամ ևս լուա և մէկ քանի տեղից քուրոցով ծակծկոտէ ու բաւականաչափ խաշէ . ապա յետ առ կրակիցը լից սառը ջրի մէջ ու կշռէ . մէկ բաժնի համար մի և կէս բաժին շաքար կօտորէ և պղնձի մէջ լից վրէն չափաւոր ջուր լից զիր կրակին , թաղ եփի . մինչեւ երկրորդ թանձրաչափին հասնիլը : Արան կարեւ լի է փոքր ինչ գոյն տալ քրքումի (զափոան) ջրով :

ԿԱՆԿԱՑԻՈՎ.

55.

Կանկառը Մայիսի մէջ կըքուսնի , ինքը համարեա բոլորովին փուշէ . սրանից հաւաքիր , վրի փշերը տրութելուց յետոյ սկսիր կոտրատելով կճպել միջիցը մի շատ

քաղցրահամբ բարակ նիւթ դուրս կռպայ : Համով շատ
մօտիկ Կ. Պօլես գանգւած ենկինար բոյսին :

Առ ընտրած կանկառը՝ ինչ մեծութեամբ կամիս
միաձև կոտորէ , կշռէ ու լից կրաջըի մէջ , թող մնայ
ութն ժամ + ապա հանէ մի քանի ջրով լուա և փոքր
ինչ խաշէ . մէջը մի լիմոն քամելով և այն միենոյն լի-
մոնն էլ մէջը ձգելով սորա հետ էլ մի փոքր շիպ : Խա-
շլուց յետոյ կրկին լից սառը ջրի մէջ և մէկ բաժնի
համար մի և կէս բաժին շաքար առ , մանր կոտորէ ,
ի միասին լից պղնձի մէջ և վրան բաւականին ջուր
լից , դիր կրակին , եփէ՛ մինչև երկրորդ թանձրաշափին
համար . ապա լից ամաններիդ մէջ :


Ենկինարի Եղեգնով , (զօխով) .

36.

Ենկինարը խիստ պատուական բոյս է + սորա արմա-
տիցը մի քանի տեղեր ճիւղեր են բարձրանում և այս
ճիւղերի ծայրին լինումէ ձուածե վարդի նման հաստ,
մուք կանաչ դոյնով ենկինար պատու զը + սրից շնուրեն
զանազան համեղ կերակուրներ . այս բոյսը Եւրոպա և
Կ. Պօլես շատ կայ , բայց Վրաստան շատ հաղուագիւտ :

Ինչպէս կանկառի եղեգների համար դրեցինք , նրա
ձեռքն ևս սորա եղեգները առ , կճպէ՛ , կշռէ , ու լից
կրաջըի մէջ , ութն ժամից յետոյ հանէ , մի քանի ան-
դամ լուա և մէջը լիմոնի ջուր , լիմոն և փոքր լիչ շիպ
ձգելով խաշէ մինչև ծամելուս լուա փշուիլը , ապա լից
սառը ջուրը և մէկ բաժնի համար մի և կէս բաժին
շաքար կոտորէ՛ , ի միասին լից պղնձը , վրան չափուոր

ջուր ածելով եփէ մինչև երկրորդ թանձրաչափին հասանիլը :



ԳԼՈՒԽ Գ.

ԵՐՐՈՐԴ ՔԱՄԻՈՏ ԹԱՆՉՐԱՉԱՓԻ ՎԵՐԱՑ
ՔԱՂՅՑՐԱԽԵՆԻՔ.

ՀԱՂԱՐՑՈՎ (ամօրօդին, Ֆասնկ իւղիւմի) *

57.

Հասած ու լսւ կարմրած հաղարձի չճիլտածներըն ջոկէ՛, լսւերը սառը ջրով լուա և ներքեւի կողմիցը շատ զգուշութեամբ կորիկներն քորոցով (թոփլու) հանէ, այնպէս, որ բացի կորիկ չմնալը ընտրածներիդ բերանն ևս շատ մեծ և պատռուած չինի և զլսի ունեցած ծաղիկն ևս վրէն մնայ. հատ հատ ընտրածներըդ ափսէի (թէփշի) մէջ դրած ժամանակդ ամանը փոքր ինչ ծուռը դնես, որ միջի գտնուած ջուրը մի կողմը ժողովի. ըստ որում եթէ ջուրը միջին եփուի, քաղցրաւենու գոյնը շատ մուգ կրլինի: Երբ որ բոլորը ընտրեցիր, կշռէ՛ և մէկ բաժնի համար վեց բաժին շաքար կշռէ, շաքարը ձուով կտրէ՛, կրկին դի՛ր կրակին, եփէ՛ մինչև հասնի երկրորդ թանձրաչափին. ապա յետ դիր, թող սառչի՛երը որ առեցաւ, ընտրած հաղարձը զգուշութեամբ լից մէջը, որ ջուրն ևս հետը չթափուի, դիր կրակին, երբեմն երբեմն դրդալով սղմելով եփէ՛ մինչ-

չե հասնի երրորդ թանձրաշափին (1) • միայն եփուեւ
լու ժամանակն եթէ պղնձի կողքերին սեռութիւն բըռ-
նի. իսկըն թաց կտաւով սլքէ' . ապա յետ առ կրակի-
ցըն ու պղնձի մջի բարակ եփը կտրուելուց յետոյ
համահաւասար լից մանր ամանների մէջ , այնպէս , որ
օշարակն և պտուղն միմեանցից պակաս չինին:

Այս քաղցրաւենին կարելի է չկտրած շաքարով ևս
շինել: Սորա համար հարկաւորէ շաքարը մանր կոտո-
րել պղնձի մջը լցնել և վրէն այնքան ջուր ածել , որ
բաւական լինի շաքարը հալելու համար . ապա շաքարի
վերայ հաղարձ լցնել և 'ի միասին եփէլ երբեմն երբեմն
երեսին բռնած սեւաւ քափը առնելով՝ մինչև հասնի
երրորդ թանձրաշափին:

ԿԱՐՄԻՐ ԵՒ ԿԱՆԱԶ ՀԱՂԱՐՃԸ Ի ՄԻԱՍԻՆ ԽԱՌՆ
ՔԱՂՅՐԱՒԵՆԻ.

53.

Թէ հասած կարմիր և թէ խակ կանաչ հաղարճը
ընտրէ' առանձին առանձին ըստ վերցգրելոյն , առանձ-
նակի կշռէ' , մի բաժնի համար վեց բաժին շաքար կըտա-
րէ' , քամէ և եփէ շաքարը մինչև հասնի երկրորդ թանձ-
րաշափից փոքր ինչ պակաս . ապա ելք որ սառեցաւ ,
առաջ կանաչ հաղարճները լից և եփէ մինչև հասնի
երկրորդ թանձրաշափին ու յետ դիր : որ սառչի . ապա
կարմիր և հասածները լից վըն , եւ կուսն 'ի միասին ե-

(1) Երրորդ թանձրաշափի խրատը տես տասն և երկու երեսը :

փէ մինչեւ երրորդ թանձրաչափն ու լից մանր ամանանքը մէջ:

ԿԱՆԱԶ ՀԱՂԱՐՑՈՎ.

59.

Վարսիր ու կանաչ հաղարձի ձեռնի ևս պէտք է եփել այս քաղցրաւենին:

ԴԱՄԱՍԿՈՍԻ ԽԱՂԱՂՈՎ (Շամիւղումու, կրուժովնիկ).

40.

Թերահաս Դամասկոսի խաղողը լուա՛, մի կողմիցը փոքր և սուր դանակով ձեղքէ՛, միջի կորիզները հանէ, կշռէ՛ ու մէկ բաժնի համար երկու և կէս կամ երկու բաժնն շաքար կտրէ, քամէ՛ և եփէ մինչեւ երկրորդ թանձրաչափն սառչելուց յետոյ Դամասկոսի խաղողն լից մէջը, եփէ մինչեւ հասնի երրորդ թանձրաչափին ըստ օրինակի հաղարձին առնելով լից ամանների մէջ:

ԲԱԼՈՎ. (ալուբալի, ֆիշնէ).

41.

Միջակ հասած բալը որ ոչ շատ սեէ և ոչ բաց կարմիր լուա՛ սառն ջրով, կորիզները հանէ փոքր ինչ մասով փափկացնելով և կոթիցը զգուշութեամբ ձգեւ լով փլաւքամիչ մէջ բերանը ներքեւ դնելով շարէ՛; այնապէս, որ միջի եղած ջուրը բոլորովին քամուի ապա

կշռէ՝ մի բաժնի համար մի և կէս բաժին շաքար, կտրէ և միւս անելիքներդ 'ի գործ զիր ըստ օրինակի հաղարձի քաղցրաւենուն, բայց լցնելու ժամանակը շատ զգոյշ պէտք է մնալ, որ իր ունեցած ջուրը 'ի միասին չցուի. ապա թէ ոչ գոյնը շատ մուք կըլինի :

ԱՆԿՈՐԻԶ ԱԶՈԽՈՎ, (ԺՈՒՌ, ՀԷՔԻՐԱԵՔՍԻԼ ՔՈՇՈՒՔ).

42.

Լաւ անկորիզ ժուռը լուս, հատ հատ արա՛ ու կշռէ մի բաժնի համար երկու և կէս կամ երկու բաժին շաքար, ձուռվկտրէ և ըստ օրինակի հաղարձին և փէ՛ :

ՄՄԱԴՈՎ, (Թութուբայ, զերիշկ, ամպերալարիսպ).

43.

Այս երկու տեսակ է, վայրենի և պատուաստած. Կ. Պօլոսւմը գտուածը պատուաստածն է և թէպէտ երկուսի գոյնն էլ միւնոյն է, բայց պատուաստածը շատ մնալի և անկորիզէ. սորա վայրենի տեսակիցը ամէն տեղ կրգանուի և կորիզ ունի :

Եթէ պատուաստածիցը շինելու լինիս, բաւականէ հատ հատ ընարել և լուանալ. իսկ եթէ վայրենին է, ասեղով պէտք է կորիզները հանել. մի բաժնի համար, որ տեսակը որ լինի երկու և կէս կամ երկու բաժին շաքար կտրել և եփել մինչև երրորդ թանձրաչափը, ըստ օրինակի հաղարձին:

ՀՈՒԽՎ, (ՂՂԵՇԼ)։

44.

Կիսահաս հօնը լուա՛ ու կորիզները հանէ այսպէս:
 Մի գրչի երկու ծայրիցը կտրէ, որ մնայ ծակ խողովաշ
 կը ։ այն խողովակի մի կողմանը հօնի մէկ գլխիցն հրէ
 (աղմէ), և կորիզը դրչի միջեցը դուս դաշու համար
 մի հոգար, կորիզները մէկ մէկու ետևից մտնելով մէջը,
 մէւս կողմից դուրս կըթափին. ՚ի հարկէ աւելի հեշտ
 կըլինի, եթէ խողովակը թունաբայից լինի։ Այս եղաւ
 նակով ամենի կորիզը հանելից յետոյ կշռէ ու մի բաժանի համար մի և կէս բաժին շաքար (1) մանր կոտորէ,
 վրան շատ սակաւ ջուր լից և հոնն ևս լից մէջը, եփէ
 մինչեւ հանի երրորդ թանձրաչափին։ Պորա մէջը լրցանելու ջրի համար շատ զգոյշապէտք է կեցած, որ սա
 կաւ լինի, ըստ որում եփած ժամանակին ևս իւր բըշ
 նական ջուրն կըթողու ։ իսկ եթէ ջուր շատ լցուի,
 կըհարկաւորի շատ եփել և մինչեւ թանձրաչափին հասանիլը միջի հօնը կըտրովին հօնից կարելի է կորիզը հանած ևս շինել միենոյն այս եղանակաւ։

ՄՈՐԻԽՎ, (պէօկիւ բղլ՛ն)։

45.

Խակ և կարմիր մորին լուա, կշռէ, մի բաժնի հաս-

(1) Մէկ բաժնին համար մէկ բաժնին շաքար եւ կարելի է դնել։

մար երկու բաժին շաքար կտրէ՛ ու եփէ՛ . իսկ և իսկ
ըստ օրինակի հալարձին:

ՍԵԱԻ ՀԱՍՏԱՏ ՄՈՐԻՈՎ.

46.

**Այս ևս պէտք է լսակի նման լինի , բայց շաքարն
կէս բաժին պակաս , այսինքն մի բաժնի համար մի և
կէս բաժին , միայն ՚ի հարկէ լսակ մորիով եփուածը առ
ելի լաւ և դովիլի կըլինի:**

ԿԻՑՐՈՆԻ ԹԹՈՒՈՎ , (պալամնկ , աղաջ զաւունու) .

47.

**Երկրորդ թանձրաչափի մէջը գրուած կիտրոնի ձեւ
ուղին այս ևս ընտրէ (1) , միայն սորա մի բաժնի հա-
մար երկու բաժին շաքար դիր և եփէ . երբ որ հասաւ
երկրորդ թանձրաչափին , կըակիցը վէր մի առնիլ , այլ
մէջը լիմոնի լաւ քամած ջուր կամ ելթէ չգտնուի
լիմոնի աղ զիր , այնքան , որ քաղցրաւենու թթուու-
թիւնը լինի հաղորձի , բայց կամ ժուռի քաղցրաւե-
նեաց թթուութեան աստիճանին . ապա եփէ այնքան ,
մինչև հասնի երրորդ թանձրաչափին . յետոյ վէր դիր .
երեսի մանր եփը կտրուելուց յետոյ մէջը ձկէ հոտ տա-
լու բաւականութեամբ պերզամօթի իւղ՚ի հարկէ ոչ
այնքան շատ , որ դառնայնէ . ապա լից միջակ կամ
մեծ ամանների մէջ:**

(1) Կիտրոնի ընտրելու և կտրուելու ու խաշելու խրառն անս երե-
սուն և վեց երրորդ երեսն:

ՓՈՐԹՈՔԱԼԻ (ապելցին) ՄԻԶԻ ՄՍՈՎՆ.

48.

Փորթոքալը խոր կճպէ՛, որ միջի միսը երևի, միջի կորիզներն ու մաշկը ընտրէ՛ և որքան կարողես՝ աշխատիր, որ միջեց ելածները շատ չե մանրանան և գրսի կողմիցը բնաւ կեղեւի ներքեւ գտնուած մաշկը չմնայ. ապա կշռէ՛ մի բաժնի համար երկու կամ երկու և կէս բաժին շաքար, կտրէ՛, քամէ՛ լիմոնի ջուրն աւելի ածելով յետոյ եփէ մինչև երրորդ թանձրաչափն ու թող սառչի. սառչելուց յետոյ ընտրած փորթոքալներն լից մէջն, ու փորթոքալեց դուրս եկած ջուրն ևս լաւ քամէ՛, պարզեցրու, լից շաքարի վերայ ու դիր կրակին. երբ որ մի քանի անգամ եփն եկաւ, համը տես, եթէ փորթոքալը քաղցը է ու ջրի թթուութիւնը քիչ իսկ կոյն լիմոնի ջուր աւելացրու վւէն կամ լիմոնի աղ ու 'ի միասին եփէ՛ մինչև հասնի երրորդ թանձրաչափին, ապա լից ամանների մէջ:

ԿԻՑՐՈՒՆԻ ՄԻԶՈՎ.

49.

Կիտրոնով քաղցրաւենին եփելուց յետոյ միջեց դուս եկած միսը կտոր կտոր արա, ընտրէ ըստ վերոյգրելցն ու կշռէ. եթէ շատ թթու է մէջը, մէկ բաժնի համար երկու և կէս բաժին շաքար կշռէ ու եփէ փորթուքալը պէս. բայց որովհետեւ երբեմն սոքա քաղցը կը լինին,

ուստի այն ժամանակն երկու բաժին շաքար զիր և այնքան լիմոնի թթու, որ օշարակը լսու թթուութիւն ունենայ և կարելի լինի երրորդ թանձրաչափին բերել:

ՆԱՐԻՆՁԻ ՄԻԶՈՎ, (ՂՋԱՇԱԽԻ),

50

Այս նարինջը աւելիկ Պոլիս կըդանուի, որ թէև դառնութիւն և թթուութիւն ունի, միայն միջի միսը քաղցրաւենու համար յարմար է : Վրաստան սրանից բաքւովն է զալիս բաշտից, որոյ ձևն և մեծութիւնն թէի միենոյն է, միայն աւելի թթու չէ և Պոլսում գանուածի ոչ հռտը ունի և ոչ դառնութիւնը :

Այս նարինջը առ և փորթոքալի նման միջի միսը ընտրէ ու կըսէ, եթէ շատ թթու է, մի բաժնի համար երկու բաժին շաքար զիր + խկ եթէ ոչ մի և կէս բաժինն ևս բաւական է, ապա եփէ ըստ օրինակի փորթոքալի:

ԼՕԴ ԴԵՂՉՈՎ, (ՀՔԳԹԱԼԻ),

51.

Ասալի և կիսահաս կորիզը չհանուող դեղձերը (1) կճղէ ու մանեթի հաստութիւնից փոքր ինչ բարակ բոլորակով կռտորէ ու զանազան աստղաձեւ կամ ուրիշ

(1) Այս դեղձերի խիստ ընտիրը հայաստան կըդանուի և կոչվում է Լող դեղձն և աւելի լաւ կըլինի, եթէ զեղնադոյն գեղձից շնուի, որ հայաստան կոչվում է նարինջի դեղձն

ձեւերի բեր, կշռէ . լից եփման ջրի մէջ, խաշէ՝ մէջը գըշ
նելով կէս լիմոն իւր ջրովն . բաւականին փափկանալից
յետոյ հանէ ու լից սառը ջրի մէջ ու առ մի բաժնի
համար երկու բաժինն շաքար, ձուով կորե՛, քամե՛ ու
կրկին եփէ՛ մինչև երկրորդ թանձրաչափին գայ և թուղ
որ սառչի . ապա դեղձերը հանէ սառը ջրիցը, ցամաք
կտաւով չորացրու և լից սառած շաքարի մէջը և բաւ
աւականին թթուութիւն տալու համար լիմոնի ջուր
կամ լիմոնի աղ լից ու համը տես, որ թթուութիւնը
քիչ չըլինի . ապա դիր կրակին, եփէ՛ մինչև հասնի երկա
բորդ թանձրաչափին :

Կորիղը դուս եկող զեղձի քաղցրաւենին կարելի է
ողջ ես շինել մէկ կողմիցը զդուշութեամբ ճեղքեւ
լով և կորիղը հանելով որ իրարից չի բաժանուի. ապա
կճպել խաշել և վերոգրելոց նման եփել :

ՍԵՐԿԵՒԻԼՈՎ. (Հայվա, կոմշէ).

52.

Թթու տեսակ մեծ սերկելիները բարակ կճպէ ու
բոլորաձեւ կտրատէ և մէկ կողմիցը կտրածներդ սառն
ջուի մէջ լից որ չի սեանան, ապա երբ վերջայնես, կըք
կի՞ արշտի նման կտրատէ, կշռէ , պղնձի մէջ փոքր
ի՞չ սառն ջուր ածա, դիր կրակին, թող եփ գայ . երբ
որ եփն եկաւ, կտրորած սերկելիներն լից մէջն, խաշէ՛,
որ փափկի . երբեմն երբեմն խառնելով որ համահաւա
սար եփուի . միայն պէտք է դիտեցած, որ խաշելու ջուրը
ոչ այնքան շատ պէտք է լինի, որ շատ ջուր մնոյ խաշ
շելուց յետոյ և ոչ այնքան սակաւ, որ այրուի . ապա

մի բաժնի համար երկու և կէս կամ երկու բաժին շաքար մանր կոտորէ և կրակիցը վէր չի կալած՝ սերկեիլն լից մէջն ու խառնէ. բայց եթէ տեսնիս, որ մէջը ջուր չի կայ, մի քիչ լից, որ շաքարը հալչի. երբ որ հալեցաւ, լիմոնի ջուր կամ աղ ածա այնքան, որ լաւ թռուութիւն ունենաց և եփէ մինչեւ հասնի երրորդ թանձրաչափին (1):

Ապա կրակիցը վեր առ ու այնքան թող, որ պղնձի միջի բարակ եփը կտրուի մի քառորդ ժամաշափ, յետոյ լից ամանների մէջ, որ թէպէտ մանր ևս լինին մնաս չունին :

Ի Շ Խ Ո Ւ Կ Ն Ո Վ .

ՖՅ.

Այս իշխուն կոչեցեալ բոյսն կարին քաղաքումը շատ կայ, նոյնպէս և չայաստան կըդտնուի. այս մատի հաստութեամբ երկար ու բարակ եղեգի նման մի բոյս է, որոյ արմատն էլ խաշնգեղ, սավենու է կոչուում, պիտանի գեղավաճառաց համար :

Այս բոյսը շատ ախորժահամէ իւր թթուութեամբը, որ եթէ ձարուի, առ նորոգ բուսածները և ոչ չորացածը, կճպէ վըայի մաշկը կոտորելով և հանելով և չափաւոր մեծութեամբ կոտորէ միաձեւ, կշռէ, լուա և մէկ բաժնի համար մի և կէս բաժին շաքար

(1) Լիմոնի ջուրը կամ աղը հարկաւոր է թէ երրորդ թանձրաչափին բերելու և թէ սերկեիլի զոյնի համար, ըստ որում թթուութեամբը զոյնը կարմիր չի լինիլ, այլ դեղնազոյն:

առ, մանր ջարդէ՛, ի միասին լից պղինձը, վրան այն-քան ջուր ածա, որ շաքարը հալեցնելուն բաւական լինի, աւելցնելով նոյնպէս և փոքր ինչ լիմոնի ջուր . ապա եփէ մինչեւ երրորդ թանձրաչափն:



ԳԼՈՒԽ Դ.

ԶՈՐՈՐԴԻ ԳՐՉԻ ԹԱՆՁՐԱՉԱՓԻ ՎԵՐԱՅ ԵՂԵԱԼ ԼՈՂԱՊ
ԿԱՄ ԺԻԼԵՑԻ ԿՈԶԵՑԵԱԼ ՔԱՂՅՐԱԿԵՆԻՔ:

ՀԱՂԱՐՃԻ (ամարտղինայ, Ֆռէնդ իւղիսմի) ԶԲՈՎ ԺԻԼԵՑԻ ԼՈՂԱՊ.

54.

Լաւ հասած ու կարմրած հաղարծը լուա, հատ հատ արա, լից մի հողէ ամանի մէջ և լաւ ճմլէ, որ մէջը բնաւ ողջ պտուղ չի մնայ, ապա թաց կտաւով քամէ մի քանի ամսնների մէջ և թողլ մի քանի ժամ մնայ, որ միջի տիրդը բոլորովին տակը նստի, ապա տես հինգերորդ երեսը շաքար պարզելու խրատը, ու երր չուն ջրով հարեցիր և շաքարը լցրիր մէջը, այս հաղարծի լաւ պարզած ջուրն էլ լից վրան զգուշութեամբ, որ տիրդը հետը չի գնայ, ու ապա ինչպէս կարգն է 'ի միասին պարզէ և այդ միջոցը համը տես, եթէ քաղցրութիւնն աւելի է, վրէն հաղարծի ջուր աւելացրու. իսկ եթէ թթուութիւնն է աւելի, շաքար աւելացրու. ըստ որում եթէ քաղցրութիւնը շատ լինի, եփելուց

և սառելուց յետոյ զբգալով. երբ որ համես, իսկոյն չի կտրուիլ և մնալ զբգալի վերայ, այլ թել թել ծոր կտայ. բայց եթէ շափազանց թթու լինի, ուսելու համար անախորժ կը լինի և շատ չէ կտրող դիմանալ, ուստի ովէաք է շափաւոր, այսինքն թթու համարուի աւելի, քանթէ քաղցր. ապա երբ համը այսպէս չսափաւորեցիր, որպէս կարդն է ու զբգածնոյն եղանակաւ պարզէ, նաևս վոքը լիմնի ջուր դնելով յետ առ կը բակիցը, քամէ երկու անգամ, ու կրկին դիր կրակին, եփէ միշտ զպոյշ մնալով, որ չի բարձրանայ ու թափուի և որկնձի կողքերը սևանան, որ եթէ լինի, կարողես թաց կտաւով կամ մաքուր սպունգով (ամող, սիւնեկեր), որը ել, նոյնապէս երեսին բռնած սև և հաստ քափը միշտ քաշել, այսպիսի զգուշութեամբ եփէ մինչև հասնի չորրորդ թանձրաչափին : Եթէ աւելի բայ գոյնով կռւզես շինել, կարող ես կրակիցը յետ չառած մէջը լիմնի ջուր քամել. ապա յետ առ կրակէն ու պղնձի միջի բարակ եփը կտրուելուց յետոյ լից շատ մաքուր և չոր ամանների մէջ:

Այս կարողես նա ևս շաքարը սկիզբն առանձին պարզելու քամել և սառչելուց յետոյ լու պարզուած հաղարձի ջուրը լցնել ու համը չափաւորել և եփել մինչև չորրորդ թանձրաչափը: Կարողես նաև շաքարը առանց պարզելու վրան ջուր և հաղարձի ջուրը լըցնել ու դնել կրակի վրայ, եփ զալուց յետոյ համը աեսնելով չափաւորել. և միշտ երեսը եկած սև ու հաստ քաից առնելով՝ եփել մինչև չորրորդ թանձրաչափին հասնիլը, միայն այս տեսակ եփուածի գոյնը առ ելի գեղեցիկ չելինիլ:

ՄԱԼԻՆԱՅԻ ԶՐՈՎ, (ազագ չելէյի)։

.55

Այս մալինան Վրաստան խիստ շատ է և տեսակ տեսակ դոյնաւորը կրծարուի, միայն Կ. Պոլիս հավատագիւտ է և միայն կարմիր դոյնաւորը կրծարուի ու շատ մանր է քան զՎրաստանինը և խիստ թանկաղին։

Մալինան լից հողէ ամանի մէջ և լաւ ձյլէ՛, ազաերկու անդամ բարակ և նուրբ թաց կտաւով քամէ՛, թող մնայ պարզէ, ապա ինչպէս դրուածէ վերեւ սմառ րօդնիայի նման շաքարի հետն ՚ի միասին այս մալինային ջուրն ևս զգուշութեամբ վրան լից, որպէս զի տիրգն ՚ի միասին չերթայ ։ տպա պարզէ և համը տեսըստ որում շատ անդամ մալինայի քաղցր տեսակը պատահելուն համար որքան և աւելցնես թթուն, նոյնպէս քիչ կերեի, ուստի այս տեսակի համար կարես լիմոնի ջրով կամ լիմոնի աղով չափաւորել ։ լաւ պարզ վելուց յետոյ քամէ՛ երկու անդամ ու զի՞ր կրակին և ըստ օրինակի հաղարձին եփէ նորէն, նոյն խկ թանձըսչափովն ու լից ամանների մէջ։

ԵԼԱԿԻ ԶՐՈՎ, (չիլեկ, Փռաղուլս, կլուպնիկ),

.56.

Հասուն և ընտիր ելակի կոթերը ընտրէ՛, լուա, ապա պղնձի մէջ սառը ջուր լից այնքան, որ ելակը մէջը լրցնելուս մինչև քո ճմբելդ և իւր բնական ջուրը թողնիլը

շայրի, այսինքն աւելի՝ չլինի: Նրբ որ ջուրը լաւ եփ եկաւ, ելակները լից մէջը ու սկսէ ձնշելով խառնել երբ ջուրը լաւ թողեց, ետ առ կրակիցն և լից կտաւի մէջ, սղմելով քամէ՛: Ապա կրկին այդ ջուրը թաց և նոր կրտաւով քամէ՛ և լից մի քանի մանր ամանների մէջ, թող պարզի: Սորա ջրի որքանութեանը նոյնպէս նայելով շաքար պատրաստէ՛ ձուռվ և այս ելակի ջուրն ՚ի միասին խառնելով, սառը ջրով պարզացրու որպէս կարգն է, և եփ գալուն թթուռութեան ու քաղցրութեան համար համը տես ու չափաւորէ ինչպէս գլուածէ այս Դ. գլաոյ Ա. օրինակ սմարտնիախ համար: Այս ելակի ջուրն աւելի տիրդ կունենայ քան զմիւսներն, վասնորոյ մեծ զգուշութիւն կըհարկաւորի, որ լաւ պարզացնես, որ մէջը տիրդ չմնայ. լաւ պարզեցնելից յետոյ ետ առ կրակիցը երկու անգամ թաց կտաւով քամէ՛, ապա դիր կրակին եփէ ըստ օրինակի հաղարձին մինչև չորրորդ թանձրաչափին հասնիլը և յետ դիր. միջի բարակ եփը կտրուելուց յետոյ լից ամանների մէջ (1):

Վ.Ա.ՑՐԵՆԻ ԵԼԱԿԻ ԶԲՈՎ.

57.

Վայրենի հասուն լաւ ելակն լուա և ըստ վերոյագրելոյն խաշէ, ջուրը մի քանի անքամ քամէ՛ և պարզեցրու, եթէ թթուն սակաւ լինի, լիմոնի ջոռվ կամ լիմոնի աղով չափաւորէ և եփէ ըստ վերոյգրելոյն:

(1) Սոլս գոյնը ևս բաց ուզողը կարողէ լիմոնի ջուր դնել:

ՀԱՂԱՐՁԻ (սմարօտինայի) ԵՒ ՄԱԼԻՒՆԱՑԻ ԽԱՌՆ
ԶԲԵԲՈՎՆ.

58.

ՏԵՍ Ըստ վերոյգրելոյն հաղարձի և մալինայի ջրերըն առ համահաւասար չափով՝ ապա շաքարի հետ ՚ի միասին պարզէ, քամէ և եփէ միւնոյն հաղարձի նըման։ Այս երկու տեսակ ջրերովն շինուածը աւելի լաւ և համեղ կըլինին։

ԵԼԱԿԻ ԵՒ ՎԱՅՐԵՆԵԻ ԵԼԱԿԻ ԶԲԵԲՈՎՆ.

59.

ԵԼԱԿՆԵՐԻ ՋԵԵՐՆ, ինչպէս վերը դրուածէ, առ ու ջոկ ջոկ ամաներ լքցնելով՝ պարզացրու, որպէս զի ամենեին մէջը տիրդ չի մնայ ։ ապա երկուսի ջուրն էլ մի չափով չափէ, լից շաքարի վերայ, պարզացրու որպէս կարգնէ և քամէ երկու անգամ ու կրկին զիր կրակին և եփէ հաղարձի նման մինչեւ չորրորդ թանձրաչափին հասանիլը :

ԵԼԱԿԻ, ՀԱՂԱՐՁԻ ԵՒ ՄԱԼԻՒՆԱՑԻ ԽԱՌՆ ԶԲՈՎՆ.

60.

Ըստ որում ելակը ամենից առաջ կըհասնի և ետոյ միւսներն, վասնորոյ տես սկիզբը ինչպէս որ դրուածէ։ այսինքն ելակը պէտք է ընտրել խաշել և ջուրը առնել

պարզացնել շաքարով կտրել, համը չափաւորել նոյն գունակ և սորա վլրայ պէտք է 'ի գործ դնել . ապա երբ որ պարզեց ու քամուեց, կրկին պէտք է դնել կրակին ու եփել մինչև երկրորդ թանձրաչափը (1) . ապա լցնել մեծ ամանի մէջ և պահել, մինչև սմարողինի և մալնայի հասնիլը և սոցա հասնելու ժամանակն երկուսին ևս ջոկ ջոկ ջուրը առնել, պարզացնել տիրդը մաքրելով ու երկուսն 'ի միասին խառնել շաքարով՝ պարզել ձուով և քամել և զինի քամելոյն առաջուց պատրաստած ելակի օշարակն (սերոպ) լքցնել վերան ու դնել կրակին եփելինչ պէս զրուածէ 54 համար հաղարձին համար եփվելու խրատը, մինչև չորրորդ թանձրաչափի հասնիլը : Այս 5 տեսակ ջրերով շինուածը զերագոյն կը լինի քան ըզ միւս ժիլելիներն :

ԲԱԼԻ ԶՐՈՎ, (Փիշնէ).

61.

Թերահաս բալի կոթերը կտրե՛, լուա, լից մի հողէ ամանի մէջ, լաւ ճմէ և երկու անգամ քամէ . յետոյ չափաւոր շաքար առ ու երբ որ կտրելու համար շաքարը կը լցնես ձուով հարած ջրի մէջ, այս բալի ջուրն ևս լից նորա մէջն և 'ի միասին կտրէ, ապա յետ առ, քամէ և կրկին դիր կրակին, թող եփի մինչև չորրորդ թանձրաչափն, որ տես 54 համար ըստ օրինակի հաղարձին+ ու ապա լից ամաններդ (2):

(1) Տիր երկրորդ թանձրաչափի խրատը 12 երրորդ երեսը:

(2) Եթէ այս բալիով շինուածը կամենաս մանուշակի զոյն ունենայ, լիմոնի ջուր դնելով կարողես նմանացնել:

ԱԶՈՒԽԻ (ԺՈՒՇ, ՂՈՐԾՈՂ) ԶԲՈՎ.

62.

Թէ կորզաւոր և թէ անկորիզ ազոխը հատ հատ աշը ու լուս, ապա պղնձի մէջն փաքր ջուր լից, դիր կը բակին, երբ որ եռայ, ազոխը լից մէջը և սկսէ ձնշելով խառնել, մինչեւ իւր ջուրը բոլորովին թող տայ. ապա յետ ա՛ռ, թաց կտաւով երկու անգամ քամիչ ու թ'ող սառչի: Յետոյ ա՛ռ չափաւոր շաքար ու երբ որ շաքարը պարզեցնելու համար ջրով հարած ձևուի վերայ կը լցնես, ազոխի սառած ջուրն ևս լից վրէն և ըստ կանոնի շաքարը կտրէ ու դեռ չքամած և կը լիցը վեր չառած, թթուութեան և քաղցրութեան համը չափաւորէ և լաւ կտրելուց յետոյ յետ ա՛ռ, քամիչ ու կրկին դիր կրակին, եփէ ըստ կանոնի հաղարձին (սմարօտնի), որ տես 54 համարն:

ՍՄԱԴԻ, (զիրիշկ, ամպերպարիսպ) ԶԲՈՎ.

63.

Ամաղը հատ հատ անելուց յետոյ սակաւ ինչ սառը ջրով լուս, խաշէ ձնշելով ըստ օրինակի ազոխին, երբ որ նիւթը բոլորովին դուս եկաւ, յետ ա՛ռ և բարակ թաց կտաւով մի քանի անգամ լաւ քամիչ, պարզ ջուրը լից մի քանի սմանների մէջ, որ աւելի պարզէ, ապա ա՛ռ բաւականին շաքար ու կրկին ըստ վերոյգրելոյն երբ որ շաքարը պարզեցնելու համար ջրով հարած ձուին վե-

ըայ կըլցնես, այս սմաղի սառած ու լաւ պարզած ջուրն
ևս լից վերան ու եռացած ժամանակն համը չափաւորէ
ինչպէս խրատը գրուածէ . ապա լաւ պարզէ , քամէ և
կրկին դիր կրակին, եփէ մինչև չորրորդ թանձրաչափին
հասնիլը ըստ օրինակի 54 համար հաղարձին . ապա
ետ առ կրակիցը ու շատ միջոց չանցկացրած , լից միջակ
մեծութիւն ունեցող ամանների մէջ:

ՓՈՐԹՈՒՔՍԼԻ (ապելսին) ԶԲՈՎ.

64.

**ՓՈՐԹՈՒՔԱԼԻ ջրով լողակ կամ ժիեյի շինելը ամէն
աեսակ ժիեյից գժուարէ , վասնորոյ մեծ զգուշութիւն է
հարկաւոր թէ իւր ջուրը հանելից յետոյ լաւ պար-
զացնելու համար և թէ եփելիս իւր գոյնը չափաւո-
րելու մասին: Առ ջրալի և ոչ աւելի քաղցր փորթուքալ-
ները և խոր կճպէ , հինգ հատի համար էլ մի թթու
լիմոն կճպէ (1). այդ կճպածները լից մի հողէ ամանի
մէջ, լաւ ձմէէ, երկու երեք անգամ թաց կրտաւովքա-
մէ և բաժնէ մի քանի ամանների մէջ, թողլաւ պար-
զին: Ապա ըստ բաւականին շաքարդ ձուով լաւ պար-
զէ, քամէ, ինչպէս գրուածէ ու կրկին դիր կրակին և եփէ
մինչև հասնի երկրորդ թանձրաչափին և կամ փոքր ա-
ւելի, յետոյ վեր դիր թողլաւ սառչի, երբ որ սառեցաւ
փորթոքալի ջուրը ծանր և զգուշութեամբ համը աես-
նալով լից շաքարի վերայ . երբ թթուութիւնը չափաւ-**

(1) Կճպէ ապա քամէ գրեցինք նոյն պատճառաւ, որ կճպի իւղի նիսթը
իւր չի մէջ չի գնայ ու փշացնէ:

ւորեցիր, զիր կրակին, եփէ, մինչև հասնի չորրորդ թանձարաչափին ըստ օրինակի հաղարձին, որ 'ի Յ4 համարն միայն պղնձի կողքերի բռնած սեռութիւնն շուտ շուտ սրբելու և եփելիս երեսը եկած հաստ քափը քաշելու համար մեծ զգշութիւն է հարկաւոր:

ՄԵԾ ՆՈՐՈԴ ԾԻՐԱՆԻ (թագա ղայսի) ԶԲՈՎ.

65.

Հասուն ծիրանի կորիզները (կուտ) հանէ, բարակ կճպէ և սակաւ ջրով ու մարմանդ կրակով խաշէ անդաշար խառնելով և ճնշելով. ապա յետ առ ու մի քանի անգամ թաց կտաւով քամի, միայն ոչ թէ սղմելով, որ հաստ նիւթը դուս չի գայ կտաւիցը • ապա այս ջուրը բաժանէ մի քանի ամանների մէջ, թողլաւ պարզեն: Մինչև նորա պարզելը դու շափաւոր շաքար ձսւով պարզէ. քամի՛ և զիր կրակին, եփէ մինչև երկրորդ թանձարաչափը, որ տես 12 երեսն • ապա ետ առ սառելուց յետոյ ծիրանի պարզած ջուրը ծանր ծանր լից վըէն, որպէս զի տիրուը հետը չի գնայ. բայց որովհետեւ ծիրանի ջուրը աւելի թթու չի լինիլ, վասնորոյ հարկաւոր է լիմոնի ջրով կամ լիմոնի աղով թթուութիւնը շափաւորել: Յետոյ զիր կրակին, եփէ և երեսը եկած քափը առ մինչև հասնի չորրորդ թանձրաչափին ըստ օրինակի հաղարձին, որ 'ի Յ4 համարն :

ՀՈՆԻ (ՂՂԼՃՂ) ԶԲՈՎ.

66.

Միջակ հասած հօնը լուա ու ջրով խաշէ միշտ ձնշելով. երբ որ բոլորը լսու և փուեցաւ, ետ առ կրակից և մի քանի անգամ թաց կտաւով քամի՛ այնպէս զգուշութեամբ, որ նիւթը դուրս չի գայ կտաւիցը: Ապա բաւականին շաքար ա՛ռ ու երբ շաքարդ ձուով հարուած ջրի վերայ կը լքյնես, այս լսու քամած ու պարզված հօնի ջուրն ես լից վերան. ՚ի միասին պարզէ (կտրէ), քամէ, կրկին դիր կրակին. և փէ մինչեւ չորրորդ թանձրաշափն, ըստ օրինակի հաղարձի, որ ՚ի 54 համարն:

ՍԵՐԿԵՒԻԼԻ (հայվա, կոմշէ) ԶԲՈՎ.

67.


Մեծ և թթու սերկելիներն կճպովն ՚ի միասին կոտորէ՝ միջի չորը և կորիզները (քոնթուկ) հանելով, կոտորածդ լից սառը ջրի մէջ, որ չի սեանայ. ապա պղնձի մէջը այնքան սառը ջուր լից, որ խաշելու համար բաւական լինի, դիր կրակին, թողեփի. երբ որ ջուրը եռուաց, սերկելը սառը ջրիցը հանէ ու լից եփման ջուրը. երբեմն տակնուվերայ անելով, որ միահաւասար խաշուին, երբ որ խաշուեցաւ և իր ջուրը թողուց ետ առ և փոքր ինչ սառելուց յետոյ մի քանի անգամ թաց կտաւով քամի՛ առանց ձնշելու, որպէս զի իւր նիւթը կտաւիցը դուրս չգայ: Դուս եկած ջուրը բաժանէ մի քանի ամանների

մէջ, որ աւելի պարզէ և ապա օգտելու չափ շաքար պարզէ ձուռվ և քամէ, կըկին դիր կըակին, թող հասնի երկրորդ թանձրաչափին, ապա յետ առ, թող սառչեառուց յետոյ պարզ սերկելի ջուրը լից շաքարի մէջը, դիր կըակին, եփուելու ժամանակը համը տես ու մէջը լիմոն քամէ կամ լիմոնի աղ դիր, որ գոյնը աւելի դեղնագոյն լինի քան թէ կարմրագոյն, այսպէս եփէ մինչեւ չորրորդ թանձրաչափին ըստ օրինակի 54 համար հաղարձին:

ԿԱՐՄԻՐ ՄՈՒԻԻ (Պէօյիւրթլէն) ԶԲՈՎ.

68.

Կիսահաս կարմիր մորին լուա, լից եփման ջրի մէջ, խաշէ միւսների նման և ջուրը պարզացրու, որ տիրդ չի մնայ. ապա ըստ օգտելոյն շաքարը ձուռվ պարզէ, թթուութիւնը չափաւորէ, քամէ մինչեւ չորրորդ թանձրաչափը ըստ օրինակի 54 համար հաղարձին:



ՀԱՏՈՒԱԾ

ԳՈՅՆ ՏՈՒԱԾ ԺԻԼԵՑԻՔ.

ԿԱՐՄԻՐ ՀԱՂԱԲՃ ԳՈՅՆԻՆ ՆՄԱՆԱՑԲԱԾ.

69.

Եթէ ձմեռը լողապ հարկաւորի և միրդ չինի շենելու, կարելի է այս գունաւոր լողապները շինել:

ԱՌ երեք գրուանքայ շաքարի համար երկու մըսաւ լսալ որդան կարմիր (զըմկ), բայց եթէ զինիով մարած լինի (1), աւելի լաւ կըլինի, և կէս մսխալ լողուր, այս երկուսն ՚ի միասին ծեծէ, բայց ոչ աւելի բարակութեամբ, մի փոքր մաքուր պղնձիմէջ լից կէս շիշ (բուքալբութել) ջուր և դիր կրակին, երբ որ լաւ եռ գայ, այս ծեծածդ լից մէջն ու շուտով փայտէ զրդալով մի երկու անդամ խառնէ. այն չափ եփէ մինչև կէսը մնայ, ապա յետ դիր, թող փոքր ժամանակ ծաղիկը նստի պղնձի տակը, ու քամէ կամաց պղինձը ծռելով և երեսի պարզածը ուրիշ ամանի մէջ լցնելով. յետոյ պղնձի տակին մնացածի վերայ մի բաժակ սառը ջուր լից, կրկին դիր կրակին, մի քանի անդամ եփ տուր և առանց քամելոյ նոյնպէս լից միւս ջրի վերայ. ապա առ կըւած շաքարը և կըտրելու համար ձուի սպիտակուցը հարած ջրի վերայ լից և ծաղկի ջուրը խւր տիրդով լից շաքարի վերայ, բայց սառած պէտք է լինի և բաւականին ևս սառը ջուր. յետոյ դիր կրակին և կրկին լաւ մաքրէ, ու կարէ: Ապա քամէ, թաց ու բարակ կտաւով երկու անդամ, որ ծաղկի փոշուցը բնաւ միջին չմնայ, կրկին դիր կրակին, թող եփուի մինչև երկորդ թանձրաչափին գալը և այս ժամանակին մէջն լից շատ թանձր եփած լիմոնի ջուր, որ այսպէս պէտք է պատրաստ ունենաս:

Մի ամանի մէջ մի քանի թթու լիմոն մղէ, թաց կտաւով քամէ ու դիր մարմանդ կրակի վերայ, փայտէ

(1) Ծաղկի վերայ սպիտակացեալ ունեցածին (քիլէչիոռ) կասեն, որ կրովէ հանդցրած, բայց սպիտակ չունիցածին (շարապիոռ), որ դինիով է համարցրած:

զրդալով այնքան էստոնէ, որ սառած ձեթի նման թանձարանայ:

Այս լիմոնի ջրիցը այնքան լից շաքարի վերայ, որ բաւականին թթուի և կարող լինիս լողապ շինել և եփէ մինչև հասնի չորրորդ թանձրաչափին, ապա յետ առ ։ Եթէ կամիս հաղարձով լողապի նմանացնել, մէջը բնաւ հոտ մի' գնել, իսկ եթէ կամիս վարդի նմանացնել, մէջը մի քանի կաթիլ վարդաջուր կաթեցրու, մի երկու անգամ խառնէ և լից աժանների մէջը:

ԴԵՂԻՆ ԳՈՒՆՈՎ ՓՈՐԹՈՒՔԱԼԻ ՆՄԱՆԱՑՆԵԼ.

70.

Շաքարին գոյն տալոյ բաւականութեամբ քըքում (զաֆուան) թթու գոլ ջրով և կրակից հեռու դիր երկու ժամկց աւելի, ապա քամի թաց ու բարակ կտաւով, ուղածիդ չափովը շաքար կտրէ, լաւ պարզէ ու քամէ', կրկին դիր կրակին, եփէ մինչև երրորդ թանձրաչափին հասնիլը. յետոյ քըքումի ջրով ներկէ, այնպէս, որ ոսկու գոյն դառնայ ու թանձր լիմոնի ջուրը լից (1) այնքան, որ բաւականին թթոււթիւն ստանայ շաքարը, որ կարելի լինի լողապ շինել. (Եթէ լիմոն չի ճարուի, անճարացեալ կարելի է լիմոնի աղ քցել). այսպէս եփէ մինչև հասնի չորրորդ թանձրաչափին ու յետ առ, լից ամանների մէջ, իսկ քըքումի հոտը կտրելու համար փորաթուքալի, պերգամօթի, լիմոնի կամ կիտրոնի իւղ լից, այնպէս, որ իր գոյնին յարմար լինի:

(1) Տե՛ս 72 երեսի խըստը:

ԿԱՆԱԶ ԳՈՑՆՈՎ ԴԱՂՁԻ (պիտնա, նանէ) ԻՒՂՈՎ.

71.

Առաջ վերոյգրեալ զեղենը լից, ինչպէս զրուած է նորա համար ու երբ որ հասնի երրորդ թանձրաչափին և անցնի դէպի չորրորդը, դու այս հետևեալ կերպի կապուտ ներկիցն մի քանի կաթիլ կաթեցրու մէջը, որ այսպէս պէտք է պատրաստած ունենաս օր առաջ:

Առ վեց ու կէս մսխալ (տասը զրամ) ընտիր զած եաղի ու երկու մսխալի երեք բաժնից մի բաժնն չիվեթ. զած եաղու մէջ թող հալի 5—6 ժամ. խակ եթէ շուտով կամիս հալչի, զածեաղին 50 կամ 40 աստիճան տաքացրու, որ գոլ կրւինի, ապա չիվեթը լից մէջը երկու ժամուան մէջը կրհալչի և այս կրւինի կապուտ ներկի: Շատ զզութեամբ կարելի է այս ներկս 'ի գործ դնել լիկուների և շաքարեղենների համար ևս, ըստ որում մի կաթիլը շատ բան կըներկէ: Եթէ այս ներկը շինելու համար չկամենաս աշխատել, զեղավաճառաց մօտ ևս կըդտնուի:

Առաջ ներկիցը երբ որ մի քանի կաթիլ կաթեցրիր, մի զեղեցիկ կանաչ գոյն կըշինվի, որ պէտք է եփես մինչև հասնի չորրորդ թանձրաչափին և իւր գոյնին յարմար մի հոտաւէտ իւղ կաթեցնես մէջը, ինչպէս դաղձի, պատրինձի (օղուլ օթուի) կամ այլ ինչ հոտ և վերջապէս մի երկու անդամ խսոնես ու լցնես շատ մանր ամանա ների մէջ:

ՍՊԻԾԱԿ ԳՈՅՆ ՈՒՆԵՑՈՂ ՃԻԼԵՑԻ.

72.

Բաւականին շաքար ա՛ռ և շատ զգու շուշեամբ ձու-
ով պարզէ . պարզելուց յետոյ երկու անդամ՝ քամէ և
կըկին դիր կրակին, եփէ . երբ որ կըմօտենայ չորրորդ թանձ-
րաշափին , մէջը լից եփուած ու թանձրացած լիմոնի
ջուր (1) կամ լիմոնի աղ, այնքան, որչափաւորի թթու-
ութիւնը, ոչ թէ քաղցր համարուի , այլ թթու ու երբ
կըհանի չորրորդ թանձրաշափը , ետ առ կրակիցն , ու
մէջը կաթեցրու մէկ քանի կաթիլ լիմոնի իւղ և լից ա-
մաններդ , այս ժիլյի թթուութեան համար լիմոնի
աղ դնելը աւելի յարմար կըլինի , որ զոյնը չի դեղնացը-
նել :

ՈՍԿԵ ԶՕՄ.

73.

Ինչ լողակ որեիցէ , կարելի է ոսկեզօծել տաք տաք
ամանների միջ ածած ժամանակը այսպէս:

Որեիցէ լողավը երբ որ չորրորդ թանձրաշափը հաս-
նելուց յետոյ կրակիցը վեր կառնես ամանները լցնելու ,
յառաջ մի մեծ դրգալով առ , ածած ամանի մէջն ու ամանը
շուռ տալով ողողէ ու առ ոսկէ վարագը ամանի կողքին
մանր մանր կտրտելով կոցրու , որ խակոյն կըփակչե , առա

(1) Տե՛ս 72 երեսը լիմոնի ջուրը եփելու խրառը :

Փոքը ինչ լից ամանի մէջն ու վրէն ոսկի վարաղ ածէ, այսպէս մի կարդ լողապ մի կարդ վարաղ լից մինչև բերանը բայց շատ շուտով պէտք է կատարել այս գործողութիւնը, որ չառուչի: Այսպէս լողապը կըսկեզօծուի և ուտելու անվաս կըլինի:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԺԻԼԵՑԻ ԿԱՄ ԼՈՂԱՊ ՔԱՂՑՐԱԽԵՆԵԱՅ

ՎԵՐԱՅ.

Ժիլեյի, որ Կ. Պօլիս լողապ կասեն, այնպիսի մէկ տեսակ քաղցրաւենի է, որ շատ նմանութիւն ունի Պոլսոյ (Էլմասիեյ) անուանեալ և Ռուսաստան (Ժիլեյ) կոչեցեալ քաղցրաւենեացը. բայց զանազանութիւնն այն է, որ էլմասին սառուցով կամ ձիւնով կըկանգնի զրգալի վերայ և կըդողդողայ և 'ի շարս քաղցրեղին կերակրոյ կըհամարուի և Ելմասիէի մէջ սոսինձ (թութիւալ, ծեպօ) է զրուած, բայց ժիլեյի կամ լողապ կոչեցեալ քաղցրաւենեայ մէջ անպատճառ պտուղի թթու ջրով կամ լիմոնի ջրով կամ լիմոնի աղով հարկաւոր է թթուութիւն գնել, որ սոսինձի տեղը բռնէ և զրգալի վերայ կանգնի:

Լողապ կամ ժիլեյի քաղցրաւենին կըբաժանի երկու մէին Կ. Պօլիս քեսմէ կասեն, և միւսին թէլի: Գէսամէն այնէ, որ չափաւոր թթուութիւն կունենայ. այսինքն աւելի թթու, քան քաղցր և որ եփելուց և սառելույ յետոյ զրգալով վերցնես, կկարուի ու զրգալի վերայ կըկանգնի առանց զրգալի չորս կողմերով ծոր տաւլու:

Իսկ թելին այն է, որ թթուն սակաւ կըլինի և սառ-

չելուց յետոյ դրգալով վեր կալած ժամանակը ծոր կը-
տայ և կըհարկաւորի դրգալին պատաժելով վեր առնել:
Այս տեսակն շատ զովելի չէ, ըստ որում շատ նեղու-
թիւն կտայ ուտաղին մանաւանդ մօրուքաւոր և բեղաւ-
որ մարդկանց : Մէկ քանի մրգերի համար գրեցինք
ձուով շաքարի հետ պարզել և մի քանիսը ոչ ըստ որում
կան այնպիսի մրգի ջրեր, որ եթէ շատ եփուին, կըկարա-
մրին կամ կըսեանան . կան և այնպիսի ջրեր, որ մէջը
թթու դնել հարկաւորչէ, կան և այնպիսի մրգեր, որ
թթուութիւնը սակաւ է, զորօրինակ ծիրանն, վայրենի
ելակն և այլն. այսպիսեաց մէջ անպատճառ հարկաւոր է
թթու դնել: կան նոյնպէս այնպիսի մրգեղեններ, որ ե-
թէ թթու չի դնես, դոյնը շատ մուք կըլինի, զորօրինակ
սերկելը և այլն :

Այս ժիշյինների մէջ կան այնպիսինները, որին հոտ
տալ հարկաւոր է, բայց ոչ թէ պէտք է մէջը փոշի կամ
իւղ լքյնելով հոտ տալ, այլ քաղցրաւենիի ամանները
պէտք է բոնել հոտաւէտ առարկայի ծխի վերայ, զոր-
օրինակ հալուէի (էօտ աղամի, զուրսի) և այլն: Ժիշյ շի-
նելու համար նոյնպէս պէտք է մրգի ջրերը լաւ պար-
զեցնել, որ ամեննեին տիրդ չի մնայ մէջը, ըստ որում Ա.
որ եփելիս շուշ այրվելուն պատճառ կըդաւնայ և Բ. ե-
փածի դոյնը խիստ մուգ կըլինի, որ ընդհանրապէս մուգ
գոյնն աւելի զովելի չէ: Նոյնպէս զիտել պէտք է, որ այս
ժիշյի կոչեցեալ քաղցրաւենիքը եփելիս յանկարծ շատ
շուտով պղնձի կողքերը կսկսեն կարմրիլ ու շուտով սե-
ւանալ, որով մէջի եղած քաղցրաւենին ևս շուտով կը-
սեանայ, վանորոյ մէծ զդուշութիւն կըհարկաւորի, որ
սկզբումը փոքր ինչ կարմրութիւն տեսնալուս իսկոյն

թաց սպունգով (ամպ, սիւնկեր) սրբելու այն նոր սկըս
սեալ կարմրութիւնը մաքրել և չելթողուլ, որ սեանայ :
Նշնապէս եփելու ժամանակին թանձրաչափի համար
զգոյշ պէտք է լինիլ, որ չորրորդ աստիճան թանձրաչա-
փիցն ոչ պակաս լինի և ոչ աւելի : Թէպէտ ասացինք, թէ
թանձրաչափը տեսնելու համար փոքրիկ դրդալով ափ-
սէի վերայ կաթեցնելով կարելի ճանաչել բայց պէտք
է գիտեցած, որ շատ անգամ կրխաբուի մարդ, վասն զի
մի բոլորակ կաթիլ թէև կրկանգնի, սակայն էլի շուտ
կըցրուի . նոյնպէս ափսէն պէտք է շատ չոր և մաքուր
լինի, խոնաւութիւն չունենայ, վասն զի եթէ խո-
նաւութիւն ունենայ թէև չորրորդ թանձրաչա-
փին հասած լինի, բոլորակ չի կանգնիլ թէփշեի վերայ :
և կըցրուի . բայց երբ որ լաւ չորացած լինի թէփշին, վա-
րան կաթեցրած կաթիլդ կոլոր կրկանգնի, որ թէև ափ-
սէն ծռես, նոյն կաթիլը ինքն ևս կրծոռուի, բայց չի ցըր-
ուիլ, բայց և ոչ էլ պէտք է սիսեռի նման պինդ մնայ :
Այս ժամանակին կարելի է մի երկու դրդալաչափ լցնել
փոքրիկ ափսէլի մէջ և շուտով դնել ափսէն սառը ջը-
րի մէջ . երբ որ սառեցաւ, դրդալով առնել և տեսնել,
եթէ ժիլելին կտոր կտոր եղաւ, գիտեցիր, որ հասած է,
բայց այս փորձը լաւ վարպետների համար չէ : Այս ևս
զիտելի է, որ եթէ երեք չորս անգամ կրակիցն յետ առ-
նես այս փորձն անելու համար, ժիլելի դոյնը կըփչա-
նայ և թէպէտ ամէն քաղցրաւենի կրակիցը յետ առ-
նելով և վրէն դնելով դոյնը կրկորցնէ, բայց աւելի ժի-
լելին, վասնորոյ հարկաւորէ կրակից յետ շառնելով այս
փորձերն առնել, կամ թէ մի անգամ յետ առնելով բա-
ւականանալ :



ԳԼՈՒԽ Ե.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԹԱՆՁՐԱՉԱՓԻ ՎԵՐԱՑ ԶԵՎԻԻՐՄԵ (պօմագա)

ԿՈՉԵՑԵԱԼ ՔԱՂՅՐԱՒԵՆԻՔ.

ՎԱՐԴԱՉՐՈՎ ՊՈՄԱԴԱՑ.

74.

Ա. լաւ տեսակ վարդը, խոր կտրէ, որ աերեների սպիտակ կէսն չմնայ, որ դառնութիւն չտայ, մեծ ծականի մաղով մաղէ, այնպէս, որ դեղին սերմն չմնայ. քիչ ջրով խաշէ, ջուրը առ (1) ու լաւ պարզեցրու. ապա առ դոյնին և համին օգտելու չափովն շաքար, այսինքն ոչ այնքան շատ, որ դոյնը բաց և համն ու հոտը քիչ լինի և ոչ այնքան սակաւ, որ վարդի ջլի դառնութիւնը չծածկէ: **Ա.յ** շաքարի համար քաղցրաւենու պղնձի մլջին ձուի սպիտակուցը ջրով հարէ, շաքարը լիցսորավերայ ևս վարդի կարմիր և պարզ ջուրը, և եթէ տեսնես, որ ջուրը քիչէ, սառը ջուր աւելացրու վրէն ու կտրէ ինչպէս կարգն է. երկու անգամ թաց կտաւով քամելուց յետոյ լից կըս-կին մաքուր լուացած քաղցրաւենու պղնձի մլջն և դիր

(1) Սորա համար տես Ա. զլուխը 23 երես վարդի քաղցրաւենու համար. չուրը առնելու խրառը:

կրակին, երեսին բռնած հաստ քափը քաշելով եփէ լաւ այնքան մինչեւ հասնի հինգերորդ թանձրաչափին, բայց դեռ չվեր կալած՝ պէտք է պատրաստի ունենաս վեց գրը ուանքայ, այսինքն մէկուկէս հոլսայ շաքարի համար մի սեղանի գրգալ լիքը քամված լիմոնի ջուր կամ նոյն զօրութիւնը տալու չափ լիմոնի աղ, յառաջ ձգես մէս ջը, ապա յետ առնես մի հարթ հաւասար տեղ, որ ուղղ դակի կանգնի շաքարը: Փոքր ժամանակից յետոյ երեսի բարակ փրփուրը քաշես զրդալով զգուշութեամբ և թռողուս մինչեւ սառչե բաւական, այնպէս որ մատով փորածելուս չայրի:

Այս դրութեան երբ հասաւ, պէտք է ունենալ մի բոլորակ փայտ վեց մատնաշափ հաստութեամբ և երկու թիզից փոքր ինչ աւելի երկայնութեամբ: Այս փայտով պէտք է այնքան հարել որ փափուկ խմորի նման թանձրանայ. երբ սիսի պնդանալը, դեռ մածունի պնդութեան չհասած՝ պատրաստի ունեցած լիմոնի ջրիցը (1) փոքր առ փոքր համը տեսնելով լցնել մէջը, մինչեւ բաւական թթուութիւն ստանայ (2) և այնքան խառնել, մինչեւ բաւական թանձրանայ փափուկ խմորի չափ, ասպա լցնել խիստ չոր ամանների մէջ և ծնկան կամ ձեռաց վերայ այնքան հարել (զարկել), մինչեւ երեսին պղպջակներ ունենայ և մէջը բնաւ ծակատկիք չմնայ, ապա բերանը ծածկել և երկար ժամանակ պահել:

(1) Այս լիմոնի ջուրը պատրաստելու խրառով տես զլուկս դ. 73 երեսը:

(2) Ախմոն չեղած ժամանակը կարելի է լիմոնի աղ ի դարձ դնել:

Վերեւ գրուեցաւ, որ կրակը սաստիկ լինի կամ թէ
կրակիցը յետ չառած մէջը թթու դնել սորա պատ-
ճառն այն է, որ ուտելու ժամանակը քաղցրաւենին ա-
ւազոտի նման չի լինիլ այլ փափուկ իւղի նման: Ուստի
այս կանոնները, այսինքն եփելու ժամանակը երեսի քա-
փը քաշելը և սառցնելու համար վերցնելուց փոքր միջու-
ցից յետոյ երեսի կապած բարակ փրփուրը քաշելը, ան-
պատճառ պէտք է 'ի գործ դնել հետագայ պօմագա
քաղցրաւենեաց հտմար ևս: Պէտք է իմացած նոյնպէս,
որ եթէ երբեմն թանձրաչափը փոքր ինչ պակաս եղաւ.
որքան փայտով հարես, ուզածիդ չափ չի թանձրանալ.
վասնորոյ եթէ գոնէ մածունի նման պնդացաւ և սա-
ռեց, էլ մի' աշխատել, նոյնութեամբ լից ամանների մէջ.
Զ4 ժամից յետոյ ինքն իրան կրպնդանայ, միայն այսպիսին
տաք ժամանակը շատ չի կարող դիմանալ, կըթթուի և
կբարձրանայ: Իսկ եթէ թանձրաչափը շատ պակաս է,
երբէք չի միաւորիլ, ուստի պէտք է այսպիսի տեսակը
թթու չձգել այլ վրէն փոքր ջուր լցնել և կրկին դնել
կրակին, խառնել մինչև ջրի հետ միաւորի և եփել, մին-
չև հինգերորդ թանձրաչափին հասնելը: Ասացի մէջը
թթու չձգել, վամն զի թթու օշարակն որքան եփես,
պօմագա չի շինուիլ, այս է պառճառն, որ երբ հասնում
է մածունի պնդութեան նոր են թթու տալիս, որ հետ
պէտէ աւելի պնդանումէ:

Այս առաջին կերպը մանրամասն պարագայիւք գը-
րելու պատճառն այն է, որ միւսներն ևս սորա պէս կը-
շինուին:

ԱՆՈՒՇԱԿԻ ԶՐՈՎ.

75.

Ինչպէս գրուած է վարդի համար, նոյնութեամբ և իսկութեամբ շինել և մանուշակը, որ սորայ ևս մէջը թթու դնել կըհարկաւորի, որ գոյնը սիրուն լինի :

ՅԱՍՄԻԿ ԾԱՂԿԻ ԶՐՈՎ.

76.

Քսան հատի չափ յասմիկ ծաղիկ դիր մի բաժակաչափ պարզ ջրի մէջ, բերանը հաստ թղթով ծածկէ, դիր մէկ հով և սառն տեղ 24 ժամ. միւս օրը այն ծաղկները հանէ ջրիցը և նոր 20 հատ ծաղիկ դիր միևնոյն ջրի մէջը. այսպէս հինգ վեց օր ծաղիկ փոխէ և ապա ըստ բաւելոյ ջրի հոտաւետութեանը շատ գլխաւոր սպիտակ շաքար առ, (որ վեց զրուանքայաչափ լինի) ու ձուով կտրելու ժամանակը այս յասմիկի ջուրն էլ լից վրէն՝ի միասին կտրէ, քամէ, կրկին դիր կրակին, եփէ մինչև հինգերորդ թանձրաչափին հանիլը. կրակից վերցնելու ժամանակը մի սեղանի դրդով լիմոնի ջուր կամ ըստ բաւականին լիմոնի աղ լից վրէն, յետ առ ու մի փաքը միջոցից յետոյ երեսի փրփուրը զգուշութեամբ քաշէ. և երբ որ տեսնես թէ մատդ միջին դիմանումէ, փայտովդ հարէ (զարկէ) վարդի նման. միայն սորա մէջը պնդանալուն մօտենալու ժամանակը թթու չի յար-

մար զնել : Այս եթէ խիստ գլուխ սպիտակ շաքարով
շինուի և կտրելու ժամանակը կեղար զգուշութեամբ
քաշուի շատ սպիտակ կը լինի :

ԼԻՄՈՆԻ ԾԱՂԿԻ ԶԲՈՎ .

77.

**Յասմիկի ծաղկով շինելու կերպն ևս սորա համար 'ի
գործ դիր, սակայն սորա ծաղկներն ամբողջ մի՛ ձգիւ ջըի
մէջը, որ դառնացնէ . այլ ծաղկի սպիտակ տերևները միւ-
այն ձգէ :**

ԿԱԿՊԻ (օխլամուրի) ԾԱՂԿԻ ԶԲՈՎ .

78.

**Կակղի ծառի ծաղկած ժամանակը ծաղկիցը
հաւաքէ, լից մի ամանի մէջ վրէն այնքան ջուր լից, որ
ծաղկները ծածկի, թող մնայ 24 ժամ. միւս օրը այն
ծաղկները հանէ և կրկին այնքան ծաղիկ դիր մէջը և
փոքր ինչ ել ջուր աւելցրու, այսպէս արա 4 օր. եթէ
ծաղիկը քիչէ, առաջին օրուան ծաղիկն ևս թող մնայ
չորս օր. չորրորդ օրը թէ այսպէս և թէ այնպէս պատ-
րաստածդ լից արաղ քաշելու պղնձի մէջ (իմպիկ),
բայց լաւ զգուշացիր, որ պղնձը հոտ չունենայ. բե-
րանը խմորով ծեփի, զիր կրակին ու արաղի պէս քաշէ.
Ջուրը, այսինքն ոգին առ ու այս ոգիովը շինէ այսպէս :
Շաքարին հոտ տալու բաւականութեամբը այս ջըիցը
լից վրէն, երկուսը 'ի միասին ձուով կտրէ, քամէ և դիր**

կրակին . եփէ և տես . եթէ կակղիի հոտը պակասէ ,
փոքր ինչ աւելցրու վըէն և եփէ մինչև հասնի հինգեւ-
րորդ թանձրաչափին , ապա վըէն մի դրդաւ լիմոնի ջուր
լից , յետ առ . կրակիցը ու մի քիչ միջոցից յետոյ երեսի
քափը քաշէ ու երբ մատդ տաքութեանը դիմացաւ , փայ-
տովդ հարէ , սակայն յետոյ մէջը թթու մի դնիլ ; Այս
նոյնպէս եթէ շատ գլուխ սպիտակ շաքարով եփուի ,
չափազանց սպիտակ կըլինի :

ՊԱՏՐԻՆՁԻ (օղուլ օժուի) ՏԵՐԵՒՈՎ .

79.

Այս ևս կակղի ծաղկի նման արաղի պղնձով
քաշէ , ջուրը առ և նորա կերպովը եփէ :

ԴԱԲՆԻ ՏԵՐԵՒՈՎ .

80.

Վեց գրուանքայ (մէկուկէս հօխայ) շաքարի համար
10 կամ **12** հատ նորոդ կամ չոր գարնեայ տերև առ . վըէն
այնքան ջուր լից , որ երեսը ծածկէ և թռղ մնայ **24**
ժամ . ապա եփէ այնքան , որ չորս բաժնից մինը պակասի .
այս եփած ջուրը առ , լից շաքարի վերայ , ՚ի միասին
կարէ և եփէ ըստ եղանակի վերոգրելոյն :

ՄԱԼԻՆԱՅԻ (աղաճ չելէյի) ԶՐՈՎ .

81.

Մալինան (աղաճ չելէյի) լից մի հողէ ամանի մէջ :

լաւ Շմոէ . լից մի կտաւի մէջ ու լաւ սղմելով քամէ և ջուրը առ : Այս ջրի բաւականութեամբը շաքար առ , ջուրը վոհն լցրու , ՚ի միասին ձուով կորէ ու եփ եկած ժամանակը համը տես , որ թթու չի լինի , միայն հոտ ունենայ և շատ փոքր էլ թթուութիւն . ապա լաւ կրտա քելուց յետոյ երկու անգամ քամէ շատ մեծ զգուշութեամբ , որ մալինայի տիրով չմնայ մէջը , որ թանձրաւ շափին հասնելու ժամանակը պղնձի տակը չնստի ու այրի կամ սեանայ . կրկին դիր կրակին , եփէ մինչև Յրդ թանձրաւ շափին գալը (1) : Սորա մէջ կրակիցը վերցնելուս լիմոնի ջուր ածել չէ հարկաւոր , որովհետեւ ինքն արդէն փոքր ինչ թթուութիւն ունի . սակայն հարեւ լու ժամանակը կրհարկաւորի այն թանձր շինած լիւ մոնի ջրիցը լցնելու այնքան , որ թթուութիւն ունենայ :

ԵԼԱԿԻ ԶՐՈՎ .

82.

Ելակը ընտրէ , լուա ու մալինայի նման առանց խաշելու ջուրը առ և նոյն կերպովն եփէ . միայն սորա հաւ ըելու ժամանակը լիմոն դնել չէ հարկաւոր :

ՎԱՅՐԻ ԵԼԱԿԻ ԶՐՈՎ .

83.

Վերոգրեալ ելակի կերպովը շինել և մէջը սմենելին թթու չի դնել :

(1) Տես 5րդ թանձրաւ շափի համար 13 երեսը :

ՄՄԱԴԻ (զերիշկ, թութուպայ, ամպերպարիսպ) ԶՐՈՎ.

84.

Ամաղը հատ հատ արած ու քիչ ջրով լաւ խաշէ . լից կտաւի մէջ , քամէ ու ջուրը առ . այն ջուրը լից մի փոքր պղնձի մէջ դիր , կրակի վերայ և անդադար փայտէ դրգալով խառնելով եփէ մինչեւ լաւ թանձրանայ և դառնայ սառը ձիթի նման . ապա յետ առ կրակից ու լից աւմանի մէջ եթէ երկար ժամանակ ևս անցնի , չի փչանալ :

Ա՛ռ ըստ կտմեցողութեանդ շաքար , լաւ կտրէ , քամէ և կրկն դիր կրակին եփէ մինչեւ հասնի հինգելորդ թանձրաչափին ու յետ առնելու ժամանակը լիմոնի ջուր լից վըէն . հարելու ժամանակը երբ որ տեսնես , թէ սկսեց շաքարը թանձրանալ ու միաւորուումէ , քիչ քիչ այն եփուած սմաղի թանձր ջրիցը լից վըէն այնքան , որ լաւ համ ու գոյն տայ : Եթէ սմաղի ջուրը թանձր չեփես , շաքարի վերայ երբ որ լթնես , շաքարը կը ջրակալի և քաղցրաւենին լաւ չի լինիլ . ուստի պէտք է թանձր շինել , որ քաղցրաւենին լաւ լինի :

ՓՈՐԹՈՔԱԼԻ (ապելսին) ԶՐՈՎ .

85.

ՓՈՐԹՈՔԱԼՆԵՐԸ խոր կճպէ , մզէ , ջուրն առ , կտաւով քամէ ու փոքր պղնձով դիր կրակին , եփէ կամաց կամաց անդադար փայտէ դրգալով խառնելով , մինչեւ լաւ թանձ-

բանայ. սովա այս ջրովը շինէ քաղցրաւենին, ըստ եղաւնակի սմաղե:

ԹԱՐՄ ՇԻՐԱՆՈՎ. (ՂՋԵՍԻ).

86.

Երեք գրուանքայ շաքարի համար եօթը հատ լաւ մեծ ծիրան առ, կորիզները հանէ ու թաց կտաւի մէջ սղմելով ջուրը վեր կալ: Շաքարը կարելու ժամանակը այս ջուրը 'ի միասին կտրէ, քամէ ու եփէ մինչև հինդերորդ թանձրաշափին գալը և ապա ըստ կանոնի շինէ քաղցրաւենին :

Կարելի է նոյնպէս ծիրանի կորիզները հանել ու շաքարը կտրելու ժամանակը այնպէս լցնել մէջը, որ 'ի միասին եփի և իւր զօրութիւնը այնտեղ դուս տայ. ապա շաքարի հետ 'ի միասին քամել:

Այս զիտել արժանէ, որ ծիրանով շինած քաղցրաւենին երբէք թթու տալ չէ հարկաւոր թէ սկզբումը և թէ վերջումը:

Վ. Ա. Ն. Ե. Լ. Ի. Ա. Ց. Ո. Վ. •

87

Վանելեան մանր կոտորէ ու **Զ4** ժամաշափ մի գաւաթ ջրի մէջթրչէ. միւս օրը ըստ կամեցողութեանդ շաքար առ, կտրելու ժամանակը այս վանելիայի ջուրն ևս լից վըէն, վանելեան ևս մի փոքր կտաւի մէջ կապէ ու ձգէ մէջը, թող հետն եփի, որ հոտը դուս տայ. սակայն վանելեան պէտք է չափաւոր լինի, այսինքն ոչ այն-

քան շատ, որ անախորժ լինի և ոչ այնքան քիչ որ զօռ բութիւն չունենայ. այսպէս, որ շատ անդամ վեց գըշ բուանքայ շաքարին մի վանելիան բաւական է:

Կաքարը լաւ կտրելուց յետոյ կտաւով քամէ և մէջ ջը ձգած վանելիան հանէ, կտաւը մաքրէ կամ փոխէ ու կրկին ձգի շաքարի մէջը՝ ի միասին եփէ մինչև իւր թանձրաչափին մօտենալը, ապա հանէ ու շաքարը երբ որ հինգերորդ թանձրաչափին դայ, մէկ դրգալ լիմոնի ջուր լից մէջը ու կրակիցը յետ առ, որ սառելուս ըստ կանոնի փայտով հարես: Բայց գիտել պարտէ, որ այս տեսակի մէջը վերջումը թթու ձգել չե հարկաւոր:

Երբ որ ամանները լորիր, վանելիայի միջի սերմերիցը յանէ քաղցրաւնիի երեսին:

Այս վանելիայով քաղցրաւենին շատ ուժ տուողէ, ուստի հիւանդաց չպէտք է տալ, որ տաքութիւն կը պատճառէ:

ԶՈՐ ՄԵԽԱԿՈՎ. (Պարանֆիլ) •

88.

Վեց գրուանքայ շաքարի համար առ. **20** հատի չափ մեխակ, դիր մի գաւաթ ջրի մէջ, թող **24** ժամ մնայ. միւս օրը մի գաւաթ ջուր էլ աւելցրու վըէն ու մի փոքր մաքուր պղնձով դիր կրակին, եփէ մինչև կէսը մնայ. ապա քամէ այս ջուրը, լից շաքարի վերայ և՝ ի միասին կտրէ ու քամէ, եթէ հոտը տեսար քիչէ, թրչած միխակներն մի փոքր կտաւով կապէ և ձգէ հետը եփի մինչև հինգերորդ թանձրաչափին դալը. ապա լիմոնը լից վըէն ու յետ առ. միւս մնացածը շինէ ըստ գրելոյն:

Այս աեսակի մէջը վերջումը հարկաւոր չէ թթաւ գնել, այլ մի երկու միխակ ծեծէ, փոշե արա ու քաղցրաւ մենին ամանները լինելուց յետոյ երեսին ցանէ բարակ :

ԿԻՆԱՄՈՒՆՈՎ, (Քառչին) .

89.

Վեց գրուանքայ շաքարի համար 10 մսխալաշափ կինամոն թրչէ բաւականին ջրով. թող մնայ 24 ժամ. միւս օրը այնքան ջուր էլ աւելցրու և եփէ մինչեւ կէսը մնայ, առա քամէ, ջուրն առ ու եփէ ըստ եղանակի միշխակին :

ԽՈՍՐՈՎԱԴԵՊ, ՀԱԽԼԻՃԱՆ ԱՐՄԱՏՈՎ.

90.

Վերոգրեալ կինամոնի չափովն ջուր առ և ըստ եզ զանակի նորին եփէ:

ԲՈԽՆԻ ԿԱՄ ՀՐԵՇՏԱԿԱԲՈՅՑՍԻ (անձէլիքա) ԱՐՄԱՏՈՎ.

91.

Վայս մի տեսակ սիրուն հստաշէտ արմասէ, որ պէտք է կինամոնի չափովն և միխակի կերպովն թրչել, ջուրք առնել և եփել:

ԱՆԴԵՂԵԴՈՎ, (զեւմողիւլի հինտի).

92.

Վեց զրուանքայ շաքարի համար մի մսխալ անդէզ 12

զեդ կամ զիւմպիւլի հինտի առ, թրչէ կէս գաւաթ ջը-
րով և 24 ժամ մնալուց յետոյ այնքան ջուր ևս աւելա-
ցրու ու եփէ ըստ եղանակի միխակին:

Մ Ա Ւ Շ Ք Ո Վ .

95.

Այս զրուանքայ շաքարի համար մի մսխալ կամ
փոքր ինչ աւել կամ պակաս մուշկ առ (1), վարդաջրով
թրչէ 24 ժամ + ապա քամի այդ ջուրը, լից շաքարի
վերայ ու մուշկն ևս փոքր կտաւով կապէ, ձգէ շաքարի
մէջը, կտրէ, քամի ու հանէ մուշկը, կտաւը մաքրէ ու
կրկին ձգէ մէջը, թանձրաշափի բեր ըստ եղանակի մի-
խակի :

Ա Մ Պ Ե Բ Ո Վ .

94.

Այս ևս մուշկի չափովն և նմանութեամբն շինէ,
միայն պէտք է իմանալ, որ որպէս սորա նոյնպէս և մուշկի
հոսն որքան սակաւ լինի, այնքան աւելի անմնաս և ա-
խորժելի կը լինի + իսկ շատը ընդ հակառակն դլխացաւ
կը պատճառէ :

(1) Սորա հոտի որքանութիւնը կախեալէ և իտի կամացը:

Հիլով. (Քաքուլայ).

95.

Վեց գրուանքայ շաքարի համար առ ինն մսխալ հիլ խոշոր ծեծէ, լից փոքր ինչ ջըի մէջ և թող մնայ 24 ժամ. միւս օրը այնքան ևս ջուր աւելցրու վրէն և եփէ մինչեւ մնայ կէսը, ապա քամէ, լից շաքարի վերայ, 'ի միասին կարէ ու եփէ ըստ օրինակի միխակին:

ՏԱՐ ԿՈՅՈՎ. (զահճաֆիլ).

96.

Վեց գրուանքայ շաքարի համար 10—15 մսխալ ըստ կամեցողութեանդ տաք կոճը չափաւոր ջրով թրչէ ու թող 24 ժամ. միւս օրը փոքր ինչ ևս ջուր աւելացրու խաշէ և այս ջրովն եփէ միւսների նման: Այս եթէ ծեծուի ու բարակ մաղուի և փայտով հարելու ժամանակը փոշին լցուի, շատ համեղ կըլինի, մանաւանդ ձըս մեռը ճանապարհ գնացողաց համար, բայց այս տեսակը ջրով շինածի նման սպիտակագոյն չի լինիլ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.

Վանելիայով քաղցրաւենիցը սկսեալ մինչեւ տաք կոճը տեղեկանալուց յետոյ այս է հարկաւոր գիտենալ, որ թրչելով խաշելով շինելու պատճառն նորա քաղցրաւենին սպիտակ լինելն է, իսկ եթէ ոմանք կամենան գոյնին չնայել,

կարեն այս նիւթերը բարակ ծեծել և մաղել ու փոշի լցնել և երբ սկսի փայտով խառնելու ժամանակը պընչ դանաւ համը և հոտը տեսնելով՝ ի դորձ դնել։ Վանեալիսայի, միխակի և կինամոնի խւղը միշտ կը ճարուի զեղավաճառաց մօտ, կարելի է նոցանից առնել և փայտով խառնելու ժամանակը փոքր ինչ ածել։

ՊԵՐՂԱՄՕԹ ԿՈՉԵՑԵԱԼ ԼԻՄՈՆԻ ԿՃԵՊՈՎՆ:

97.

Պերղամօթ կոչեցեալն մի տեսակ լիմոն է, որ ջուր չունի և միայն շատ դառն է, սորա կճեպի վրայից քերածն միայն կը դորձածուի և խիստ պատուական հոտ ունի. այնպէս, որ կարելի է ասել թէ լիմոնների տեսակների մէջ սրանից հոտաւէտ չկայ և շատ շաքարեղինաց մէջ՝ ի դորձ կը դուռը միայն կանաչ ժամանակը, վասն զի հասած դեղնածը յարգ չունի։ Սրանից կոլիս աների պարտեզներումն առհասարակ կը դանուի, իսկ փողոցումը վաճառելի հաղուագիւտ է. Վրաստան ըոլորովին չի գտնուած, բայց խւղը դեղավաճառաց մօտ շատ կայ։

Եթէ պերղամօթով շինելու լինիս, առ շատ գլխաւոր սպիտակ Ռուսաստանի կամ Անդղեայի շաքար և մեծ զգուշութեամբ կտրէ, որ շատ պարզ լինի, քամէ ու կրկին գիր կրակին եփէ մինչեւ հասնի հինգերորդ թանձրաչափին (1). յետ առնելու ժամանակը վեց դըքա-

(1) § 55. 18 երեսի թամնահաշափի իրաւուց։

ուանքայ շաքարի համար լից մի դրդալ լիմոնի ջուր կամ
աղ և վէր դիր ստոչի :Այս ժամանակը դու պատրաստէ
պերղամօթի բարակ քերուածքը այսպէս:

Այսպիսի բաների համար առանձին յղկիչ (ռանդա)
կայ, եթէ ունենաս այն ռանտայովն միայն վրայի կանաւ
չըն առնես ու հաւաքես, իսկ եթէ ռանդա չունես,
առ մի կտոր ձեռնաշափի շաքար ու լիմոնի վերայ քսէ :
կտեսնես, որ լիմոնի կանաչը շաքարի վերայ դուրս կը-
դայ. ուստի այդ շաքարի վերայ կպածն սուր դանակով
զգուշութեամբ քերէ, որ հետը շատ շաքար չի քերես:
ապա կամ ռանդայով կամ շաքարով քերածդ առ ու երբ
որ փայտով խառնելու ժամանակը տեսնես, որ սկսումէ
սպիտակիլ և պէտք է թանձրանայ, սկսէ բարակ լցնել ու
խառնել. երբեմն ևս համը տես, որ շատ լցնելով չդառ-
նացնես:

Պերղամօթ չճարողն կարէ դեղավաճառերիցը նորա
խւզը առնել և պերղամօթի տեղն կաթեցնել, նոյնպէս
չափաւոր, որ չդառնանայ: Երբ որ ամանները լցոիր ու
ձեռաց մէջը լաւ ծեծեցիր, առ պերղամօթի քերուածքի-
ցը կամ խւզիցը բարակ լից քաղցրաւենիի երեսին:

ԱԻՄՈՆԻ ԿՃԵԹՈՎ.

98.

Աոր կանաչ լիմոնը կամ եթէ չճարուի դեղինը քե-
րել և եփել ըստ օրինակի պերղամօթի:

ԼԻՄՈՆԻ ԿՃԵՊՈՎ, ՄԵԶԸ ԹԹՈՒ:

99.

Շինէ լստ վերողը լցյն և երբ կրպնդանայ, մէջը
թանձրացը լիմոնի ջուր գիր, որի համար տե՛ս 72
երեսը բաւականին թթուութեամբ, որ բացի քաղցրաւ-
ենիրի նման գործ ածելը կարելի է օշարակ շնիել և
խմել:

ՔԱՂ.ՅՐ ԼԻՄՈՆԻ ԿԵՊԵՒՈՎ.

100.

Նոր ու գեղին քաղցր լիմոնը առնել ինչպէս պերա-
լամօթի համար գրուածէ:

ՓՈՐԹՈՒՔԱԼԻ (ապելցին) ԿԵՊԵՒՈՎ.

101.

Հասուն և գեղին լաւ փորթոքալի քերուածքովը
շնիել լստ օրինակի պերղամօթին:

ՆԱՐԻՆՉԻ (թուրինջ) ԿԵՊԵՒՈՎ.

102.

Հասուն և գեղին լաւ նարնջի քերուածքն առնուլ
և լստ օրինակի պերղամօթին եփել:

ԿԻՏՐՈՒՆԻ (պալանկ, աղաձ՝ դավունի) ԿԵՂԵՒՈՎ.

103.

Եթէ կանացը ճարուի շատ լաւ, իսկ եթէ ոչ, գեւ
դինի քերուածքովն շինել ըստ օրինակի պերզամօթի :

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.

Այս հինգ տեսակների այսինքն լիմոնի, քաղցր լիմոնի, փորթոքալի, նարինձի և կիարոնի հոտաւետ իւղերիցը զեղավաճառաց մօտ կրդտնուին, եթէ ինքն չճարուի, իւղը կարելի է գնել և նորա հոտովը շինել ըստ օրինակի պերզամօթի:

ԱՆԱՆՈՒԹԻՒՆ ԻԽՂՈՎ.

104.

Շաքարը կտրէ, քամէ՛ ու կրկին դիր կրակին, թողի մինչև հինգերորդ թանձրաչափը . ապա մի դրդալ լիմոնի ջուր կամ թէ լիմոնի աղ երբ որ ածեցիր, կրաքիցը յետ առ և թողը ըստ բաւականին սառչի . ապա փայտով հարէ ու երբ սկսի սպիտակիլ, այս իւղեցը կտրեցրու մէջը այնքան, որ բաւական հոտաւետ լինի :

ԴԱՐՆ ՆՇՈՎ.

105.

Առ դառը սուշը, իսկ եթէ չի ճարուի, դառը դեղյի
 կորիզը, մի ամանով ջուր գիր կրակին ու եռալուս լից մէջը:
 Մի երկու անգամ որ եփ գայ, կրտեսնիս, որ հեշտութեամբ
 կըկճպուի, յետ առ ու ընտրէ, ընտրածներդ լից սառը
 ջրի մէջ մինչև ամենը վերջանայ. ապա սկսէ նոյն իսկ
 ջրով մի քանի անգամ՝ շփել բրնձի նման և ջուրը փու-
 խէ. յետոյ սակաւ սակաւ ջրիցը հանելով, լից սանդի
 (հաւան) մէջը շատ բարակ ծեծէ ու ծեծածդ մի թայ
 կտաւով ծածկէ, որ չսեանայ: Ասկա առ լաւ գլուխ սպի-
 տակ շաքարը, կտրէ ըստ կարգին, քամէ ու կրկին եփէ
 մինչև հինգերորդ թանձրաչափին դալը. երբ որ թանձ-
 րաչափին հասաւ, լից ըստ կանոնի լիմոնի ջուրը կամ
 աղը և յետ առ, փոքր ինչ սառչելուց յետոյ փայտով
 հարէ. երբ որ սկսաւ շաքարի գոյնը սպիտակի լու մօտե-
 նալ, այն ժամանակը ծեծած նուշը սակաւ առ սակաւ
 լից և խառնէ, մինչև բաւականին հոտ և համ ստանայ:

ՍԱՍՏԱԿՈՎ, (տամշա սաքդի).

106.

Մասսաքի տեսակները շատ են: սակայն գոյլելին
 Սախըզու կղզիից ելածն է, որ Կ. Պոլս շատ կրդտնուի:
 Վրաստան միայն դեղավաճառաց մօտ կրդտնուի. սորմ

Հոտը և համը շատ գերազանց է և սպիտակութեամբ կընմանի մաքուր խնկի. եթէ ծամուի, խսկ և խսկ ձութ է, որ Կ. Պօլիս մեծ մասամբ ձութի համար 'ի գործ կածեն :

Այս մաստակս շատ չոր ամանի մէջ ծեծէ. ըստ որում եթէ փոքր ինչ նամութիւն ունենայ, կրկպչե սանդիցը, բարակ փոշի արա ու խիստ բարակ մաղով կամ աթլազի կոչեցեալ շղարշով (չեքիլէ, թիւլ) մաղէ : Արդ, առ Անդղեայի կամ Ուուսաստանի գլխաւոր լաւ շաքարը, կտրէ, քամէ և եփէ մինչև հինգերորդ թանձրաւ շափին գալը. կրակիցը գեռ չվերկալած՝ լիմոնի ջուրը կամ աղը լից ու վեր դիր թող սառչի. երբ որ փայտով հարելու ժամանակը սկսաւ սպիտակելու մօտենալ, այս մաստաքի փոշուցը փոքր առ փոքր լից վրէն, հոտը և համը տեսնելով, որ չափաւոր լինի, ապա յետ ձեռաց կամ ծնկան վերայ ծեծէ և ամանները լթնելուս քաղցրաւենու երիսին ևս ցանէ այս փոշուցը:

ՍՈՒՐՁՈՎ, (Խահվէ) •

107.

Առ չորս գաւաթ ջուր և դիր կրակին, երբ կսկսի եփիլ, լից մէջը երկու սեղանի դրդալով լեքը թազա բոհրած և ծեծած սուրջ, եփէ այնքան, մինչև մէկ գաւաթ պակսի, ապա ետ առ, թող որ պարզի. լաւ պարզելուց յետոյ բարակ կտաւով քամէ, այս պարզ ջուրն լից չափաւոր շաքարի վերայ, այսինքն ոչ քիչ լինի շաքարը և ոչ խիստ շատ, որ համը և հոտը չփչանայ. ապա կտրէ, քամէ, կրկին դիր կրակին, եփէ, մինչև հինգերորդ

թանձրաշափին գալը . սորտ մէջը լիմոնի ջռւր դնիլ չե
հարկաւոր, ապա ետ առ և իւր ժամանակին փայտով հա-
րելով պնդացրու և լից ամանների մէջ :

ԶՈԿՈՒԱԹԱՑՈՎ, (ՀՈԿՈՂԱԾ)

108.

Զոքողաթան ամեն երկրում կը ճարուի . առ այն չորս
լաթան , որի միջին լինի վանելիս , որ լաւ տեսակն է ,
վեց զրվանքայ շաքարի համար կոտորէ երկու հատ և
դիր մէկ փոքր սղնաձէ ամանի մէջ , դիր խիստ մարմանդ
կրակի վերայ , երբեմն երբեմն փայտէ զրդալով խառնէ ,
նա կսկսի ինքնիրան հալել . բայց այս դեռ չպատրաս-
տած , դու շաքարը կտրէ , քամէ ու հինգերորդ թանձ-
րաշափին բեր , ապա մէջը առանց լիմոնի ջռւր դնելու
ետ առ և այս միջոցիս սկսէ չոկողաթը հալեցնել որպէս
զի մինչեւ նրա հալելը շաքարի հարելու ժամանակն զայ ,
որ չոկողաթդ շատ չե չորսնայ հալած մնալով և սկսէ
պատրաստած շաքարդ ըստ ժամանակին փայտով հա-
րել . երբ որ թանձրութեան մօտեցաւ , այն ժամանակն
քիչ քիչ հալած չոկողաթդ լից մէջը անդադար խառ-
նելով և երբ կը պնդանայ , լից ամանների մէջ ու մի փո-
քոր չոկողաթ առ , ծեծէ բարակ և ցանէ երեսներուն :

ՈՐԴՈՆ ԿԱՐՄՐՈՎ, (ՊՈՒՇ) ՎԱՐԴԻ ԷԽԴԻ ՀՈՑՈՎ .

109.

Զորրորդ գլխումը չորրորդ թանձրաշափի վերայ

Ա. Հատուած 44 երեսումը ժիկյի քաղցրաւենիի մէջ
գրուած է, թէ ինչ եղանակաւ որդան կարմրի ջուրը առա-
նելուէ և որքան շաքարի համար ինչ չափ ծաղիկ հար-
կուոր է և ինչ եղանակաւ շաքարի հետ պէտք է կտրուի:
Այս ես միւնոյն տեսակաւն և չափովն շինէ, երկու երեք
անգամ լաւ բարակ ու թայ կըսաւով քամէ, որպէս զի
բնաւ մէջը ծաղիկի փոշին չի մնայ . ապա զիր կըակին
և եփէ մինչև հինգերորդ թանձրաչափին դալը ու մէջը
լիմոնի կամ լիմոնի աղ չի դրած՝ ետ առ և թող մինչ իւր
սառնութեանը հասնի և ապա փայտով հարէ . երբոր կըս-
կի թանձրութեան մօտենալ, այն ժամանակին թանձր
լիմոնի ջրիցը լից, (որ թանձր լիմոնի ջուրը շինելու ե-
ղանակն աևս 72 երեսը) այնքան, մինչև բաւականին
թթութիւն ունենայ . այս լիմոնը լցնելուս գոյնը կը-
բացուի ու աւելի կըլաւանայ և այս միջոցիս կաթեցրու
մէջը մէկ քանի կաթիլ վարդի իւղ ոչ շատ և ոչ քիչ,
ապա լից ամանների մէջ : Այս քաղցրաւենին վարդով
շինվածի նմանացնելու համար է աւելի, որ բացի քաղց-
րաւենիի նման ուտելու գրեծածուիլը, կարող ես ջրով
ևս հալեցնել և մէջն էլ լիմոն աւելցնել ու խմելու համար
օշարակ շինել, որոց գոյնն ես շատ զեղեցիկ կըլինի :



ԳԼՈՒԽ Զ.

ՇԱՔԱՐՈՎ, ԸՍՏ ԵԽՐՈՊԱՑԻՈՅ ԽԱՌՆ ԹԱՆՉՐԱԶԱՓՆԵՐՈՎ

ՆՈՐՈՒ ԾԽՐԱՆՈՎ, (Պայման)

110.

Առ շատ չհասած մեծ և լաւ տեսակիցը, խստակէ, կորիզները հանէ և դիր հողէ ամանի մէջ. ապա առ այն քան շաքար, մինչև ամանի մէջ եղեալ ծիրանները կարողանաս թրչել, այս շաքարը կտրէ, քամէ և եփէ, մինչև երկրորդ թանձրաչափին գալը • ապա ես առ փոքր սառչելուց յետոյ լից ծիրանի վերայ ու թող, որ մնայ 24 ժամ, ապա կրկին առ միայն օշարակը և դիր կրակին ու 10 կամ 12 րոպէ եփ տուր և կրկին լից պտղի վերայ. վեց օր ամէն 24 ժամին կրկին այսպէս և ամէն մէկ անգամին մէկ մէկ կտոր շաքար վրան աւելացուր և կամաց կամաց եփէ • յետոյ եփածը պէտք է գ. թանձրաչափիցը փոքր անցնի. այն ժամանակն լից պտուղները և թող որ մէկ քանի վարկեան շաքարովն եփի. միայն չվիճի, որ խառնես, որպէս զի պտուղները չեցրուին, ըստ որում խիստ կակղացած կը լինին. ապա երեք չորս անգամ եփելուց յետոյ ետ առ կրակիցն ու լից շուշէ կամ հողէ ամաններու մէջ ու բերանը բաց թող վեց օր, ապա ծածկէ բերանները բոլորակ թղթով, այնպէս, որ թուղթը օշարակի վերայ նստի, որպէս զի մէջի պտուղն երեսն չեղայ:

ԴԱՂՋՈՎ, (ՀԱՅԹԱԼԻ)

111.

Վերոգրեալ ծիրանովն տես, ինչ տեսակ որ գրեցինք. միւնոյն եղանակաւն ևս այս պէտք է շնես :

ԱՅՆԱ ՊԱԽԱՆ ԷՐԻԿԻ.

112,

Այս Այնապախան էրիկին մէկ տեսակ շլորէ, որ Կ. Պօլիս շատ կը ճարուի, մեծութեամբ խիստ մեծ ծիրանի և դեղձի նման է, Վրաստան կարելի է արմատացնել. առ այս տեսակէն ու շինէ, ինչպէս որ գրուածէ ծիրանի համար :

ՇԼՈՐՈՎ. (Ճան էրիկով).

113.

Այս ևս նոյն գոյնակ պէտք է շնուի :

ՄԵԾ ԵՒ ՀԱՍՏԱԾ ՆՈՐ ԼԻՄՈՆՈՎ.

114.

Լիմոնները առ և դիր սառը ջրի մէջ, թողոր մնայերկու օր, ապա հանէ սուր դանակով բարակ կճպէ. կը ճեպելուց յետոյ թէ կարես, վրան սիրուն նաշխէ, դըւխիցը փոքր բոլորակ կտրէ և մէջի եղեալ կորիզները հա-

նէ, գուրս բեր . ապա լաւ քամէ՛ և կրկին . լից սառը
 ջուրը, թող, որ երեք կամ չորս օր մնայ և ամեն օր ջուրը
 փոխէ, մինչև իւր թթուռ թիւնը . բոլորովին երթայ .
 ապա ըստ բաւականին ջուր եփ տուր, լից մէջը և խաշէ
 այնքան, մինչև օր լաւ փափկանայ, յետոյ հանէ և շարէ
 մինչև սառչելը . լաւ սառչելուց յետոյ կրկին լաւ քամէ
 ու շարէ հողէ ամսնի մէջ և առ տասնուշինդ լիմոնի
 համար հինդ զբանքայ, այսինքն 650 տրամ շաքար,
 եփէ մինչև երկրորդ թանձրաչափը ու թող, որ լաւ
 սառչի, ապա լից լիմոններու վերայ, թող մէկ քանի
 օր մնայ . մէկ քանի օրից յետոյ առ միայն օշարակը և
 մէկ կտոր շաքար աւելցրու մէջը ու եփ տուր, որ կրկին
 մինչև իւր երկրորդ թանձրաչափը դայ, ապա ետ առ կր
 րակիցը և սառչելուց յետոյ լից լիմոններու վերայ . այս
 պէս, քանի տեսնիս, որ օշարակը ջրուտելէ, այսինքն երկ
 րորդ թանձրաչափիցը պակասելէ, օշարակի վերայ փաքը
 կտոր շաքար աւելացնելով եփ տուր և բեր երկրորդ թանձ
 րաչափին, ապա ետ առ սառեցրու, լից վրան, մինչև որ
 լցրած թանձրաչափն իսկութեամբ մնայ . ապա վերջի
 անգամը օշարակը եփ տուր, լից լիմոնները մէջը, մէկ քա
 նի վարկեան եփ տուր ու ետ առ . նաեւ կամենաս կարող ես
 առանց լիմոնների օշարակը եփ տալ և պահել, այսպէս
 պատրաստելուց յետոյ լից ամանները, բերանները բու
 լորակ թղթով կապէ այնպէս, որ թուղթը օշարակի վերայ
 նստի, որպէս դի մէջի լիմոնները երեսը չի դայ:

ՓՈՐԹՈՔԱԼՈՎ, (ապելսին)

115.

**Ա'ռ լաւ մեծ փորթոքալները և շինէ ինչպէս վերը
լիմոնի համար գրեցինք:**

ՆԱՐԻՆՃՈՎ, (ՇՈՒՐԻՆՉ).

116.

**Ա'ռ լաւ ու քաղցր նարինճները և լիմոնի նման
շինէ:**

ՍԵՐԿԵՒԻԼՈՎ, (Կոմշի, Հայվա).

117.

**Ա'ռ լաւ հատուն սերկելիները, ստակէ ու զանազան
մեծ տեսակ ձեւերով կոտորէ, ածա սառը ջրի մէջ, դիր
մէկ մեծ ամանով ջուր կրակին, երբ որ ջուրդ կսկսի ե-
ռալ սերկելիներն սառը ջրեցը հանէ ու լից եփման ջու-
րի մէջն, հետեւ ես մէկ լիմոնի մէջտեղից կտրէ, ջուրը
քամէ վերան և լիմոնն էլ մէջը ձգէ: Երբ որ սերկելինե-
րը կսկսին կակլել, հանէ եփման ջրեցը ու ածա կրկին
սառը ջրի մէջ + երբ լաւ կըսառչի ու կսիպսականայ,
շարէ մաղի վերայ, որ ինքնինքեան վրայի եղած ջուրը
քամուի, ապա առ այնքան շաքար, մինչև կարովանայ լաւ
սերկելիներն իւր ամանի մէջ դնելու օշարակը երեսը
ծածկել, ապա շաքարը, ինչպէս խրատը գրուածէ հինգ-**

երորդ ելեսը, նոյն գոյնակ ձուռվլաւ պարզէ, քամի՛ ու
կրկն զիր կրակին, եփէ մինչև Բ. թանձրաչափին հասա
նիլը (1). ապա ետ առ փոքր ինչ սառչելուց յետոյ լից
սերկելիներու վերայ, մէկ հողէ ամանի մէջ, թող մնայ
24 ժամ՝ ու միայն օշարակը ածա պղնձի մէջ ու
դիր կրակին **10** կամ **12** անդամ եփէ ու կրկն լից
պտուղի վերայ, այսպէս վեց օր ամէն **24** ժամին մէկ
անգամ կրկնէ և ամէն մէկ անգամին մէկ կտոր շաքար
աւելցրու վերան, ըստ որում ամէն եփուելուն շաքարը
կրպակասի. բայց ամէն անգամ եփելիս մարմանդ կրա-
կով ծանր ծանր եփէ. վերջի անգամի եփ տուածիդ
թանձրաչափը պէտք է երրորդ թանձրաչափը լինի (2)
և կրակիցը վեր մի՛ առնիլ ու զգուշութեամբ նոյն սեր-
կելիները ածա մէջը, բերանը ծածկէ, թող մէկ քանի
վայրկեան իւր օշարակովն (սերոպ) եփի, այսինքն երեք
չորս անգամ եռայ. բայց այս միջոցիս չլինի, որ քափկի-
րով կամ ինչև իցէ բանով խառնես, որպէս զի պտուղները
չի ցրուին. ըստ որում խիստ կակլացած կրլինին, այս-
պէս երեք չորս անգամ եռ զալուց յետոյ վերցրու կր-
րակիցը ու լից ապակէ կամ հողէ ամաններու մէջ. բե-
րանը բաց թուղնելով վեց օր, յետոյ կոլով թղթով բերանը
ծածկէ, այնպէս, որ թուղթը օշարակի վերայ նստի, որ
մէջի պտուղն երեսն չի գայ :

(1) Բ. թանձրաչափի խրատը տես 12 երեսը:

(2) Գ. թանձրաչափի խրատը տես 12 երեսը:

ԿԱՆԱԶ ԸՆԿՈՑՁՈՎ, (ՃԵԿՈ, ԿԱԿԱՀ)։

118.

Յուլիս ամսոյ մէջ առ ընկոյզներն, որոնք իրանց կատարեալ մեծութեանը հասած կը ինին, բայց շատ հասած վայտի նման չլինին, սորանց ճանաչելու համար առ մէկ հաստ քորոց (թօվլու), եթէ կարաս հեշտութեամբ քորոցդ մէջը կոխել՝ գիտացիր, որ քաղցրաւենի եփելու համար են։ Այս ընկոյզներու ամէն կողմիցը հաստ քորոցով ծակոտէ ու ածա՛սառը ջրի մէջ և թող, որ մը նայ երկու ժամ, զինի երկու ժամից ջուրը փոխէ և լից նոր սառը ջուրը մէկ հողէ կամ ապակիէ ամանի մէջ և պտուղներն ածա մէջը, թող, որ թրջի մինչև չօրս օր և ամէն 24 ժամը մէկ անգամ ջուրը նորոգէ։ ապա պըտուղները նոր սառը ջրով հինգերորդ օրը լից պղնձի մէջ ու գիր կրակի վերայ, թող եփի այնքան, մինչև պըտուղները կակղանան, երբ որ տեսար պտուղների կակղութիւնը, քափկիրով հանէ և լից սառը ջրի մէջ, ու կրկին թող, որ մնայ երեք չորս օր, ամէն օր ջուրը փոխելով։ ապա հանէ պտուղներն ու շարէ մէկ յաղճպատկէ (սըռլը) մեծ ամանի մէջ։

Այս տեսակ քաղցրաւենին համար սովորաբար գործ կածուի հասարակ շաքար, կամ շաքարի երեսից քաշուած հաստ փրփուրը, որ կառնուի շաքար պարզեւուա, այս շաքարը կամ հասարակ փոշի շաքարը ջրով եփէ ու ապա նօսր կտաւից անցկացրու, յետոյ քաղցրաւենիի պղնձը լուա, ածա՛ մէջը շաքարը, գիր կրակին և եփէ

մինչեւ Բ. թանձրաչափն, ապա ետ առ և թող սառչի ու
լից պտուղների վերայ. բայց չինիոր օշարակի տաք ժա-
մանակը լքցնես պտուղների վերայ, վասն զի իսկօյն պը-
տուղների վրայի կեղեներն իւնէ, այլ թող Զ4 ժամ մնայ,
ապա միւս օրը միմեայն օշարակը (սերոսլը) ածա պը-
ղընձի մէջ, դիր կրակին և թող եփի առաջի ա-
ռուր եփուած թանձրաչափիցն աւելի թանձր ու ետ
առ կրակիցն. երբ կը սառչի, նորէն ածա պտուղների վե-
րայ. այս գործողութիւնը ու թը կամ ինն օր ամէն օր
արա, բայց ամէն անգամ օշարակը կրակի վերայ դնե-
րուս մէկ մէկ քիչ թանձրութեան չափոր աւելցնելու է,
նմանապէս մէկ մէկ փոքր շաքարի կտոր աւելցնելու է,
ու թերորդ կամ իններորդ աւուրի օշարակ թանձրաչա-
փըն պէտք է լինի երեք աստիճան թանձրաչափի .
պտուղները ինքնինքեան պէտք է թռչուին օշարակի մէ-
ջը. ու թերորդ օրը միխակները չորս չորս կտորատէ եր-
կայնութեամբ և նոյն ձեռվ ու չափով էլ դարչին կոտ-
րատէ ու ածա մէկ բաժակ (ստաքան, խատե՛ց) ջըի մէջ,
թող մնայ թռչուի Զ4 ժամ . իններորդ օրը ամէն
մէկ ընկուղի վերայ կոխէ չորս չորս տեղաց շորս կտոր
միխակ և չորս կտոր դարչին. ապա օշարակը միայն դիր
կրակի վերայ, եփէ, կրկին ետ առ կէսը սառչելուց ածա
պտուղներու վերայ. այս թռչոյն ևս թող մնայ Զ4 ժամ.
միւս օրը կրկին օշարակը դիր կրակի վերայ և երբ կսկսի
եռալ (եփիլ) պտուղները լից մէջը և եփէ մինչեւ
12 եփ տալու չափ. ապա վերցրու կրակիցը և շուշի (բո-
թիլ բուքալ) նման ամանները լաւ չորացրու և տա-
քացրու ու սկիզբը շարէ պտուղները իւր փրփուրովը
միջը, ապա օշարակը ածա վերան, այնպէս որ պտուղները

ծածկուին, երբ որ լաւ սառչի ամանները նոյն ժամանակը բերանները ծածկէ կամ կտաւով կամ թաց գաղաթով:

Այս տեսակ եփուած քաղցրաւենիքը շուտով կեզ փուին և երկու տարի էլ կըդիմանան, քանի որ մայութիւնայ իւր համի գեղեցկութիւնը կաւելանայ. բայց այսպէտք է գիտենալ, որ ժամանակ անցնելիս զկնի ընթացանի ները կըծծեն շաքարը, նորա համար պէտք է, որ մանիք քանայ օշարակը, հարկաւոր է մէկ մէկ քիչ օշարակը աւելցնել վրէն :



Ա. ՀԱՏՈՒԱԾ

Թակուտ այս մեր հետագայ քաղցրաւենիքը ալաղի ողիով են շինուած, որի համար կարելի է համարուել թէ քաղցրաւենի չեն, միայն որովհետեւ պտուղներով և պտուղի ջրերով են շինուած, և միշտ քաղցր պահպան կամարեցանք՝ ի շարս քաղցրաւենեաց գրել:

ԴԵՂՁՈՎ. (ՀԵՂՁՄԱԼԻ).

119.

**ԱՌ Կիսահաս լաւ դեղձը և փափուկ վրձինով (չոտք,
ֆռչայ) նորա վերայ ունեցած մազերը (թիւյը) շիէ ,
ապա սրբէ մէկ սպիտակ բարակ կտաւով և երկայնուշ
թեամբ ճղքէ սուր գանակով խոր , մինչև կորիզը հասա
նիլը , որպէս զի օշարակը (սերոալ) մինչև նեքսել գնայ .
ապա պարզէ ըստ բաւականին շաքար , քամէ' դիր կը-
րակին , եփէ մինչև թ . թանձրա չափին հասնիլը (1) , յեւ
տոյ պղինձը կրակիցը վեր չառած՝ պատրաստած սլը-
տուղները լից մէջը և անդադար քափքիրով խառնէ , որ-
պէս զի տաքութիւնը ամէն կողմից նեքսել ներդորձէ ,
երբ կըտեսնիս , թէ պտուղները փափկացելեն , կրակիցը ետ
առ և մաղի վերայ շարէ , որ վրայի օշարակը քամուի .
դեղձերը շարէ հողէ կամ սպակէ ամառնի մէջ . իսկ այն
քամուած օշարակը միայն կրկին դիր կրակին և տես ,
եթէ պղտոր երևի . կրկին ձուի սպիտակով պարզէ , (կըտ-
ըէ) քամէ ու կրկին դիր կրակին , մէկ քանի անդամեփէ ու
վերցրու կրակիցը և տաք տաք ածած դեղձերի վերայ ,
թող մնայ 24 ժամ . յետոյ կրկին օշարակի մէջիցն
հանիր դեղձերը , օշարակն ածած պղնձի մէջ . դիր կը-
րակին , նորէն ութ տասը անդամ եփ տուր և կրկին տաք
տաք ածած դեղձերի վերայ , թող նոյնպէս մնայ 24 ժամ .**

(1) Բ. թանձրաչափի իրաւուց տես : 2 երեսը :

Երբորդ օրը պառւղը և օշարակը զգուշութեամբ ածա՛ պը-
զինձը և 'ի միասին դիր կրակին, բերանը ծածկէ ու շորս
հինգ անգամ եփ տուր ու ետ առ կրակիցը, թող կիսա-
չափ սառչի . յետոյ դեղձերը մէկ մէկ հանէ, լայնաբե-
րսն բութիլի նման երկար ամանի մէջ շարէ և այն ա-
մանը որքան որ օշարակ պէտք է տանի, օշարակի կէս
բաժինն լաւ բարկ (թունտ) արաղի ողի (խսպիոթ)
խառնէ, օշարակի հետ 'ի միասին լաւ հարէ և լից դեղ-
ձերի վերան: Այսպէս ամանի մէջ մէկ երկու ամիս դեղ-
ձերն օշարակի երեսը կը մնայ, բայց քանի անցկենայ, մը-
նալով ներքեւ կերթան, ըստ որում դեղձերը կը ծծեն օ-
շարակը:

ԾԻՐԱՆՈՎԱ ԱՐԱՂ.

120.

Ծիրանը, որչափ կամենաս առ, որբէ բարակ կտա-
ւով, որ վրայի մազը երթայ, ածա՛ եփման ջրի մէջ, կը-
տեսնես, որ սկիզբը ծիրանները ներքեւ կդնան, բայց
փոքր ժամանակ մնալուց յետոյ երեսը կելնեն, այն ժա-
մանակն ետ առ պղինձը, շուտով ծիրանները հանէ և մէկ
սպիտակ մաքուր կտաւի վերայ շարէ, կամ աւելի լաւը,
սառը ջրի մէջ ածա՛, որ այսպիսութիւնով ծիրանները
կըսպիտակին. ապա լից առաջուց պատրաստած օշարա-
կի մէջ և մնացեալն արա ըստ օրինակի վերոյ զրեալ դեղ-
ձին :

ՏԱՆՉՈՎ.

191.

Պատուական հոտով տանձերը ընտրեց, որ բոլորովին հասած չլինին, քորոշով ամէն կողմիցը ծակծակէ, լից եփման ջրի մէջ և միշտ տես, որ փափկացածները հանես ու ածես սառը ջրի մէջ. ապա կճպէ և ածած ուրիշ սառը ջրի մէջ և այն ջրի վերայ սղմէ երկութթու լիմոն, որպէս զի տանձերը սպիտականան, ապա ըստ բաւականին շաքար պարզէ ձուով, քամէ և գիր կը բակին . երբ որ Բ. թանձրաշափին (1) հասնի, տանձերը լից մէջը, բերանը ծածկէ և եփէ ոչ աւելի քան հօթը անդամ, ապա ետ առ կրակիցն ու ամենը՝ ի միասին ածակողէ կամ ապակին ամանի մէջ, թող մնայ Զ4 ժամ: Եետոյ առ միայն օշարակը (սերոսը) ու ածակողն մէջ և գիր կրակին, թող եփի 12 անդամ և լից այնպէս տաք տաք տանձերի վերայ և թող որ կրկին Զ4 ժամ մնայ, երբորդ օրը կրկին միայն օշարակը գիր կրակին ու երբ վեց եօթն անդամ եռաց, ամանձերը զգուշութեամբ լից մէջը, եփէ՝ ի միասին, մինչև վեց եփի չափ և ոչ աւելի: Վելցնելուց յետոյ երեսին եթէ բռնած վրդիուր կամ քափ լինի: զգուշութեամբ քաշէ և թող կիսով չափ սառչէ: Ապա հանէ տանձերը, կարգաւ շարէ մէկ բութութեամբ կայի նման ամանի մէջ և մնացեալ օշարակի համահաւասարութեամբը խառնէ հետո լաւ բարկ արագի ողի:

(1) Բ. թանձրաշափի խրառը տես 12 երեսը:

(հսովիով) . յետոյ հարելով երկուսն ՚ի միասին ածա
տանձերի վերայ և բերանը լաւ ամրացրու ու երկու ամ-
սից յետոյ սկսէ գործածել :

ԿԵՌԱՍՈՎ . (բալե) .

122.

Ընտրէ լաւ կեռասները, կոթերի կիսից կտրէ, ա-
ծա սառը ջրի մէջ, կէս ժամից յետոյ հանէ, մաղի վե-
րայ քամէ' և օդակը չափար պարզէ, քամէ', դիր
կրակին, կեռասները մէջն ածա բերանը ծածկէ ու մէկ
չորս հինգ անգամի չափ թող եփ գայ, ապա ետ առ կը-
րակիցը, երեսի բռնած փրփուրը քաշէ և միայն պտուղ-
ներն ածա հողէ ամանի մէջ, թող մնայ առանց օշա-
րակի 24 ժամ, իսկ օշարակը թող մնայ առանց պտղոյ
պղնձեսյ ամանի մէջ. ապա կրկին դիր օշարակը կրակի
վերայ, թող եօթն ուժն անգամ եռայ, յետոյ լից
պտուղների վերայ, երրորդ օրը պտուղը և օշարակը՝ ի
միասին ածա պղնձի մէջ, դիր կրակին և եփէ մինչև տա-
սըն անգամ բերանը ծածկած, յետոյ կրակիցը վեր կալ
երեսի ունեցած փրփուրը կամ քափը առ, թող որ կիսով
չափսառչի, ապա պտուղները ածա շիշի (բութիլ բուլքալ)
մէջ ու օշարակի համահաւասարութեամբն լաւ բարկ
(թռւնտ) արաղի ողի (իսպիոթ) ածա ու հետը լաւ
հարէ և լից պտուղների վերայ և ամէն մէկ շիշի համար
առ 12 հատ մեխակ, եօթը մսխալ (երեք տրամ) կինաւ-
ման (տառչին), պատատէ մէկ սպիտակ մաքուր կատարի
մէջ, թելով կապէ, դիր շիշի մէջ, թող որ մնայ երկու

ամիս . ապա հանէ պտուղեցը ու համը տես , եթէ պաշ
հարի հոտը բաւականին ազգելէ , մէջիցը հանէ , եթէ
ոչ կրկին թողլ մնայ :

ՄՈՐԻ , (պէօյիւրթեն) .

123.

ԱՌԵԲԻ ՀՅԱՍՏԱՑՆԵՐԸ ա՛ռ և կեռասի նմանութեամ-
բլն 'ի գործ դիր միայն առանց մէջը հոտ գնելու :

ՀԱՂԱՐՃ , (սմարօտնի , ֆաէնկ իւղեւմի) .

124.

ԱՌԵՋ ՀԱՂԱՐՃՆԵՐԸ ևս լաւ հատ հատ արա՛ և կե-
ռասի նման 'ի գործ դիր միայն առանց հոտ տալու :

ԴԱՄ ԱՍԿՈՍԻ ԽԱՂՈՂ , ԿԱՐ ՄԱՇԿԱՄԻՐԻ (Շամիւղեւմի ,
կրուժովնիկ) .

125.

ԴԻԱՄԱՍԿՈՍԻ ԽԱՂՈՂՆԵՐՆ ընտրէ , լուա և 'ի գործ դիր
միւնոյն կեռասի նման , միայն առանց համեմեղէնով հոտ
տալու :

ԱԶՈԽՈՎ. (ԺՈՒՌՆ. ՊԾՆ. ՊԵՂ.)

126.

ԺՈՒՌՆ ընտրէ միայն լաւերը . որ ճղլտած չլինին .
լից եռ ջրի մէջ , սկզբումը ջրի տակը կիշնի ու ապա
շուտով երեսը կելնէ , երբ մէկ քանիսը կսկսէ երեսը
ելնել , իսկոյն կրակիցը վեր առ ու ջրի երեսը ելածը քափա-
քիրով հանէ , ածա սառը ջրի մէջ , ապա ըստ բաւա-
կանին շաքար առ , ձուռով պարզէ և քամէ կրկին դիր կը-
րակին եփէ մինչեւ Ա . թանձրաչափիցն աւելի . ապա ա-
զոնը հանէ ջրիցը , որ սկզբում հանած և մաղի վերայ
լքցրած պիտի ունենաս . լից շաքարի մէջ բերանը ծածկէ
ու մէկ չորս անգամ եփ տուր , ապա ետ առ ու ազոնը
հանէ , ածա հողէ ամանի մէջ . օշարակը մնայ թողլ պը-
ղնձի մէջ . **Զ4** ժամից յետոյ օշարակը միայն դիր կը-
րակի վերայ , թողլոր եօթը ու թը անգամ եռայ , ապա
ածա ազոնի վերայ , թողլ կրկին մնայ **Զ4** ժամ . երրորդ
օրը զգուշութեամբ երկուսն 'ի միասին ածա պղնձի մէջ ,
դիր կրակին , եփէ բերանը ծածկած , մինչեւ տասն ան-
գամ կրակիցը վեր կալ և երեսի ունեցած փրփուրը կամ
քափը առ . զգուշութեամբ և թողլ որ կիսաչափ սառչի .
ապա պտուղները հանէ , ածա շիշէ մէջ և օշարակի հա-
մաշաւասարութեամբն լաւ արազի ողի ածա մէջը . լաւ
խառնելով հարէ , որ հաւասարուին . ապա լից շիշէ մէջը .
մինչեւ բերանը . եթէ կամենաս կեռասի մէջ դրուած հո-
տի նման հոտ տալ կարող ես . երկու ամիս անցնի , յետոյ
կարող ես շիշէ բերանը բանալ և 'ի գործ ածիլ :

ՆԱՐԻՆՃՈՎ, (ԵռուրինՃ) .

197.

Կարինճը մզէ, ջուրը հանէ և սպիտակներն ես դաշնակով վերցրու, իսկ զեղին կեղեները ածա եռացած ջրի մէջ, երբ սկսի կակղանալ, հանէ պղնձի միջեցը լից սառը ջրի մէջ, գիր մաղի վերայ, որ ինքնիրան ջուրը քամուի, ապա օգտելու չափ շաքար պարզէ ձուռվ քամէ ու նորէն դիր կրակին եփէ, մինչեւ թ. թանձրացափը և կրակիցը վեր չառած, լից մէջ նարինճի կեղենները, խառնէ անդադար, որ օշարակը կեղեների մէջը մտնի, երբ կրտեսնես, որ կեղեները ծծեցին և փափկացան, պղինձը կրակիցը վեր կալու մաղի վերայ շարէ, որ քամուի օշարակը, յետոյ միայն օշարակը կրկին դիր կրակին, երեք չորս վայրկեան եփէ ու կեղեները ածա մէկ հողէ ամանի մէջ և օշարակը տաք տաք ածա վերան, թողնոյնալիս 24 ժամ. ապա կրկնէ այս գործողութիւնը, թողնոյնալիս 24 ժամ. բայց երրորդ անդամին կեղեր և օշարակը 'ի միասին դիր կրակին եփէ, բերանը ծածկած չորս հինգ վարկեան. ապա ետ առ և կիսաչափ սառնացրու, հանէ կեղենները շարէ շիշի նման մէկ ամանի մէջ և օշարակի համահաւասար չափովն լից լու արաղի ողի, խառնէ մէկմէկու հետ և ածա կեղեների վերայ:

ՓՈՐԹՈՒՔԱԼԻ (ապելսին) ԿԵՂԵՒՌՈՎ.

128

Պէտք է առնել միևնոյն կերպիւ , ինչպէս նարինձն .
բայց այս պէտք է զիտենալ , որ կեղեները կտրատողին
կամացն է կախեալ . ինչձև որ կամենայ , կարողէ թէ փոր-
թոքալինը և թէ նարինձինը , միայն աւելի լաւէ մե-
ծագոյն կտրատել :

ԼԻՄՈՆԻ , ՆԱՐԻՆՁԻ ԵՒ ՓՈՐԹՈՒՔԱԼԻ ԿԵՂԵՒՆԵՐՈՎՆ
ԽԱՌՆ .

129.

Առանձին լիմոնի կեղեռվ շինելը շատ ախորժելի
չլինելու համար , նարինձի և փորթոքալի կեղեները ի
միասին խառն զրեցինք , որ պէտք է ըստ վերոյ զրելցն
ընտրել , կտրաելև ՚ի գործ դնել միևնոյն նարինձի եղա-
նակաւն :

ԸՆԿՈՑՉՈՎ , (ՃԷՆԿՕ , ՃԷՎԼԻՎ) .

150.

Լաւ կանաչ կիսահաս ընկոյզները , որի մէջ քորոցը
կոխելուս կմտնի , ընտրէ մինչեւ սպիտակը . ածա սա-
ռը ջրի մէջ , զիր կրակի վերայ , որի մէջ պէտք է լինի

մէկ փոքր կտոր շիպ և փոքր լիմոնի ջուր, որպէս զի չը-
սեանայ, երբ բաւականին խաշուի, ածա սառը ջրի մէջ,
և առ երկրորդ թանձրաչափի վերայ առաջուց բաւակա-
նին եփուած շոքարը, ածա ընկոյզների վերայ, թող
մնայ 24 ժամ՝ միւս օրը միայն օշարակը կրկին դեր
կրակին, եփէ մէկ քանի անգամ ու կրկին ածա վերան,
ոյս գործողութիւնը արա երեք օր, չորրորդ օրը օշա-
րակը կրկին եփ տուր, ընկոյզներն ածա մէջը, մէկ երկու
վարկեան մնալուց յետոյ վեր առ, ընկոյզներն ածա բե-
րանը փոքր լայն շիշի մէջ և օշարակի վերայ աւելց-
րու իւր չափիցն երկու անգամ աւելի արաղի ողի, քա-
մէ կտաւով և ածա ընկոյզների վերայ շիշի մէջը:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.

Քաղցրաւենի շինելու համար շատ քիչ պտուղ կան,
որ կարելի կլինի շինել ոգիով, միայն այս տեսակը փոքր
ինչ ժար լինելով՝ սոյանից աւելի հեշտերն են դեղձով.
Տիրանով, տանձով, նարինձով և ապելսինի ու լիմոնի կր-
ճեպներովը, որ ամէն մարդ կարող է շինել և Այս ոգիով
եփուածները երկու տեսակ՝ ի գործ կածուին: Ա. որ օ-
շարակի մէջ գտնուած միրքերը զանազան քաղցրաւե-
նեաց նման լաւ կուտավին: Բ. իւր ունեցած օշարակը
կարելի է ոգիի տեղ՝ ի գործ ածել և խմել, թէև չէ կա-
բելի և կոռի (իկ, իրի) նման լինիլ, բայց հասարակ
արաղից լաւ կլինի:

Այս ևս արժան համարիմ ասել, որ քաղցրաւենեաց
չափի որքանութիւնը չդրելու պատճառն այնէ, որ չափ
չէ կարելի գնել, այլ այնքան օշարակ պէտք է լինի, որ

իւր մէջի ունեցած պտղել երեսը լաւ ծածկէ, որպէս զե
պտուղները լաւ շաքարով թրչուին, բայց օշարակը սկըզ-
բումը պէտք է Բ. թանձրաշափոմն եփել, ապա երրորդ
թանձրաշափին հասցնել:



Բ. ՀԱՏՈՒԱԾ

Նետադայ գրելիքներն եւս 'ի շարս քաղցրաւենեաց
համարեցաք, ըստ որում պտուղներու ջոերովը և ծա-
ղիկներու նիւթերովն են շինուում և իւրեանց բնական
յատկութիւնները պահելու են:

ՀԱՂԱՐՁԻ, (սմարոտինի, Ֆռէնկ իւզիւմի).

151.

Առ երկու բաժին ընտրած և կարմիր հաղարձու-
դիր արծաթեայ ամանով կրակի վերայ, թող մինչեւ շո-
ղին (պուղն) դուս գայ, ապա ետ առ, ածա մաղի մէջ,
սղմէ, որ կեղեները միայն մնան, ներքելի նիւթը առ,
նորէն դիր կրակի վերայ և խառնէ անդադար, մինչեւ
ըստ բաւականին չորանայ, երբ սկսի ամանի ներա-
քեն երեխի, ապա առ երեք բաժին շաքար, հալեցրու և
եփէ, մինչեւ հինգերորդ թանձրաշափն, շաքարը ածա
հաղարձի ջրի վերայ և խառնէ փայտէ դրդալով, մինչեւ
որ ուռչէ, այն ժամանակ լից թղթերից շինուած քա-
ռանկիւնի արկղեկների (եաշչիկ) մէջ, որ սկիզբեցը շինած
և պատրաստած պէտք է ունենաս:

ՄՈՐԻ (պէսիւրթլէն) ԵՒ ՀԱՂԱՐՁՈ (սմարօանի) ԿՐԱՐ
ՀԵՏ ԽԱՌՆ.

152.

Առ մէկ բաժին մորի և չորս բաժնի մինն հաշարձ, ճմլէ, բարակ մաղեց անց կացրու, նիւթը դիր մարմանդ կրակի վերայ, չորաշրու, մինչև կիսիցը քիչ մնայ, նոյն չափ ևս շաքար եփէ, մինչև հինգերորդ թանձրաչափը (1), փայտով հարէ, մինչև սպիտականայ. ապա խառնէ մէջը պտղի թանձր եփած ջուրը, այնքան, որ լաւ միաւորի ու ածաթղթէ շինուած քառանկիւնի արկղների մէջ:

ՀՈՐՍ ՊՃՂԻՑ ԲԱՂԱԴՐԵԱԼ.

155.

Առ մէկ բաժին հաղարձ, մէկ բաժին ելակ, մէկ բաժին կեռաս և մէկ բաժին մորի, սղմե ու լից բարակ մազղի վերայ, լաւ ճմլէ, նիւթը առ մէկ ամանով և դիր փոքր կրակի վերայ, անդադար խառնէ փայտէ դրդալով մինչև կիսիցը քիչ մնայ ու թանձրանայ. այն ժամանակը շաքարը եփէ, մինչև հինգերորդ թանձրաչափը, ապա ևս պտուղի ջուրն ածաթղթէ շաքարի վերայ, կրակիցը շվերցրած և թող մինչև մէկ անգամ եփի. ապա խառնէ, մինչև որ շաքարը ուռչի և լից քառանկիւնի թղթէ արակղների մէջ:

(1) Հինգերորդ թանձրաչափի իրատը տես 43 երեսը:

Զ Ա Գ Ո Ւ Ա Թ Ա Ց Ո Վ Ա .

154.

Չոքոլաթան յղկէ (ռանդել) և քիչ օշարակով մարսանդ կրակի վերայ հալցրու և մի բաժնի համար չորս բաժին շաքար եփէ, մինչև հինգերորդ թանձրաչափուազապա չոքոլաթան ածա մէջը, խառնէ այնքան, որ միաւորի, յետոյ ետան կրակիցը և ածա քառանկիւնի թղթէ արկղների մէջ :

ԿԵՌԱՍՈՎ (բալե) .

155.

Ա'ռ մէկ բաժին կեռաս առանց կորիզի (կուտ) և մէկ բաժնի չորրորդ մասը հաղարձ, հատ հատ եղած, լից մէկ արծաթեայ ամանի մէջ, դիր չափաւոր կրակի վերայ, եփէ խառնելով, մինչև չորրորդ մասը մնայ. ապա մէկուկէս բաժին շաքար եփէ, մինչև հինգերորդ թանձրաչափիցը շատ աւելի, համարեա թէ վեցերորդ. պըտուղները ածա մէջը և խառնէ, մինչև սկսին ուռչիլ ապա ածա քառանկիւնի թղթէ արկղների մէջ :

Տ Ե Պ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն .

Այս Բ. հատուածով գրուածները մի փոքր դժար կշինուին, ուստի քիչ տեսակ գրեցինք, այլ եթէ իսկապէս ասենք, այս շաքարեղէնները աւելի պօմադա քաղցրաւենեացը կը համեմատին, որ թղթի արկղներից հանելուց յետոյ իսկ և իսկ նմանումէ պօմադային, ունելով նորա կերպն և համը: Այս է պատճառն, որ այս տեսակները 'ի շարս քաղցրաւենեաց նշանակեցինք :



ԳԼՈՒԽ Ե.

ՄԵՂՋՈՎ, ՔԱՂՑՐԱԽԵՆԻՔ, ՈՐ ԵՒ ԿՈՉԻ (ԲԷՇԵԼ)։

ՎԱՐԴՈՎ, ՔԱՂՑՐԱԽԵՆԻՔ։

156.

Վարդը խոր կտրէ, որ տերևների ծայրի սպիտակն ընաւ չի մնայ. ապա մեծ ծակաւոր մաղով մաղէ, կշռէ և մէկ բաժնի համար երկու բաժին մեղք կտրէ (1), ջուրը աւելի լինի մեղքի. որ վարդերը մէջը եփի դիւշ ըութեամբ և եթէ մեղքն անսախարժ հոտ ունի (2), հոտն առ, վարդերը լից մեղքի մէջ ու եփէ, մինչև վարդը լաւ եփի և պնդանայ և երկրորդ թանձրաշափին հասնի: Կան և ոմանք, որ այս վարդով քաղցրաւենու մէջ ծեծած մեխակ կդնեն, որ կախեալէ եփողի կամացը: Եթէ կամենաս աւելի սիրուն գոյն ունենայ, կարող ես հինգ դըր ուանքայ վարդը երեք կամ չորս լիմանի ջրով լաւ ճըմակը լժողնել կէս ժամ: ապա եփել:

(1) Մեղք կտրելու կերպը տես 6 երեսը:

(2) Մեղքի հոտ առնելու կերպը տես 7 երեսը:

ԲԱԼՈՎ. (Փեշնէ).

157.

Բալի կորեները չպէտք է հանել միայն կոթերը
հանէ , լուս , կշռէ , մէկ բաժնի համար մէկ բաժնն
կամ փոքր աւելի մեղք առ կարէ , քամէ և եթէ լաւ մե-
զըր չէ , հոտը առ եփէ մինչև երկրորդ թանձրաչափը .
ապա լից մէջը ու եփէ , մինչև երրորդ թանձրաչափը .
և լից ամանների մէջ :

ԺՄՆՈՎ. (աղոխ , զօռուխ).

158.

Միենյն բալի եղանակաւն պէտք է եփած :

ԲԱԼ ԵՒ ԱԶՈԽ ԽՍՈՒՆ .

159.

Բալն եփէ սկիզբը ինչո՞ս գրուածէ , ապա ազո-
խի ժամանակն միենյն կերպիւն ազոխն ևս եփէ և երը
կհասնի երրորդ թանձրաչափին , միենյն չոփովն սկիզ-
բը եփուած բալի քաղցրաւենին լից վրէն ու թող որ՚ի
միասին մէկ երկու անդամ եփին և տես , եթէ հասածէ
երրորդ թանձրաչափին , ետ առ կրակիցը և ածա աման-
ները . այս տեսակը աւելի համեզ կլինի քան թէ ջոկ
եփուածները :

ՓՈՐԹՈՒԹԱԼԻ ԿԵՂԵՒՈՎ.

140.

Փորթոքալի կՃեպն կոտորէ երկար ու բարակ , կամ
ուրիշ ինչ ձևեր որ կամիս , կշռէ , խաշէ , ապա մէկ բաժ-
նի համար երկու և կէս բաժին մեղք կտրէ . հոտը առ .
լից մէջը 'ի միասին եփէ , մինչև երրորդ թանձրա-
չափը կամքիչ պակաս :

ՆԱՐԻՆՅԱՆ (Թուրինճ) ԿԵՂԵՒՈՎ.

141.

Այս ևս միևնոյն վերոյ զրեալ փորթոքալի եղանա-
կաւն ջըով խաշէ և մեղքով եփէ :

Խ Ն Զ Ո Ր Ո Վ .

142.

Խնձորը կՃպէ . մէջը փորէ , կշռէ ու խաշէ և մէկուկէս
բաժին մեղք կտրէ , Ա . թանձրաչափին բեր և լից մէ-
ջը եփէ . եթէ շատ մանր խնձորով շինես , կարող ես ողջ
ողջ շինել և կոթերի կէսիցը վրէն թողնել , մինչեւ Բ .
թանձրաչափը :

ՀՈՆՈՎ . (ՊՊԾՂ .)

143.

Կորիզները չհանած լուակշռէ և մէկ բաժնի հա-

մար մէկուկէս բաժին մեղը կտրէ և եփէ մինչեւ երկւ
ըորդ թանձրաչափիը . ապա լից մէջը և եփէ մինչեւ եր-
ըորդ թանձրաչափիը :

Դ Դ Ա Ւ Ո Վ .

144.

Ամէն տեսակ դդումից չի լինիլ այլ մէկ տեսակ ձը-
մերուկի նման սպիտակ դդումկայ, որ Կ. Պօլիս (Հելլանակ-
քապաղը) կանուանեն . առ այդ դդումիցը, խոր կճպէ ինչ
ձեւ կամիս, կոտորէ, կշռէ, զիր կրաջըի մէջ **12** ժամ,
ապա լուա խաշէ և մէկ բաժնի համար մէկ բաժին
մեղը հալեցրու, քամէ՛, լից դդումը մէջը և եփէ մինչեւ
երկրորդ թանձրաչափիը:

ԶՄԵՐՈՒԿԻ ԿԵՂԵՒՈՎ .

145.

Զմերուկի կեղեռվն ևս վերոյ գրեալ եղանակաւն կը-
լինի, միայն սորա մեղըն կտրելուէ:

Ս Ե Բ Կ Ե Խ Ի Լ Ո Վ .

146.

Աերկեիլն լուա և առանց կճպելու մը ջակ հաս-
տութեամբ տիլիմ արա և կշռէ, քիչ խաշէ փոքր ինչ
ջոռվ. մէկ բաժնի համար մէկուկէս բաժին մեղը կտրէ
և եփէ մինչեւ երրորդ թանձրաչափին հասնիլը . ապա
ետ առ, սերկեիլը լից մէջը և սերկեիլի խաշած ջուրը
ևս հետն եփէ մինչեւ երրորդ թանձրաչափին հասնիլը:

ՍԱՆՏՐՈՒԿ ԿԱՄ ՄՆՏՐԻԿ (սվենարի, կրմղուկ) ԱՐՄԱՏՈՎ.

147.

Ա՛ռ սիւնտրի արմատները, բայց աւելի մեծացած
և հնացած չլինի, որ փայտի նման լինի . այս արմատա-
ների վրեցը լաւ քերէ դանակով և ածան սառը ջուրը,
թող մնայ երկու ժամ. ապա հանէ այն ջրեցը, ուրիշ
ջրի մէջ ածան և թող մնայ Զ4 ժամ. միւս օրը ջուրը
փոխէ ու մէկ անդամ սառը ջրով լուռած և նորէն ջուր ա-
ծան վրէն, թող մնայ կրկին Զ4 ժամ. այսպէս ութ օր
ջուրը փոխէ, որպէս զի իւր բնական դառնութիւնը երա-
թայ. ապա իններորդ օրը մեղրաջուր շինէ, բայց ոչ ա-
ւելի քաղցր ու խաշէ մեղրաջրովը մինչեւ բաւականին
փափկանալը, ապա հանէ, ածան վլաւքամիչի մէջը և
մէկ բաժնի համար մէկուկէս բաժին մեղը առ, մաքրէ
մեղըն և ածան մեղըի մէջ ու եփէ մինչեւ երրորդ թանձ-
րաչափը: Այս կարող ես սոյնդունակ շաքարով շինել:

ԶՈՐ ԾԻՐԱՆՈՎ. (Պայտի).

148.

Թռչէ ծիրանը մէկ քանի ժամ և մէկ բաժնի հա-
մար մէկ բաժնից փոքր աւելի մեղը կտրէ, եփէ մինչեւ
երկրորդ թանձրաչափին և լից ծիրանի մէջը ու կամաց
կրակի վերայ եփէ մինչեւ երրորդ թանձրաչափը:

ԶԱՄ ԶՈՎ, (Ժանր չոր խաղող)։

149.

Ինչպէս որ զրեցինք վերը ծիրանի համար, նյոնդռւնակ ևս այս շինէ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.

Այս մեղքով քաղցրաւենիքը շատ սեղ հացով կռւնեն, վասնորոյ կարողես սմանց միջի կեղեք հանած և կարմրացած նուշլցնել, զինի եփելուդ կարող ես նաև սմանց մեխակ գործածել ողջ ողջ:

ԶՈՐ ՏԱՄԱՍԽԵԲՈՎ, (դամբիլ)։

150.

ԱՌ ՀՈՐ Մամասիները և սառը ջրով լուա, միկ քառի ժամամամ սառը ջրում թրչէ, մնացեալն արա ծիրանի նըւման :

ՍԵԱԿ ՇԼՈՐՈՎ, (ամասիա երիկի)

151.

Այս շլորները առ, լուա, կշռէ և մէկ բաժնի համար մէկեկէս բաժին մեղք առ, լաւ կտրէ և եթէ հոտ ունի, հոտը առ, լաւ քամէ, նորէն դիր կըակին, եփէ մինչեւ երկրորդ թանձրաչափին դալը . ապա ետ առ և սառչեւ լուց յետոյ շլորներն լից մէջը ու եփէ մինչեւ երրորդ թանձրաչափին դալը :

-♦♦♦♦♦♦♦♦♦♦♦♦♦-

ՀԱՏՈՒԱԾ

ՄԵԴՐՈՎ ԺԻԼԵՑԻ ԿԱՄ ԼՈՂԱՊ ԲԱԼՈՎ . (Քիշնէ) .

152.

Շաքարով ժիլեյի շինել չկամեցողը կարողէ յետագայ օրինակներով մէկ քանի տեսակ արժանագին միրագերի ջրերովն ժիլեյի շինել : Արժանագին միրզերի ջըրերով վասն զի լաւ յարգի և թանկագին միրզերու ջըրերով շինելը շաքարին միայն կյարմարի , բայց կամեցողը կարողէ միևնոյն բոլոր պտուղներու ջրերովն շենել , ինչոր գրուածէ դո . գլխում ժիլեյի համար :

Բայն լուա , կոթերը հանէ , ճմշէ , որ բնաւ պտուղ ըլմնայ , լից մէկ կտաւի մէջ , քամէ , ջուրը առ , կրկին ևս քամէ , ածա ամանների մէջ , թող տիրդը նստի , ապա ջրի չափար տեսնելով՝ մէկ բաժին ջրի համար մէկուկէս կամ եթէ շատ թթուէ երկու բաժին մեղք առ , մեղքն մոխրով պարզէ (1) , լաւ քամէ , կրկին դիր կրակին , եփէ մինչեւ երրորդ թանձրաչափն (2) . ապա ետ առ , թող սառչի , սառչելուց յետոյ ածա բալի ջուրը այնպէս , որ տիրդը հետը չգնայ , ապա դիր կրակին , եփէ , անդադար երեսին եկած հաստ քափը առնելով . երբ կակսի եփիլ համը տես , որ քաղցր չլինի աւելի . եւ

(1) Մեղրի պարզելու խրատը տես 5 երեսը :

(2) Երրորդ թանձրաչափի խրառը տես 12 երեսը :

թէ քաղցր լինի, կրկին բալի ջուր ածա, եթէ պատրաստի չունես, լիմոնի ջուր կամ լիմոնի աղ ածա. այսպէս եփէ մինչև չորրորդ թանձրաշափին հասնիլը, որ մեղրով շինուած լինելու համար թէե չորրորդ թանձրաշափիցը քիչ էլ անցկենայ, վնաս չունի. ապա ետ առ, լից ամանների մէջ որ եթէ մեծ ևս լինի, վնաս չունի:

ՀՈՒԽ (ՊՊՁՂ) ԶՐՈՎ.

153.

ԱՌ շատ չհասած հոնը, լուա, վրէն փոքր ջուր ածա, գիր կրակին, անդադար ճնշելով խառնէ ու խաշէ. մինչև իւր նիւթը լաւ դուրս տայ: Ապա ետ առ, երկու անգամ քամէ, թող պարզի և տիրլը տակը նստի, յետոյ ըստ վերոյգրելցն մեղլն պարզէ, քամէ և կրկին գիր կրակին, եփէ մինչև երրորդ թանձրաշափը: Սառչելուց յետոյ հոնի ջուրն ածա, գիր կրակին եփի, միայն եռալուս համը տես և չափաւորէ, որ աւելի թթուագոյն լինի քան թէ քաղցր. երեսի եկած հաստ քաշին ևս անդադար առ և եփէ, մինչև չորրորդ թանձրաշափը կամ փոքր ևս աւելի և ապա լից ամանների մէջ:

ՄՈՐԻԻ (պէօյիւրթէն) ԶՐՈՎ.

154,

ԶՀ հասած լաւ կարմիր մորին հաւաքել տնւր, լուա և վերոյ գրեալ հոնինման խաշէ և միենոյն նմանութեամբն 'ի գործ գիր:

ՎԱՅՐԵՆԻ ՄՈՌ ԿԱՄ ՍՄԱՂԻ (ամպերպարիսպ) ԶԲՈՎ.

155.

Այլբենի սմաղն այնէ, որ կ. Պօլիս պարտէզներում գտնուած պատուաստածի նման թանկագին չէ • այս վայրենի տեսակը համարեա թէ ամէն տեղ սարերումը կճարուի, վասնորոյ արժանագին է և մեղրով շինելու յարմար • այս ևս միենոյն հոնի նմանութեամբն լուա՛, խաշէ, ջուրը առ, պարզնցրու և 'ի դործ զիր մեղրը պարզելով:

ՍԵՐԿԵՒԻԼԻ (կոմշի, հայվա) ԶԲՈՎ.

156.

Աերկեիլները մեծ մեծ կտրտէ և միջէ կորիզն ու չաստ միսը հանէ, կոտորածը ածա սառն ջրի մէջ, որ չի սեանայ. ապա սլդնձի մէջ փոքր ջուր ածա, զիր կը բակին, երբ կոկսի եփէլ, սերկեիլները հանէ սառը ջըրէց, ածա եփման ջրի մէջ ու աեղադար ճնշելով խառնէ, մինչեւ լաւ փափկանայ ու իւր ջուրը թողնէ : ապա ետ առ կրակիցը և երկու անդամ քամէ, միայն կտաւը աւելի չաղմելով, որպէս զի իւր թանձը նիւթը կտաւից չի անցնի. ապա թէղ պարզի, պարզելուց յետոյ ինչպէս զրուածէ բալի և հանի ջրերով ժիլեյի շինկը, միենոյն կերպովն էլ այս շինէ . միայն սորա մէջը անպատճառ լիմոնի ջուր կամ լիմոնի աղով թթու դնելու է, որ զոյնն մուզ, այսինքն սևնագոյն չինի:

ՎԵՐՋԱԲԱՆ

Աւարտելով այս մեր քաղցրաւենիք շինելոյ արհես-
 տի գիրքը, սրանով մենք չենք կարող ասել թէ բոլորո-
 վին այս արհեստի կատարելութեանը հասանք. վասն զի
 ինչպէս շատ տեղ գրել ենք, զանազան տեսակ մրգեղեններ
 կան զանազան տեղերում, որ դեռ ևս շտաբին չէ յայտ-
 նի, ուստի և անկարելի է աշխարհում գտնուած ամէն
 տեսակ քաղցրաւենիքն ևս ամփոփել մի գրքի մէջ. այլ
 կարող ենք համարձակ ասել, թէ մենք այս արհեստը
 մեծ մասամբ նմանացրել ենք Եւրոպացւոց քաղցրաւե-
 նեացը, օրով յուսամք, որ ախործելի ու հաճոյական լինի
 մեր ազգի բանասիրացը: Ասկայն կը մնայ մեզ մի քանի խօսք
 ասել մեր գրքի վերայ. այսինքն թէ քաղցրաւենի շե-
 նողը պէտք է ամենայն ու շադրութեամբ կարդայ այս
 գիրքը և նաև իր մոքումը տպաւորէ ամէն մի կանոնը. ա-
 պա սկսի ձեռն՝ ՚ի գործ լինիլ. ինչպէս թանձրաչափնե-
 րի բաւականութիւնը, որ բաժանել ենք հինգ, որ պէտք
 է ամենամեծ հմտութիւն գիտելոյ եփի ժամանակը և
 վերցնելու միջոցը, որոնցից կախեալէ քաղցրաւենու լա-
 ւութիւնը և վատութիւնը, նորա երկարատեսութիւնը և
 թթուութիւնը, որ լաւ գիտելու համար, ինչպէս գրել
 ենք իւրեանց տեղումը, նոյնպէս և այս տեղ ասում ենք,
 լաւ է որ հետեւին առաջին կերպ փորձառութեանը
 այսինքն զրգալով կամ ջրի մէջ փորձելով, վերջին ըստ
 Եւրոպացւոց կարգի քաղցրաւենիքը և այն վերջիւ-

նը շինելու համար մեծ փորձառութիւն է հարկաւոր ,
ուստի մինչեւ մէկը մի քանի անգամ վերի քաղցրաւենիքը
չինի շինած , այս Եւրոպացւոց ձեւովն մեծ գժուարու-
թիւն կը լինի , որոյ համար խորհուրդ ենք տալիս նախ մի
քանի անգամ շինել միւս քաղցրաւենիքը , ապա վարժուե-
լով առաջինների մէջ ձեռնարկել այն տեսակը :

Այսնպէս շատ մեծ զգուշութեամբ պէտք է կար-
դալ այն քաղցրաւենեաց պակաս գրուածը , որ նման լի-
նելով մէկ տեսակին . խորհուրդ ենք տուել կարդալ միւ-
սում , զորօրինակ ասել ենք այս ինչ քաղցրաւենիի հա-
մար տես վարդի , հաղարձի վերայ և այնու Ահա այս մի
քանի հետեւողութիւնները լաւ պահապանող յու-
սամք , որ կարող է առանց գժուարութեան շինել ցան-
կացած քաղցրաւենիքը և գոհ լինիլ գրքիցը :

Ի վերջոյ առանց ոչինչ բան ինայելոյ , ըստ մեր կա-
րողութեանը ընծայելով սիրելի ազգիս այս փոքրիկ աշ-
խատասիրութիւնը , յուսամք որ ախորժելի կը լինի շա-
տերին , որ եթէ գտանի ընդունելութիւն , խոստանամք
շարունակել մեր միւս տնտեսական գիտելեաց արհետները
առանձին հատորներում պարունակելով . որք են Ա . այս զր-
քոյկը Բ . զանազան տեսակ օշարակներ և լեկոռներ (իքսեր)
շինելու վերայ , Գ . զանազան շաքարեղենների և զանազան
քաղցրեղէն ուտելեաց վերայ ըստ ոովորութեան այլ և
այլ տեղեաց . Դ . Հայաստանի և Թուրքաստանի բազմատե-
սակ խմորեղինաց և կերակրոց . Ե . Եւրոպական կերակրե-
ղինաց և խմորեղինաց վերայ . և Զ . հարկաւոր անտեսա-
կանութեան ուսանելիք :



ՅԱՆԿ

Երես

Յառաջաբանութիւն	3
Նաքար պարզելու կամ մաքրելու կերպը	5
Մեղք պարզելու կերպը	6
Մեղքի ունեցած հոտը կարելու կերպը	7
Գիտելիք և խրատ ընդհանուր քաղցրաւենեաց համար	8
Նաքարի թանձրաչափների եղանակը	11
Ա. պարզեալ թանձրաչափ	11
Բ. մարգարտաձև թանձրաչափ	12
Գ. քամու թանձրաչափը	12
Դ. գրչե թանձրաչափ	13
Ե. կոտորած թանձրաչափ	13
Քննութիւն և տեղեկութիւն շաքարի վերայ . .	15
Թէ որ տեսակ շաքարն աւելի ուժով և լաւ է . .	18
Թէ ի՞նչ յատկութիւն ունի քաղցրաւենին և ի՞նչպէս պէտք է ճանաչել շատ գիմացական կամ չգիմացով քաղցրաւենին	19
Վարդի վերայ տեղեկութիւն	22
ԳԼ. Ա. առաջին թանձրաչափի վերայ	
1. Վարդով քաղցրաւենի	23
2. Ա. իմն տեսակ շատ բաց գոյնով վարդէ .	26
3. Մանուշակի ծաղկով քաղցրաւենի	27
4. Վարդ և մանուշակի խաւն քաղցրաւենիք .	28
5. Լիմոնի կամ նարինծի կամ ապելսինի թարմ ծաղկով	29
6. Քաղցր նշի ծաղկով	30
7. Լաւ ծիրանի ծողկով	31
8. Մեխակի ծաղկով	31

9.	Սպիտակ Զամպախի ծաղկով	52
10.	Յասլիկի ծաղկով	52
	Տեղեկութիւն ծաղկեղէն քաղցրաւենեաց վերայ	52
11.	Բ. Երկրորդ թանձրաչափի վերայ	
11.	Մալինայով	55
12.	Ելակով	54
13.	Վայրենի ելակով	54
14.	Անանաս կոչեցեալ պաղով	54
15.	Մանր և խակ նուշից	55
16.	Սպիտակ կեռասով	56
17.	Կիտրոնով	56
18.	Փորթոքալի կճեպով	58
19.	Նարինջի կեղևով	58
20.	Քեպաթ լիմոնով	58
21.	Տանձաձև լիմոնով	59
22.	Մանր խնձորով	40
23.	Մանր և կարմիր անկուտ չամչով	41
24.	Ծիրանի լաւ չըռով	42
25.	Մանր չամփչո, չիրը և Դամասկոսի փատան իրար հետ խառն քաղցրաւենի	45
26.	Կոճով	45
27.	Շատ մանր խակ կանաչ լիմոնով Հատուած սրաջըի քաղցրաւենիք	44
28.	Մանր և խակ թզով	45
29.	Խակ և մանր ընկուզով	46
30.	Զմերուկի կեղևով	47
31.	Դդումով	47
32.	Մանր պորինձանով	48
33.	Մանր խիարով	48

54.	Զնծաղիկով	49
55.	Կանկառով	49
56.	Ենիմնարի եղեղով	50
	Գլուխ Գ. երբորդ քամիոտ թանձրաչափի վերայ	
57.	Հաղարձով	15
58.	Կարսիր և կանաչ հաղարձու ՚ի միասին	52
59.	Կանաչ հաղարձով	55
40.	Դամասկոսի Խաղողով	55
41.	Բալրվ	55
42.	Անկորիզ աղոխով	54
43.	Սմաղով	54
44.	Հոնով	55
45.	Մորիով	55
46.	Սեաւ հասած մորիով	56
47.	Կետրոնի թթուով	56
48.	Փորթոքալի մսովն	57
49.	Կիտրոնի միջով	57
50.	Նարինջի միջով	58
51.	Լոլ զեղձով	58
52.	Սերկելիով	59
53.	Խշխունով	60
	Գլ. Գ. գրչե թանձրաչափի վերայ եղեաւ ժիշեյի կամ լողապ քաղցրաւենիք	
54.	Հաղարձի ջրով	61
55.	Սալինայի ջրով	65
56.	Ելակի ջրով	65
57.	Վայրենի ելակի ջրով	64
88.	Հաղարձի և մալինայի խառն ջրով	65

39.	Ելակի և վայրենի ելակի ջըերովն	65
60.	Ելակի, հաղարձի և մալինայի խառն ջըերով	65
61.	Բալի ջըով	66
62.	Ազոխի ջըով	67
63.	Սմաղի ջըով	67
64.	Փորթոքալի ջըով	68
65.	Մեծ նորոգ ծիրանով	69
66.	Հոնի ջըով	70
67.	Սերկի իլի ջըով	70
68.	Կարմիր մորիկի ջըով	71
69.	Հաղարձի գոյնին նմացրած ժիլէյ	71
70.	Դեղին գոյնով Փորթոքալի նմանեալ	73
71.	Կանաչ գոյնով դաղձի իւղով	74
72.	Սպիտակ գոյն ունեցող ժիլէյի	75
73.	Ռսկէզօծ ժիլէյի	75
	Գլուխ Ե. Հինգերորդ թանձրաչափի վերայ չէվերմէ կամ պոմագայ	
74.	Վարդով պօմագայ	79
75.	Մանուշակի ջըով	82
76.	Ցամիկ ծաղկի ջըով	82
77.	Լիմոնի ծաղկի ջըով	83
78.	Կակլի ծաղկի ջըով	83
79.	Պատրինձի տերեւով	84
80.	Դաբնի տերեւով	84
81.	Մալինայի ջըով	84
82.	Ելակի ջըով	85
83.	Վայրենի ելակի ջըով	85
84.	Սմաղի ջըով	86
85.	Փորթոքալի ջըով	86

86.	Թարմ ծիրանով	87
87.	Վանելեայով	87
88.	Զոր մեխակով	88
89.	Կինամոնով	89
90.	Խոսրովադեղ կամ հաւլիճան արմատով	89
91.	Բոխնի կամ հրեշտակաբոյսի արմատով	89
92.	Անդեղեգով	89
93.	Մուշքով	90
94.	Ամպերով	90
95.	Հիլով	91
96.	Տաք կոճով	91
97.	Պերղամօթ կոչեցեալ լիմոնի կՃեպովն	92
98.	Լիմոնի կՃեպով	93
99.	Լիմոնի կՃեպով մէջը թթու	94
100.	Քաղցր լիմոնի կեղեռով	94
101.	Փորթոքալի կեղեռով	94
102.	Նարինջի կեղեռով	94
103.	Կիտրոնի կեղեռով	95
104.	Անանուխի իւղով	95
105.	Դառն նշով	96
106.	Մաստաքով	96
107.	Սուրջով	97
108.	Զոկոլաթով	98
109.	Որդան կարմրով վարդի իւղի հոտով	98
	Գլուխ զ. խառն թանձրաչափներով .	
110.	Նորոգ ծիրանովըստ Եւրոպացւոց	100
111.	Գեղձով	101
112.	Այնապախան երիկիով	101
113.	Ելորով	101

114.	Սեծ և հասած նոր լիմոնով	101
115.	Փորթոքալով	103
116.	Նարինձով	103
117.	Սերկեւիլով	103
118.	Կանաչ ընկցյզվ	105
119.	Գեղձով արաղի ոգիով Հատուած Ա . . .	108
120.	Ծիրանով ևս արաղ մէջն	109
121.	Տանձ ոգիով	110
122.	Կեռաս ոգիով	111
123.	Մորի ոգիով	112
124.	Հաղարձ ոգիով	112
125.	Դամասկոսի խաղող կամ մաշկամիրդ ոգիով	112
126.	Աղսիսով	115
127.	Նարինջով	114
128.	Փորթոքալի կեղեռով	115
129.	Լիմնի, նարինջի և փորթոքալի կեղեռներովն	115
130.	Ընկցյզով	115
131.	Հաղարձի ջրով . . Հատուած Բ	117
132.	Մորի և հաղարձի, խառն ջրերովն	118
133.	Չորս պտուղներից բաղադրեալ	118
134.	Չոքոլաթայով	119
135.	Կեռասով	119
136.	Գլ. է. մեղրով քաղցրաւենիք 16 տեսակ և ժիշեյի 5 տեսակ 120 երեսիցն սկսեալ մինչև 128 երեսն	120—128:





4986, 4987, 4988

4986, 4987, 4988

ՀՀ Ազգային գրադարան



NL0023466

0023466

0023465

0023464

0023463

ՀՀ Ազգային գրադարան



NL0023465

ՀՀ Ազգային գրադարան



NL0023464

ՀՀ Ազգային գրադարան



NL0023463

ՀՀ Ազգային գրադարան

2010

7-47

